

ЦЕНТРАЛЬНЫЙ ГОСУДАРСТВЕННЫЙ АРХИВ АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА АН АРМЯНСКОЙ ССР

МИКАЕЛ НАЛБАНДЯН

СБОРНИК ДОКУМЕНТОВ

Подготовка текста, редакция и примечания
А. ИНДЖИКЯНА и Г. АРУТЮНЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
ՀՍՍՐ ԳՍ. Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

8(092)
6-19

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տեխնոլոգիայի, խմբագրչիցի և ծանոթագրչիցի
Ս. ԻՆՃԻԿՅԱՆԸ և Գ. ԱՐՄԻՅԱՆԻՆԻՑԻՆԸ

18642

1596



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆ 1956



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

15981



Մ. ՆԱԼԲԱՆԳՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայ մեծ սեռային-գեմոկրատ Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա դրվեց Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո. սովետական գիտնականների, հատկապես՝ Երվ. Շահաղիզի, Աշ. Հովհաննիսյանի, Արտ. Կարինյանի և ուրիշների ջանքերով հայտնաբերվեցին և հրատարակվեցին Նալբանդյանի անհայտ երկերն ու նամակները, ինչպես նաև նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող բազմաթիվ կարևոր վավերագրեր, իրականացվեց Նալբանդյանի երկերի ակադեմիական հրատարակությունը չորս հատորով. հրատարակվեցին բազմաթիվ ուսումնասիրություններ նվիրված Հայ մեծ հրապարակախոսի և գրողի գործունեության տարբեր բնագավառներին, լույս տեսան նրա կյանքի և գործունեության «Տարեգրությունը» և մի քանի մենագրություններ:

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ չնայած կատարված հսկայական աշխատանքին, դեռևս Նալբանդյանի կյանքի և գործունեության որոշ շրջաններ և առանձին հարցեր հարկ եղած չափով չեն լուսաբանված՝ արխիվային վավերագրերի պակասության հետևանքով: Մինչև այժմ արխիվային նոր վավերագրեր հայտաբերելու աշխատանքը չի կրել սիստեմատիկ և կազմակերպված բնույթ: Առանձին բանասերների հայտաբերած վավերագրերը հրապարակվել են պարբերական մամուլում և, մասամբ կամ ամբողջովին, օգտագործվել նրանց ուսումնասիրություններում: Այսպիսով՝ ա) Նալբանդյանի կյանքին և գործունեությանը վերաբերող կարևոր նշանակություն ունեցող շատ վավերագրեր մնացել են զանազան արխիվներում, բ) հայտնաբերված վավերագրերը, համարյա ամբողջովին, ցրված են տարբեր պարբերական հրատարակություններում և ժողովածուներում, գ) վավերագրերի մի զգալի մասն էլ, քաղվածաբար օգտագործված լինելով այս կամ այն ուսումնասիրություններում, չի

հրապարակված ամբողջութեամբ: Ահա թե ինչո՞ւ Նալբանդյանին վերաբերող կարևորագույն վավերագրերի հրապարակումը մի ժողովածուի մեջ անհրաժեշտութեամբ է ներկայացնում՝ հայ մեծ ուսուցիչներ-դեմոկրատի կյանքի և գործունեության բաղձնակողմանի և խորն ուսումնասիրության տեսակետից:

Սույն ժողովածուն պարունակում է՝ ա) հիմնականում մինչև այժմ անհայտ վավերագրերը, բ) քաղվածաբար օգտագործված կամ սուկ հիշատակված վավերագրերը և դ) տարբեր պարբերականներում ցրված վավերագրերից մի քանի կարևորագույնները:

Ժողովածուի մեջ վավերագրերը խմբավորված են ժամանակագրական կարգով, հետևյալ բաժիններում՝ ա) Նալբանդյանի կյանքի առաջին տարիները, բ) Նալբանդյանը Մոսկվայում (1853—1857), գ) «Հյուսիսսիբիրի» շրջան, դ) Հնդկահայ կտակների գործը, ե) Նալբանդյանի բանտարկությունը, դատավարությունը և աքսորը, զ) Նալբանդյանի մահը և հանդիսավոր թաղումը, է) Նալբանդյանը և ցարական գրաքննությունը, ը) Հավելված:

Ժամանակագրական սկզբունքից շեղվել ենք բացառիկ դեպքերում, հատկապես «Նալբանդյանի կյանքի առաջին տարիները» բաժնում, ուր առավել նպատակահարմար ենք գտել վավերագրերը խմբավորել ըստ նրանց բովանդակության և տրամաբանական կապի:

Նկատի ունենալով Նալբանդյանի սերտ կապը «Հյուսիսսիբիրի» հետ, նրա ակտիվ գործունեությունը ամսագրի հրատարակության հենց սկզբից, հրատարակության թույլտվություն ստանալու համար Նազարյանի հետ համատեղ գործադրած ջանքերը, նրա բեղմնավոր աշխատակցությունը մինչև արտասահման մեկնելը — ձգտել ենք, որքան հնարավոր է, բաղձնակողմանի կերպով ներկայացնել Նալբանդյանի գործունեության այդ շրջանը: Ներկայացված վավերագրերը ուղղակի, թե անուղղակի՝ կապված են Նալբանդյանի հետ: Սույնը պետք է ասել նաև «Հնդկահայ կտակների գործը» բաժնի վավերագրերի մասին: Այս բաժնում զետեղված վավերագրերը լույս են սփռում ոչ միայն կտակների գործի հանգամանքների վրա, այլև ցույց են տալիս ցարական կառավարության հետին նպատակները, այն է՝ Նոր-Նախիջևանին տրված արտոնությունները հետ վերցնելու և նրան ամբողջովին ենթարկելու Ռոստովի վարչական իշխանություններին: Այսպիսով, հիշյալ վավերագրերը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն Նալբանդյանի կյանքի, այլև միաժամանակ Նոր-Նախիջևանի պատմության համար ընդհանրապես:

Մանոթագրություններում տրված են անհրաժեշտ բացատրություններ վավերագրերի վերաբերյալ, ինչպես և լրացուցիչ տեղեկություններ տվյալ վավերագրերում արժարժվող խնդիրների մասին: Վավերագրերը ծանոթագրված են կամ առանձին-առանձին և կամ մի քանիսը միասին՝ ըստ նրանց բովանդակության:

Մանոթագրություններում նշված է, թե ո՞ր վավերագիրը, հատվածաբար կամ ամբողջովին, երբ և որտեղ է տպագրվել:

Ժողովածուի վավերագրերը վերցված են Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվի, Մոսկվայի և Լենինգրադի Պետական կենտրոնական և մարզային արխիվների ֆոնդերից, մասամբ նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի և Մատենադարանի նյութերից: Վավերագրերի տեքստերը հիմնականում պատրաստված են ինչպես բնագրերի, այնպես էլ վերջիններիս ֆոտոպատճենների, մասամբ նաև՝ ստուգված մեքենագիր պատճենների հիման վրա:

Վավերագրերը տպագրության պատրաստելիս ղեկավարվել ենք ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի, Արխիվային գլխավոր վարչության և Պատմա-արխիվային ինստիտուտի մշակած «Վավերագրերի հրատարակման կանոնների» նախագծում սուղարկված սկզբունքներով:

Որպես կանոն, վավերագրերը տպագրված են ամբողջովին, բացառությամբ մի քանիսի, որոնք, ելնելով նպատակահարմարությունից, տվել ենք քաղվածաբար:

Վավերագրերում տեղ գտած վրիպումներն ու բացահայտ սխալներն ուղղել ենք, ինչպես և բաց ենք արել հապավումները, ամեն կերպ ձգտելով պահպանել վավերագրերն անաղարտ, իրենց բոլոր առանձնահատկություններով:

Պարզ է, ինքնին, որ ներկա ժողովածուն չի ընդգրկում, և չէր էլ կարող ընդգրկել, Նալբանդյանին վերաբերյալ զանազան արխիվներում գոյություն ունեցող բոլոր վավերագրերը: Դեռևս շատ անելիքներ կան հայ մեծ ուսուցիչներ-դեմոկրատի կյանքին և գործունեությանը վերաբերող նոր վավերագրեր հայտաբերելու և հրատարակելու ուղղությամբ:

* Մատենադարանից վերցրած №№ 8, 15, 16, 24, 27 և 84 վավերագրերը տպագրության է պատրաստել Ավետիք Ազամյանը:

1.

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ



1. 1846 ր. մարտի 27

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐԱԲԱՐ ՇԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի վերանալ աստուածային տեսեան, զոր ի տաճարէ փառաց սրբութեան իւրոյ խոնարհեալ հոտոտեցաւ ի պատարագն Նոյի, Նոյ ձեռն ի գործ արկեալ զորթս, և զայգիս, տնկել աճապարէր, այլ մինչ զմտաւ ածէր զբնաջինջ լինելն մարդկային ազգի, ի սուգ և ի թախիծ համակէր: Իսկ նորազուարճ բնութիւնն բռնագատէր զՆոյ զբնակարանս շինել, այլ Նոյ ի՞ւ իւր կարէր զհիւզս կառուցանել՝ ո՛չ առձեռն պատրաստ գտանէին նիւթ շինութեան, վասն որոյ նախ քան զբուսուցանել երկրի զծառս, հարկ ի վերայ նոցա մնար թաղչիլ յերեսաց տապոյ արեգին, ի ծերպս վիմաց և ի խոռչացեալ ծակտիս երկրի: Յետ ելանելոյ ի տապանէն՝ ուր զառաջինն իջեանեցան, անուանեաց Նոյ՝ Նախիջեան (այսինքն՝ նախնեաց իջեան կամ նախկին իջեան): Ընդ հովանեօք թփոց մնայր նոցա օթագայիլ յառաջ քան զգտանել տեղի ինչ պատշաճաւոր կեցութեան:

Աւանդութիւն է առ հարս՝ թէ Նոյ յետ բաժանելոյ զորդիս իւր յիրերաց և յետ տալոյ իւրաքանչիւրոց զխրճիթս, մեկուսացեալ յընտանեաց իւրոց ըստ վերին նախասահմանութեան զնաց յԵրուս որ և անուանեաց Սաղիմ, այն է Եդեմ և զկառափ Աղամայ և զոսկերս իսկ գլխովին առեալ էր ընդ իւր ի տապանն, տարեալ թաղեաց ի բլրի տրեք յարեմտից դէմի, զոր ըստ այնմ և անուն տեղւոյն կոչեցաւ Գողգոթայ այսինքն տեղի կառափոյ կամ գագաթան, ուր յետ ժամանակաց հրէայք զմահապարտս ի բլրի անդ գլխատէին. վասնորոյ և կոչեցաւ անուն բլրին տեղի կառափելոյ, այսինքն տեղի գլխատման: Եւ ինքն Նոյ եկաց մինչև ցժամանակս Աբրահամու որ և ել ընդ առաջ Աբրահամու մինչ դառնայր ի կոտորածէն, պատարագաւ, հացիւ և գինեաւ, զնոր օրինացն գլխնոր մարգարէաբար կատարելով. թէպէտ ի սուրբ գիրս զայնմանէ ընդհանրապէս ոչ գրի,

ամենեցուն քարոզէ թէ ճարտասանութիւն չէ արհեստ, այլ քան զամենայն ուսմունս գեր ի վերոյ դասէ զպարզագրութիւն իւր, յիրաւի և վայելչագրութիւն չէ պարսաւելի, այլ ևս շունիմ կարողութիւն: Զշարագրութիւնս իմ զորս տարեալ ևմ առ նա և զոր պատուելին այն վարժապետ բարդեալ է ի վերա իւրաքանչիւրոց զանյարմար բարութանս գտանին առ իս, կառավարութիւնդ կարլ առնուլ յինէն զայնոսիկ և զննել, թէ ո՞րպիսի է՝ շարագրութիւնն և ո՞րպիսի է սրբագրութիւն. նա զքանին շարագրութեանց իմոց թիւրեալ է և ևս կարեմ հաստատել որպէս և զայս շարագրութիւն յորում գրեալ էի թէ կարծիք է վասն Նոյի թէ իցէ Մելքիսեղեկ, նա զայս բան հաստատեաց ստորագրութեամբ իւրով, թէ Ոսկերեանն գրէ ի ճեռագիր մատենի. ամենախոնարհաբար խնդրեմ ի հոգևոր կառավարութեանէդ զի յիշեալ վարժապետն ցուցցէ զճեռագիր մատենան իւր, գուցէ գտցի ի նմին մատենի և այլ հաստատութիւնք այսպիսի կարծեաց: Ես ըստ ամենայնի համբերեալ երթայի առ նա զանազան շարագրութեամբ, զմինն ի շարագրութեանց իմոց զոր տարեալ էի ի սրբազրել, էառ զայն և բազում նախատանօք, արհամարհեաց զիս, ուր յայնմ միջոցի գոյր անդ և արժանապատիւ Կարապետ քահանայն Չոլախեանց: Խոնարհաբար խնդրեմ պահանջել ի նմանէ զայն և քննել թէ զի՞նչ արդեօք ընդդիմութիւնք գտանին ի նմին շարագրութեան վասն որոյ նախատեացն զիս: Եւ իմ տեսեալ զայսոսիկ յետս կասեցայ ի նմանէ, իսկ այժմ կառավարութիւնդ զոր ինչ և վասն այլոց տնօրինեսցէ զնոյն և ևս ունիմ կատարել:

Ամենախոնարհ ծառայ Միքայէլ Ղազարեան Դարբինեանց

1847, ի 26 մայիսի, ի Նախիջևան

Հայկական ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ-ֆոնդ № 54, գործ № 2192, թերթ 11:

3. 1850 թ. հունվարի 4

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԲԵՍԱՐԱՔԻԱՅԻ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ ԳՈՐԾԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրաման նորին կայսերական մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց ի լուսավորչական հայոց վիճակային կոնսիստորիայէ նոր-Նախիջևանայ և Բեսարաբիոյ, հոգևոր կառավարութեան հայոց ի նոր-Նախիջևան: Ըստ հրամանի նորին կայսերական մեծութեան

ի սոյն ատենիս լուան զյայտարարութիւն հոգևոր կառավարութեանդ Նախիջևանայ ի 16-էն անցեալ ղեկտեմբերի, համարաւ 753, թէ ի նմին կառավարութեանդ լուան զմիաւորական գրութիւն տեղւոյն քաղաքական գլխոյ ազնիւ աղայ Խալիպովին, զգրեալն ի 1-էն նոյն ամսոյ, ընդ համարաւ 206, յորում գրեալ է, թէ՛ նորին վեհափառութիւն սրբազնասուրբ կաթողիկոսն ամենայն հայոց, ընդ կոնդակի իւրում յ2-էն սեպտեմբերի նոյն ամի, համարաւ 218, առաքելով առ ինքն զօրինակն գրութեանց զրագրի կառավարութեանդ Եղիա սարկաւազ Շարշնիկեանի և Միքայէլ զպրի Ղազարեան Ուստայեանց, հրամայեալ է նմա ընդ քաղաքական հոգաբարձուաց պահանջեալ ի կառավարութեանէդ զմի ոմն ղեպուտատ քահանայ և նորուն ներկայութեամբ առնել քննութիւն վասն գրելոցն ի նոցանէ և զօրինակ քննութեանն ստորագրութեամբ նոցին առաքել առ նորին վեհափառութիւն, ի հետևումն որոյ, խոնարհաբար խնդրէ ի կառավարութեանէդ՝ նախ նշանակել զմի ոմն ղեպուտատ քահանայ յաղագս ներկայ գտանելոյ ի ժամանակի քննութեան յանձն եղեալ նոցա գործոյ, որ վասն գրութեանց Եղիա սարկաւազ Շարշնիկեանի և Միքայէլ զպրի Ուստայեանի, և զանուանէ նշանակեալ քահանային ծանուցանել նմա անյապաղ ժամանակի, և երկրորդ, որպէս երևի, զի Միքայէլ զպրին շատանի այժմս ի քաղաքի, ապա վասն ներկայ գտանելոյ նորին ի քննութեան ժամանակին առնել զպատկանեալ կարգատրութիւն. զորմէ հոգևոր կառավարութիւնդ ծանուցեալ ատենիս խնդրէ զլուծումն, թէ զի՞նչ պարտ իցէ առնել նմա որպէս վասն ղեպուտատին, նոյնպէս և վասն Միքայէլ զպրին Ղազարեան, որ ոչ գտանի այժմ անդ ի քաղաքի, և զտեղեկութիւնս ի գործոց ատենին: Հրամայեցին՝ հրամանագրել հոգևոր կառավարութեանդ Նախիջևանայ՝ կատարել զպահանջ քաղաքական գլխոյ ազնուական աղայ Խալիպովի, զհիմնեցեալն ի վերայ կոնդակի նորուն վեհափառութեան սրբազանագոյն կաթողիկոսի ամենայն հայոց, նշանակելով զմի ոմն ի քահանայից ղեպուտատ. յորում և պատուիրել, զի ընդ աւարտելն զգործն քննութեան, զօրինակն այնմ գործոյ բուն նշանակութեամբ մատուցի ատենիս ի ձեռն դոյն կառավարութեանդ, վասն ունելոյ ի գործս սորին, իսկ յաղագս Միքայէլ զպրին Ղազարեան Ուստայեանց, որովհետև հոգևոր կառավարութիւնդ յիւրումն յայտարարութեան չէ նշանակել, թէ ուր գտանի նոյն զպրին և որով պաշտօնատարութեամբ հեռացեալ է ի քաղաքէդ անտի, յայն սակս կոնսիստորիայս յաղագս ներկայ ածելոյ զնա, ի ժամ քննութեան չկարէ առնել զտնօրէնութիւն ինչ, զայս-

պիսի տնօրէնութենէ ատենիս ծանուցանել վասն տեղեկութեան և նորին բարձու սրբազնութեան յայտարարութեամբ:

Անդամ կոնսիստորիայի Աւետիս Բահաւայ Տէր-Աւետիսեան Ատենադպիր՝ Յոհաննէսեան

Հայկական ՍՍԹ Պետական կենտրոնական արտիվ, ֆոնդ № 54, գործ № 681, թերթ 8:

4. 1850 թ. մարտի 15

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆՔ ԲԱՂԱՔԱԳՂՈՒԽ ԽԱՂԻԹՅԱՆԻ ՊԱՀԱՆՋՐ ՄԵՐԹԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Լուան դմիատրական գրութիւն տեղւոյս քաղաքական գլուխ աղայ Յարութիւնի Խալիպեանց, ի 11 ամսոյս մարտի, համարաւ 47, յորում գրէ այսպէս. «Կառավարութիւնդ հաղորդագրութեամբ իւրով յ9-էն մարտի համար 170, ըստ հրամանագրութեան վիճակային կոնսիստորիային՝ խնդրէ՛ հասուցանել ի նոյն զօրինակն կոնդակի նորին վեհափառութեան առ իս, ի 1-էն դեկտեմբերի 1849 ամի, ըստ մասին քննութեան գրութեան Եղիա սարկաւազի Շաբշնիկեան և Միքայէլ դպրի: Այլ որովհետեւ ի կոնդակէ նորին վեհափառութեան, որով հրամայեալ է ինձ քննել զվերոհիշեալ գործն, ո՛չ երևի, թէ վիճակային կոնսիստորիայն ունի պահանջել յինէն զօրինակն այնօրիկ, որպէս այժմ երևի ի հաղորդագրութենէ կառավարութեանդ: Վասն այն, ես մինչ շուննն իմ զճիշտ օրինակն ի հրովարտակէ վիճակային կոնսիստորիային, ո՛չ կարեմ կատարել զներկայ պահանջողութիւն կառավարութեանդ, ուստի բարեհաճեսցի կառավարութիւնդ հաղորդել ինձ զճիշտ օրինակն ի յիշեալ հրովարտակէ վիճակային կոնսիստորիային, զոր և մեր ընկալեալ կատարեցից ապա զպահանջեալն հոգևոր կառավարութեանդ»: Եւ երկրորդ գտեղեկութիւնս ի գործոց ատենիս, յորոց ի յայտ գան, առաջինն՝ նորին ազնուականութիւն արգոյ քաղաքական գլուխս ի 1 դեկտեմբերի անցեալ 1849 ամի, համար 206, գրեալ ունէր առ կառավարութիւնս այսպէս. «Նորին վեհափառութիւն սրբազնասուրբ կաթողիկոսն ամենայն հայոց ըստ կոնդակի իւրում յ2-էն սեպտեմբերի ներկայ ամի, համարաւ 218, առաքելով առ մեզ զօրինակս գրութեանց ատենադպրի կառավարութեանդ Եղիա սարկաւազ Շաբշնիկեանի և

Միքայէլ դպրի Ղազարեան Ուստայեանց, հրամայէ մեզ ընդ քաղաքական հոգարարձուաց պահանջեալ ի կառավարութենէդ զմի ոմն դեպուտատ քահանայ և նորուն ներկայութեամբ առնել քննութիւն վասն գրելոցն ի նոցանէ և զօրինակ քննութեան ստորագրութեամբ մերով առաքել առ նորին վեհափառութիւնն. ի հետևումն որոյ, խոնարհարար խնդրեմ ի կառավարութենէդ, նախ՝ նշանակել զմի ոմն դեպուտատ քահանայ յաղագս ներկայ գտանելոյ ի ժամանակի քննութեան յանձն եղեալ մեզ գործոյ, որ վասն գրութեանց Եղիա սարկաւազի Շաբշնիկեան և Միքայէլ դպրի Ուստայեան, և զանուանէ նշանակեալ քահանային ծանուցանել մեզ յանյապաղ ժամանակի, և երկրորդ՝ որպէս երևի զի Միքայէլ դպիրն Ուստայեան չգտանի այժմս ի քաղաքիս, ապա վասն ներկայ գտանելոյ նորին ի քննութիւն, ժամանակին առնել զպատկանեալ զիւրն կարգագրութիւնս: Յորմէ յայտնի լինի, թէ նորին վեհափառութիւնն իբր յանձնեալ իցէ նմա ի 12-էն սեպտեմբերի 1849 ամի, համար 218 կոնդակաւ զօրինակս գրութեանց վասն քննելոյ, իսկ վերջին միատրականաւ նորին ազնուականութիւնն ասէ, թէ՛ կոնդակն այն գրեցեալ իցէ 1-էն դեկտեմբերի 1849 ամի, առանց զնելոյ զհամարն, ուստի, նթէ՛ անհամեմատութիւն երկոցունց ընդ իրեարս, զի վերջինն է անհամեմայն առաջնոյն ո՛չ ամսաթուովն և ո՛չ համարաթուովն: Երկրորդն. որովհետեւ նորին ազնուականութիւնն ըստ ներկայ պահանջման կառավարութեանս առ նա յ9-էն ամսոյս, համար 175, ո՛չ ետ զպատճէն կոնդակի նորուն վեհափառութեան, յոր պարտ էր կառավարութիւնս հիմնիլ և ունիլ ի հրահանգութիւն իւր և պաշտել ըստ գրեցելոյն, ոյր սակս հրամայեցին՝ զներկայ պահանջողութիւն քաղաքական գլուխ Խալիպովին վասն տալոյ նմա զճիշտ օրինակ հրովարտակի կոնսիստորիային և վասն տալոյ նմա զդեպուտատ յաղագս քննելոյ զօրինակս գրութեանց, թողուլ անգործ առանց կատարման, մինչև ո՛չ հանդիման արասցէ զիսկական կոնդակն նորին վեհափառութեան, հետևեցուցին՝ վասն սոյն իսկ առարկայի ընդ նմին և յայտնել նորին ազնուականութեան, զի ամենայն ինչ՝ կոնդակ և հրամանագրութիւնք նորին վեհափառութեան ընդունելի է ատենիս, մի միայն զի նորին ազնուականութիւնն այսուհետեւ միշտ, երբ և պատահեսցի, առաջի արասցէ կառավարութեանս զիսկական կոնդակս, յայտնելով զամսաթիւն և զհամարն իսկութեամբ, վասն առանց տարակուսութեանց լցուցանելոյ, զի մի՛ լիցի ատենիս շփութութիւն ինչ, գորմէ տալ զիտել հրովարտակաւ երկոցունց՝ Եղիա

սարկաւագին և Միբայէլ դպրին և առանձին յայտարարութեամբ ծանուցանել նորին բարձու սրբազնութեան:

Հայկական ՍՍԹ Պետական կենտրոնական արխիւ,
ֆոնդ № 54, գործ № 681, թերթ 21—22:

5. 1850 թ. մարտի 25

**ԽԱՒԻՅՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընկալայ զմիաւորական գրութիւն կառավարութեանդ ի 17-էն մարտի ներկայ 1850 ամի, համարաւ 204, յորում նախ բառ առ բառ գրելով զմիաւորական գրութիւնս իմ, ի 11-էն ամսոյս, համարաւ 47, և ի 1-էն զեկտեմբերի 1849 ամի, համարաւ 206, կառավարութիւնդ այդ փոխանակ բառ առ բառ և անշուշտ կատարելոյ զհրաման նորին վեհափառութեան, պարապի յայլ և այլ անպատկան գրութիւնս, իբր այն, թէ գտեալ իցէ զսխալանս իմ, այսինքն, փոխանակ յերկրորդ միաւորականի իմում յ2-էն սեպտեմբերի գրելոյ, գրեցեալ է ի 1-էն զեկտեմբերի, որ գրագիրն իմ ունելով առաջի զմիաւորականն իմ, փոխանակ կոնդակին ամսաթիւն դնելոյ, եղեալ է մեր միաւորականի ամսաթիւն: Յայս մասին շէր այնքան արժան, որ հոգևոր կառավարութիւնդ պարապէր ի նմին, և զմեր սխալանս յառաջ դնէր, երբ ատուրք ինչ յառաջ բաւականին և մեր գտեալ էր ի միաւորականի նորին զսխալանս և մեք որպէս մարդ՝ ո՛չ պարապող յոչինչս և կատարող հրամանի յանձնողին, իսկոյն առանց օտարոտի ինչ բանից, յետս առաքեցաք ի կառավարութիւնդ՝ վասն ուղղելոյ, որպէս և ուղղեցան իսկ: Այդպէս կարող էր ուրեմն առնել և կառավարութիւնդ, եթէ կամէր միայն կատարել զամենապաշտելի և սրբազան կամս նորին վեհափառութեան, և ոչ այդպիսի բանի յերես մեր հարկանել և զհրամանս կաթողիկոսին չկատարել: Զի այդպիսի սխալանք պատահին միշտ, որպէս և ինքն իսկ կառավարութիւնդ ի ներկայ միաւորականի իւրում համարաւ 204, արարեալ էր զերկուս սխալանս թուոց, մինն յետ բառ առ բառ գրելոյ զմիաւորական գրութիւնս, յեղրակացութեան իւրում գրէ. «Յորմէ յայտ լինի, թէ նորին վեհափառութիւնն իբր յանձնեալ իցէ ձեզ ի 12-էն սեպտեմբերի 1849, համարաւ 218 կոնդական և այլն». մինչ զեռ ի միաւորականի իմում գրեցեալ է, թէ՛ «ըստ կոնդակի 2-էն սեպտեմ-

բերի, երկրորդն՝ գրէ ի միաւորականի իւրում, թէ՛ որովհետև ես ըստ ներկայ պահանջման կառավարութեանդ ի 9-էն մարտի, համար 175 ոչ ետու զպատճէն, և այլն. համարն միաւորականի կառավարութեանդ յ9-էն մարտի՝ որով պահանջէր զպատճէն կոնդակի՝ 170 էր և ոչ 175, ուրեմն այսպիսի սխալանք միշտ պատահիլ կարեն և երբէք ոչ տան ումեք իրաւունս յետս կալոյ ի կատարելոյ զօրինաւոր պահանջողութիւն ինչ:

Ես չեմ գրեալ ամենևին, թէ շունիմ տալ օրինակ կոնդակին, այլ գրեալ եմ, թէ նախքան զտալն իմ այնք, առաքեսցէ կառավարութիւնդ զօրինակ հրամանագրութեան կոնսիստորիային. յայսմ ամենայնէ յայտնի տեսանի, զի կառավարութիւնդ չկամէր կատարել զսրբազան կամս ծայրագոյն իշխանին իւրոյ, զորմէ կայսեալ կան և կառավարութիւնք և կոնսիստորիայք և որ մեծն է՝ նա ինքն սուրբ սինօզն:

Եւ ի վախճանի, մոռացեալ կառավարութիւնդ զասացեալսն իւր, ի վերոյ գրէ, թէ՛ «ամենայն ինչ կոնդակ և հրամանագրութիւն նորին վեհափառութեան ընդունելի է առեմիս», երբ համարձակեալ գրէ այժմ թողուլ անգործ, առանց կատարման, և մանաւանդ, զայդ կոնդակ անգամն հոգևոր կառավարութեան՝ տէր Պողոս քահանայն ինքնին ականատես եղեալ էր:

Տեսեալ իմ զայդպիսի ընթացմունս հոգևոր կառավարութեանդ ոչ վերարեբեալ առ նպատակն, այլ հետևիլ նորա թողուլ սրբազան հրաման նորին վեհափառութեան անգործ և անկատար, պարտաւոր համարեցայ զամենայն գրութիւնս ըստ այսր առարկայի՝ զօրինակս միաւորականաց կառավարութեանդ առ իս և իմոց առ կառավարութիւնդ, առաքել առ նորին վեհափառութիւնն ի բարեհաճութիւն կամաց նորին:

Քաղաքական գլուխ Խալիպով

Հայկական ՍՍԹ Պետական կենտրոնական արխիւ,
ֆոնդ № 54, գործ № 681, թերթ 25:

6. 1852 թ. հունվարի 8

**ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻՆ ԲՈՒՆԻ ԿԵՐՊՈՎ
ԷԶՄԻԱԾԻՆ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՍԻՆՈՒԻ ԱՏՅԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Սինօզին սրբոյ էջմիածնի ծանուցանեմք, հոգևոր կառավարութիւն հայոց նոր-նախիջեանայ յայտարարութեամբ իւրով յ30 յու-

լիսի յամի 1846 համարաւ 134 առաքեալ էր առ մեզ զիսկական նա-
մակագրութիւնս ատենադարի իւրոյ Եղիա Շարշնիկեանի, յորոց
երևին աններելի անարժանութիւնք նորա ընդդէմ պարտաւորու-
թեանց հոգևորական կառավարութեան, ատենադարութեանց նորա
և ամբարշտութեանց ընդդէմ հոգևորական աստիճանի, նոյնպէս և
գրութիւն Միքայէլ դպրի Ղազարեան Ուստայեանց յաղագս բազմու-
թեանց նախապատիւ անձանց Նոր-Նախիջևանու հասարակութեան,
վասն վարժապետ կարգելոյ մեր զպատուելի Մկրտիչն Եկենեանց և
հասարակութիւն ո՛չ արգելոյն զայն: Մեր զօրինակս այնպիսի թղթ-
թոց, թուով տասնևհինգ, առաքեցաք ընդ գրութեան մերում յամի
1849, ի սեպտեմբերի 2, համար 218, ի քաղաքական Դուռն Նոր-
Նախիջևանայ վասն կանոնաւոր վերաքննութեանց ամենայն գրեցե-
լոցն յայնոսիկ թուղթսն ի ներկայութեան զեպուտատի ի հոգևոր
կառավարութենէ և զօրինակն քննութեան իւրեանց առաքել մեզ:
Քաղաքական գլուխն Յարութիւն Խալիպով ի կատարումն այսր յանձ-
նարարութեան մերոյ, գրութեամբ ի 1 դեկտեմբերի 1849 ամի, հա-
մար 206, պահանջեալ էր ի տեղւոյն հոգևոր կառավարութենէ
զզեպուտատ առ ի ներկայ դտանելոյ ի ժամ քննութեան, և հոգևոր
կառավարութիւնն փոխանակ կատարելոյ զպահանջ քաղաքական
կառավարութեան, յեցեալ յ80 յօդուած բարձրագոյն կարգագրու-
թեան յաղագս կառավարութեան հայոց եկեղեցւոյ, գրութեամբ ի
16 դեկտեմբերի այնր ամի, համար 754, պատասխանէ, թէ առանց
ո՛վճոյ կոնսիստորիային չկարէ նշանակել զզեպուտատ, իսկ կոն-
սիստորիայն և Մատթէոս եպիսկոպոսն ընկալեալ զխնդիրս Եղիա
սարկաւագի Շարշնիկեանց, յորում յիշատակեալ էր միտք կոնդակի
մերոյ առ քաղաքական Դուռն, փոխանակ հրամայելոյ կառավար-
ութեան՝ նշանակել զզեպուտատ, հրամանագրէ՛ պահանջել ի քա-
ղաքական գլխոյն զպատճէն կոնդակի մերոյ, ուստի և մնայ դործն
առանց կատարման յաղագս ոչ օրինաւոր ճանաչելոյն հնազան-
դութիւն հայոց հոգևոր կառավարութեանց պատուիրանաց կաթո-
ղիկոսի իւրով կոնդակաւ առանց հրամանաց իւրումն կոնսիստո-
րիայի, մեք ընդ կոնդակի մերում յամի 1849 ի դեկտեմբերի 24,
համարաւ 344, առաքեցաք ի Սինօզն Էջմիածնի զօրինակս վերոյի-
շատակեալ գրութեանս Եղիա սարկաւագի Շարշնիկեանց և Միքայ-
էլ դպրի Ղազարեան Ուստայեանց, և որովհետև Մատթէոս եպիս-
կոպոսն առաջարկեալ էր Սինօզին Էջմիածնի վասն ձեռնադրութեան
13 անձանց, մեք յառաջադրեցաք նովին կոնդակաւ Սինօզին դար-

ձուցանել զմտադրություն իւր ի վերայ բարւոքելոյ զեկեղեցական
կառավարութիւնն և զգուշանալ վասն ամենայն ձեռնադրելեաց,
կարճելով զամենայն հնարս անօրէն խորամանկութեանց գործա-
վարութեանց հայոց հոգևորական կառավարութեանց, յորում վասն
յիշեալ ի վերոյ երկու անձանցն անըմբերելի կրիցն դաժանութիւնք:
Ի գրագրութեանց ծագելոց ընդ մէջ Մատթէոս եպիսկոպոսի, քա-
ղաքական Դուռն և հայոց հոգևոր կառավարութեանն, տեսցէ Սի-
նօզն Էջմիածնի, զի հոգևոր կառավարութիւնն փոխանակ նշանակե-
լոյ զզեպուտատ յանհնարինս ձեռն արկանէ ի գրութեան իւրում ի 17
մարտի 1850 ամի, համար 204, թէ վասն տալոյ նմա զզեպուտատ
յաղագս քննելոյ զօրինակս գրութեանց թողլով անգործ առանց կա-
տարման, իսկ Մատթէոս եպիսկոպոսն գոլով ի Նախիջևան, ի նոյն
թիւ, համար 78, խնդրէ ի քաղաքական գլխոյն կամ զպատճէն
կոնդակաց մերոց տալ ինքեան կամ զիսկականսն ներկայացուցա-
նել առ նա, զորս և անձամբ անձին տայ նմա ընթեռնուլ և եպիս-
կոպոսն փոխանակ հրամայելոյ հայոց հոգևոր կառավարութեանն
նշանակել զզեպուտատ և աւարտել զքննութիւնն, ինքն անձամբ
անձին զինի ընդդէմ մերում հրամանի և զընդ քննութեամբ եղեալ
անձն զԵղիա սարկաւագն Շարշնիկեանց ի 26 նոյն մարտի ձեռնա-
դրէ քահանայ. տեսցէ այժմ Սինօզն և նկատեսցէ, թէ յանդուզն
ներգործութիւնք Մատթէոս եպիսկոպոս վիճակաւորին Բեսարա-
բիոյ և հոգևոր կառավարութեանն Նախիջևանայ ո՛ր աստիճան են
բարձրացեալ, մինչ զի հրամանաց ընդհանրական կաթողիկոսին
իւրեանց հակառակին և զկամս իւրեանց յառաջ վարեն, ուստի առա-
քելով ընդ սմին զօրինակս գրութեանց քաղաքական գլխոյն առ մեզ,
առ Մատթէոս եպիսկոպոսն և առ հայոց հոգևոր կառավարութիւնն
և սոցա առ նա, յառաջագրեմք Սինօզին Էջմիածնի՝ դարձուցանել
և զիր մտադրութիւն առ բարոք կառավարութիւնն եկեղեցեաց և
արմատախիլ առնել զամենայն անկարգութիւնս ի միջոյ հոգևորա-
կանաց, ևս առաւել ի վիճակաւորաց և ի հոգևորական ատենական
տեղեաց գտանողաց պաշտպան շարագործութեանց հոգևորականաց,
որպէս երևի ի ներկայ առաքեալ թղթոց, ընդ այսմ յառաջագրեմք
նաև հրամանագրել կոնսիստորիային Բեսարաբիոյ առաքել ի
Սինօզն Էջմիածնի զստահակ Եղիա քահանայն Շարշնիկեանց և
զՄիքայէլ դպիրն Ղազարեան Ուստայեանց վասն անձամբ անձին
տալոյ զպատասխանն յատենի Սինօզին Էջմիածնի: Իսկ ի Մատ-
թէոս եպիսկոպոսէն պահանջել զբացատրութիւն յաղագս այնպիսի

իւրումն գործողութեանց ընդդէմ մերում հրամանի և ձեռնադրու-
թեան ընդ այնպիսի յանցաւորութեամբ վկայեալ անձն զՆղիայն
Շարշնիկեանց:

Հայկական ՍՍԹ Պետական կենտրոնական արխիւ,
Ֆոնդ N 54, գործ N 1514, թերթ N 45—46:

7. 1853 թ. մայիսի 29

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ
ՄԱԳԻՍՏՐԱՍԻ 1853 Թ. ՄԱՅԻՍԻ 29-Ի ԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Լ ու ա ն

1. Զմիւտրական տեղոյս հայոց մագիստրաթի ի 29-էն մայիսի
սոյն ամի համար 1344, որով յայտնէ այսպէս. «Պարոն Քայլանրո-
գու քաղաքապետն հրամանագրութեամբ ի 25-էն այսր մայիսի հա-
մարաւ 1098 տալով գիտել մագիստրաթին, թէ պատրիարգ կաթողի-
կոսն ամենայն հայոց ներսէս հաղորդեալ տեառն փոխարքային
Կովկասու, թէ նոր-Նախիջևանայ հայոց տէր Նղիա քահանայն Շա-
րշնիկեանց և նոյն քաղաքի դպիր Միքայէլ Ուստայեանցն, որք ի հո-
գևոր իշխանութենէ նկատեալ են ի զանազան ընդդէմ օրինաց գոր-
ծողութիւնս, խորշին ի կատարելոյ զառաջարկութիւն տուեալն նո-
ցա յայտնել յէջմիածին, խնդրէ զառաքմանէ նոցա անգանոր ընդ
պահպանութեամբ (под присмотром) յարելով, թէ զգրամ վասն
ճանապարհական ծախուց ի Նախիջևանայ մինչև յէջմիածին պարտ
է տալ Նախիջևանայ քաղաքական գլուխ Խալիպովն, որում զայնմա-
նէ հաղորդեալ է: Ընկալեալ նորին լուսափայլութիւն քաղաքապետն
Քայլանու զայսմանէ զմիւտրական գավառապետին (նաշալնիքին)
Նկատեբինոսլաու գաւառի հիմնեալն ի հրամանագիր տեառն փոխ-
արքային Կովկասու, հրամանագրեալ է մագիստրաթին անյապաղ
առաքել զյիշեալ անձինս ընդ պահպանութեամբ յէջմիածին: Հայոց
մագիստրաթս տալով զայսմանէ հոգևոր կառավարութեանդ գիտել՝
ունի պատիւ խոնարհաբար խնդրել առաքել ի մագիստրաթս այժմ
իսկ զքահանայն Շարշնիկեանց և զդպիր Ուստայեանցն վասն ան-
լոյ ի կատարումն զյիշեալ հրամանն, ի հետևումն որոյ ի կառավա-
րութեանս հրամայեցին: Կոչել արգէն իսկ զտէր Նղիա քահանայն
Շարշնիկեանց յատեան սորին, յայտնել նմա զայսմանէ և առան-
ձին հրամանաւ հրամայիլ նմա երթալ այսօր և յայտնել ի տեղոյս
մագիստրաթն. զորմէ և միւտրականաւ ծանուցանել տեղոյս հայոց

մագիստրաթին ի լրումն նորին պահանջման, յայտնելով մագիս-
տրաթին, թէ Միքայէլ դպիրն Ուստայեանց չգտանի աստ ի քաղա-
քիս, այլ ի Քիշնև առ սրբազան Մատթէոս թէմակալ արքեպիսկո-
պոսն. և վերջապէս, զայսմ ամենայնէ մատչիլ ի ծանօթութիւն Վի-
ճակային կոնսիստորիային Նախիջևանայ և Բեսարաբիոյ առանձին
յայտարարութեամբ, առաքմամբ պատճէնի վերտողեալ միւտրա-
կանի մագիստրաթին, ի պարտուպատշաճ տեղեկութիւն նորին:

Անգամբ կառավարութեան՝

Մարտիրոս Բախանայ Թորոսեան
Պօղոս Բախանայ Խոնեանց
Թովմաս Բախանայ Գանձապետեանց

Հայկական ՍՍԹ Պետական կենտրոնական արխիւ,
Ֆոնդ N 54, գործ N 1526, էջ 43ր:

8. 1853 թ. հուլիսի 15

ՍԻՆՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԱԼԱՆԿՅԱՆԻ ԳՈՐԾԻ ԱՌԹԻՎ ՆՈՐ-
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԳ ՄԱՏԹԵՈՍ
ՎԵՂԱՊԵՏՅԱՆԻ ԲԱՅԱՏՐԱԳՐԵՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի 15 յուլիսի 1853 ամի և ազգական 1302, ըստ հրամանի նորին
կայսերական մեծութեան, ի Սինօղիս սրբոյ էջմիածնի լուան զգե-
կուցումն. վեհափառ կաթողիկոսն ամենայն հայոց տէր ներսէս ըստ
կոնդակի իրում յ8-ն յունուարի ներկայ ամի համար 15, առաքեալ
ի Սինօղի զպատճէնս գրութեանց, ծագելոց ի միջի հոգևոր կառա-
վարութեան՝ հայոց նոր-Նախիջևանու, կոնսիստորիային Բեսարա-
բիոյ և քաղաքական գլուխ Յարութիւնի Խալիպեանց ըստ առաք-
կային, որ վասն առնելոյ զքննութիւն ի վերայ անպատշաճ նամա-
կագրութեանց Նղիա սարկաւազին Շարշնիկեանց և Միքայէլ դպիրն
Նալբանդեանց և այլն, առաջադրեալ էր Սինօղիս հրամանագրել
կոնսիստորիային Բեսարաբիոյ առաքել ի Սինօղիս զստահակ Նղիա
քահանայն Շարշնիկեանց և Միքայէլ դպիրն Ուստայեանց վասն ան-
ձամբ տալոյ զպատասխանիս յատենի սորին: Իսկ ի Մատթէոս
կաթողիկոսէն պահանջել զբացատրութիւն յաղագս ընդդէմ լինելոյ
նորա անօրէնութեանց նորին սրբութեան և հակառակ կամաց նորին
ձեռնադրելոյն զընդ քննութեամբ եղեալ անձն Նղիա սարկաւազն
Շարշնիկեանց: Ի հետևումն այսօրիկ Սինօղիս յ7-ն մարտի ներկայ

ամի համար 372, հրամանագրեաց կոնսիստորիային Բեսարաբիոյ առաքել փութով յոյժ Ի Սինօդս զԵղիա քահանայն Շարշնիկեանց և զՄիքայէլ դպիրն Ղազարեան Ուստայեանց վասն անձամբ տալոյ զբացատրութիւն յատենի Սինօդիս առ հարցմունս սորին, զորս ունի սա առաջադրել նոցա վասն թույլատրեալ Ի նոցանէ անկարգութեանց և ամբարշտական ներգործութեանց նոցուն: Այլ և Ի վիճակաւորէն Բեսարաբիոյ Ի Մատթէոս արքեպիսկոպոսէն Ի նոյն թիւ համար 373 պահանջեաց զբացատրութիւն թէ՛ որպիսի՞ անհրաժեշտ է հարկեցուցիչ պատճառանք ստիպեցին զնորին սրբազնութիւնն հակառակ կամաց և հրամանի վեհափառ հայրապետին թույլատրել ինքեան զձեռնադրութիւն յաստիճան քահանայութեան Եղիա դպիրն, ծանուցելոյ Ի նորուն սրբութենէ անձն անհարազատ ըստ իւրումն խոտվարար բնաւորութեանց և ամբարշտական կենցաղավարութեանց, և յայն ժամ, երբ նա ըստ իւրումն յանցաւորութեան գտանիւր ընդ քննութեամբ ըստ տնօրէնութեան նորին սրբութեան: Յետ այսպիսի հրամանագրութեանց Սինօդիս հետզհետէ ստացան Ի սմին Ի յիշեալ վիճակաւորէն, Ի կոնսիստորիայէն Բեսարաբիոյ և Ի հոգևոր կառավարութենէն հայոց նոր-Նախիջևանու բազմաթիւ յայտարարութեամբք հանդերձ խնդրագրութեամբք վերոյիշեալ Եղիա քահանային և Միքայէլ դպիրն, յորոց Մատթէոս եպիսկոպոսն առաջի արար զիւրն չբմեղական փաստս յարգարութիւն իւրոց գործողութեանց ըստ այսմ գործոյ, իսկ կոնսիստորիայն և հոգևոր կառավարութիւնն յայտարարեալ զտնօրէնութեանց վասն առաքման վերոյիշեալ և դպիրն, մատոյց ընդ այնս և զխնդրագործութիւնս և զայլ զբազրութիւնս ստացեալս Ի նոցունց յաղագս անմեղութեանց և դժուարութեանց նոցա զալ այսր Ի պատճառս աղքատութեան: Ի վերայ այսոցիկ զբազրութեանց, Սինօդս օրագրութեամբ Ի 11 յունիսի այսր ամի եզրակացոյց զպատճէնս վերտողեալ պատասխանագրութեանց վիճակաւորին Բեսարաբիոյ Մատթէոս եպիսկոպոսին, Եղիա քահանային Շարշնիկեանց և Միքայէլ դպիրն Նալբանդեանց, առաջի արարեալ առ վեհափառ հայրապետն տ. Ներսէս ընդ համառօտ քաղուածոյ այսր օրագրութեան խնդրել զբարեհաճութիւն նորին վեհափառութեան, զի Ի յարգանս չբաւորութեան վերջին երկուցն զնախ ենթադատեալն բացատրութիւնս առցէ Ի նոցանէ զբար Ի Նախիջևան քաղաքի Սարգիս վարդապետն Ջալալեանց առ Ի մատուցանել Սինօդիս վասն վճռահատութեան, և կամ զժախս զճանապարհորդութեանց նոցա Ի Նախիջևանայ մինչ ցսուրբ աթոռն

18642-1596

տացէ հոգևոր իշխանութիւնն յարդեանց եկեղեցեաց կամ վիճակին, բայց այս օրագրութիւն Սինօդիս մինչ չե էր ամեալ Ի կատար, հոգևոր կառավարութիւնն հայոց նոր-Նախիջևանու յայտարարութեամբ առանց նշանակման ամսաթիւոյ համարաւ 302, յայտնեաց Սինօդիս, թէ Եղիա քահանայն Շարշնիկեանց ոչ միայն անհնազանդ գտանի տնօրէնութեանց իշխանութեանն վասն արգելեալ մնալոյ Ի քահանայագործութեանց և գալստեան յէջմիածին, այլ և Ի 13 յունիսի առաքեալ է զամբաստանագիր Ի կառավարիչ Սինկղիտոսն վասն վերտողեալ կարգադրութեանց՝ իշխանութեանն և զպատճէն այնր ամբաստանագրութեան իւրոյ հանդերձեալ է առաքել և Ի վիճակային կոնսիստորիայն հայոց Բեսարաբիոյ: Այլ և վեհափառ հայրապետն՝ կոնդակաւ Ի 11 այսր յուլիսի համարաւ 176 ըստ գործոյ նոր-Նախիջևանցի Գարրիէլ քահանային Տէր-Սիմէօնեանց ծանոյց Սինօդիս, թէ զԵղիա քահանայն Շարշնիկեանց բերեալ է տուեալ Ի Տիփիս, և թէ առնէ զտնօրնութիւն վասն բերել տալոյ և զՄիքայէլ դպիրն Նալբանդեանց, յետ որոյ ունի կայանալ համապատշաճ յանցաւորութեանց նոցին վճիռ պատշաճավայել իրաւագատութեամբ: Վասն որոյ հրամայեցին՝ որովհետև ըստ վերոգրեալ վերջին կարգադրութեանց վեհափառ հայրապետին՝ գործն յանցաւորութեանց Եղիա քահանային և Միքայէլ դպիրն՝ պարտի ընկալնուլ զհամապատշաճն վճռադատութիւն՝ ըստ նորոգ տնօրէնութեան նորին սրբութեան, որ ունի կայանալ յետ բերել տալոյ և զյիշատակեալ դպիրն, ուստի զօրագրական սահմանադրութիւն Սինօդիս Ի 11 յունիսի անցեալ 1852 ամի կատարել միմիայն ներկայացուցանելով նորին սրբութեանն զօրինակս պատասխանագրութեանց՝ վիճակաւոր առաջնորդին և վիճակային կոնսիստորիային Բեսարաբիոյ յանդիման առաջադրեալ նոցին հարցմանց Սինօդիս, հիմնեցելոց Ի վերայ կոնդակի նորին սրբութեան յ8-ն յունուարի 1852 ամի համարաւ 15:

Անդամք Սինօդի Գուկաս արքեպիսկոպոս Մակար Եպիսկոպոս

Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարան, արխիվային բաժին, Սինօդի օրագրութիւնները, թղթ. № 37, լավ. № 416:



9. 1851 թ. սեպտեմբերի 15

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԸ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԻՐ ՔՐՈՋՈՐԳՈՒՆ ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամենապայծառ գերիշխան մեծ բազաուր կայսր Նիկոլայ
Պալլադի, ամենաողորմած ինճնակալ համայն ուսաց

Խնդրէ նոր-Նախիջևանցի Միխայել դպիր Նալբանդեանն, այլ
թէ յի՞նչ կայանայ խնդիրն, այնմ զհետ զան յօդուածք.

Հարկատր է ինձ ունել զմետրիկեան վկայութիւն զծննդէնէն և
զմկրտութենէ քեռորդոյն իմոյ Աւետիք Աւետիքեանի Վատուժեան
յաղագս մուծանելոյ զնա ի ձեմարան արևելեան լեզուաց, որ ծնեալ
է ի 5 հոկտեմբերի 1842 ամի, և մկրտեալ ի սուրբ Նիկողայոս ժո-
ղովրդական եկեղեցւոջ նոր-Նախիջևանայ ընդ ձեռն Ղուկաս քա-
հանային Գալստեան, որոյ և կնքահայրն եղեալ է Մարգար Լուսե-
ղենեան Վատուժեան, վասնորոյ ամենահպատակաբար հայցեմ յա-
րազրեալ զերկուս թերթս նշանատր թղթոց, 15 կոպեկ արժողութեան,
մինն վասն վկայականին և միւսն վասն օրագրին:

Որպէսզի հրամայեալ լիցի տալ ինձ զյիշեալ վկայութիւնն շա-
փարերական համաձայն օրինաց:

Ի սմին խնդրոյ, զոր շարազրեցի և պարզագրեցի Միխայել
դպիր Նալբանդեան ստորագրեցի: Բնակութիւն ունիմ ի Քիշնև առ
սրբազան արքեպիսկոպոսն:

Խնդիրս այս պատկանի մատուցանել ի Նախիջևանայ հայոց
հոգևոր կառավարութիւն: Ի 15 սեպտեմբերի, 1851, ի Պերեկոպ:

Հայկական ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ,
ֆոնդ № 54, գործ № 725, թերթ 9:

10. 1852 թ. ապրիլի 22

ОТНОШЕНИЕ ЗАСЕДАТЕЛЯ НАХИЧЕВАНСКОГО АРМЯНСКОГО
МАГИСТРАТА В ДУХОВНОЕ ПРАВЛЕНИЕ О ЖАЛОБЕ НАЛБАНДЯНА

В здешнее Духовное Правление

Дьячок здешней соборной церкви, Михаил Налбандов жа-
ловался Магистрату, о нанесенной ему словами, с намерением
бить, обиде Нахичеванским мещанином Капрелом Тер-Кара-
петовым Дохсановым 17-го августа прошлого 1850 года в мона-

стырской келье Крестовоздвиженского монастыря, при како-
вом случае между прочими свидетелями были священники:
Богдан Шапошников, Гавриил Чавчанов, Илья Шапошников и
дьякон Карает Везиров.

Получив предписание Армянского Магистрата, о произве-
дении об этом исследования, я покорнейше прошу Духовное
Правление запросить на законном основании означенных свя-
щенников: с какого повода, за что и как именно нанесена
дьячку Налбандову обида мещанином Капрелом Тер-Карапе-
товым-Дохсановым и отзвывы какие ими даны будут доста-
вить ко мне в возможной скорости при своем сообщении.

Դատաւոր Մապիկով

ЦГА Армянской ССР, фонд 54, дело 1522а, лист 2.

11. 1852 թ. մայիսի 5

ОТНОШЕНИЕ ЗАСЕДАТЕЛЯ НАХИЧЕВАНСКОГО АРМЯНСКОГО
МАГИСТРАТА В ДУХОВНОЕ ПРАВЛЕНИЕ О ЖАЛОБЕ НАЛБАНДЯНА

В Нахичеванское Духовное Правление

Не получая уведомления на отношение мое от 22 прошло-
го апреля № 316 по делу о нанесенной дьячку Михаилу Нал-
бандову мещанином Капрелом Дохсановым обиде, покорней-
ше прошу Духовное Правление просимые мною тем отноше-
нием сведения доставить ко мне в возможной скорости.

Դատաւոր Մապիկով

ЦГА Армянской ССР, фонд 54, дело 1522а, лист 4.

12. 1852 թ. մայիսի 5

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ՝
ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԲՈՂՈՔԱԳՐԻ ԱՌԹԻՎ ՎԿԱՆԵՐԻՑ
ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋԵՂՈՒ ՄԱՍԻՆ

Լ ու տ ն

Ջերկոսին միատրական տեղւոյս Մագիստրատի դատաւոր
Մապիկովին, ա). Ի 22-էն ապրիլի սոյն ամի համար 316, և բ). Ի

5-էն մայիսի համարաւ 362, յորոյ առաջնովն յայտնէ, թէ դպիր տեղւոյս սուրբ Լուսաւորիչ առագ եկեղեցւոյ Միքայէլ Նալբանդեանն խնդրագործ լեալ է Մագիստրաթին հաղագս ստացեալ զրկանաց իւրոյ ի նախիջևանաբնակ մեշշանին Գարբիէլ Տէր-Կարապետեանէ Տոխսանեան ի 17 օգոստոսի անցեալ 1850 ամի, ի խցի սուրբ Խաչ վանքին տեղւոյս, յորում ժամու ի մեջ այլոց վկայից գտեալ են ներկայ և քահանայք՝ տէր Աստուածատուր Շաբշնիկեանն, տէր Գարբիէլ Ճաւճաւեանն, տէր Եղիա Շաբշնիկեանն, ևս սարկաւագ Կարապետ Վեզիրովն, ընկալեալ զհրաման Մագիստրաթին վասն առնելոյ զքննութիւն զայնր առարկայէ, խոնարհաբար խնդրէ ի հոգևոր կառավարութեանէ՝ հարցանել ի վերայ հիման օրինաց ի յիշեալ քահանայից, թէ յի՞նչ պատճառաց, վա՞սն էր և ի՞նչ վշտացուցեալ է մեշշանին Գարբիէլ Տոխսանեանն զՄիքայէլ դպիր Նալբանդեանն և զպատասխանիս քահանայից առաքել առ ինքն փութով ըստ մարթնելոյն: Ի հետևումն որոյ, հրամայեցին՝ կազմեալ զայսմանէ ուրոյն՝ զործ, հանգերձ վերոյգրելովքն, հանել ուրոյն, ուրոյն հրաման առ վերոյիշատակեալ քահանայս, այն է՝ առ տէր Աստուածատուր Շաբշնիկեանց, առ տէր Գարբիէլ Ճաւճաւեան, առ տէր Եղիայն Շաբշնիկեանց և առ սարկաւագ Կարապետ Վեզիրովն, այնու, զի նոքա ի դեմ պահանջեալ ի նոցանէ հարցմանց լընթացս երից ատուրց տացեն կառավարութեանս զպատասխանիս, յայտարարութեամբք իւրեանց առանց անազանելոյ և զայն առաքել առ զատուոր Մասլինովն:

Անդամք կառավարութեան՝ Գարբիէլ Բահանայ Պատկանեան
Գարբիէլ Բահանայ Ճաւճաւեան

Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ-
Փոնդ № 54, գործ № 1514, թերթ 52:

13. 1852 թ. մայիսի 14

ԳԱՔՐԻՅԸ ԸԱՎՃԱՎՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ
ԲՈՂՈՔԱԳՐԻ ԱՌԹԻՎ

Ի նախիջևանայ հայոց հոգևոր կառավարութեանդ
Ի Գարբիէլ Բահանայէ Ճաւճաւեանց

Պատասխանի

Առ հրաման հոգևոր կառավարութեանդ 19-էն ամսոյս մայիսի համարաւ 221 պատասխանեմ զի 1850 յաւուր միում մինչդեռ ի

միասին ընդ տէր Աստուածատուրոյ Շաբշնիկեանց զնացինք ի սուրբ Խաչ վանքն, կուէին անդ դպիր Միքայէլ Նալբանդեանն և Գարբիէլ տէր Կարապետեանն-Տօխսանեան, յայնմ միջոցի Գարբիէլ Տօխսանեանն յարձակեցաւ ի վերայ Նալբանդեանին, Նալբանդեանն յուշ արար նմա հեռանալ յինքենէ և եղբայր Գարբիէլի Տօխսանեան՝ Յովհաննէս քահանայն Տէր-Կարապետեան գոլով անդանոր, հեռացոյց և յետս կասեցոյց զեղբայր իւր զԳարբիէլն ի հարձակմանէն և համոզեաց զնա զադարիլ ի կուոյ, բայց յիշեալ Գարբիէլ Տօխսանեանն գոլով արբեալ, զանազան անպատեհ բանիւք անարգեաց զդպիր Միքայէլ Նալբանդեանն:

Գարբիէլ Բահանայ Ճաւճաւեանց

Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ-
Փոնդ № 54, գործ № 1522ա, թերթ 9:

14. 1852 թ. մայիսի 14

ԵՂԻԱ ՇԱԲՇՆԻԿՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ
ԲՈՂՈՔԱԳՐԻ ԱՌԹԻՎ

Ի նախիջևանայ հայոց հոգևոր կառավարութեանդ
յնդիա Բահանայէ Շաբշնիկեանց

Պատասխանի

Ստացայ զհրաման ատենիդ համարաւ 222, որով հարցանէ զիս սակս գործոյ դպիր Միքայէլ Նալբանդեանին ընդ մեշշանին Գարբիէլ Տէր Կարապետեան Տօխսանովի, առ որ պատասխանեմ իրաւի է, ի սուրբ Խաչ վանքին յամի 1850, ի մէջ օգոստոս ամսոյ ի պատահելն իմ անդ, ակնատես եղեալ էի զխուոյ նոցին, որ ի սմին պահու Գարբիէլ Տօխսանովն յարձակելով ի վերայ Միքայէլ դպիրն, կամեցաւ ծեծել զնա և եղբայր Գարբիէլին տեր Յօհաննէս քահանայն, գոլով անդանոր, ո՛չ թոյլատրեաց զնա, այլ հազիւ կալեալ զնա, տարաւ մեկուսի, այլ նա առաւել ջանայր յարձակել, և էր ինքն Գարբիէլ Տօխսանեանն արբեալ նոյնպէս, զանազան անպատեհ բանիւք անարգեաց և հայհոյեաց զՆալբանդեանն ի ներկայութեան բազմականաց, որք կային անդանոր:

Նդիա Բահանայ Շաբշնիկեանց

Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ-
Փոնդ № 54, գործ № 1522ա, թերթ 10:

15. 1852 թ. մայիսի 26

ՄԻՆՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻՆ ՀՈՂԵՎՈՐ ԿՈՉՄԱՆ ՄԵՉ
ՎԵՐՍՆԱՅՍԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Մ. ՎԵՀԱՊԵՏՅԱՆԻ 1852 թ.ԱՊՐԻԼԻ 9-Ի «ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԱՆՀԵՏԵՎԱՆՔ
ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յամի ազգական 1301 և փրկչական 1852 մայիսի 26 ըստ հրամանի նորին կայսերական մեծութեան ի Սինօդիս սրբոյ էջմիածնի լուան գյալտարարութիւն վիճակաւոր առաջնորդին Նոր-Նախիջևանու և Բեսարաբիոյ յ9 ապրիլի ներկայ ամի համար 117, յորում գրեալսպէս. «Միքայէլ դպիրն Ղազարեան Նալբանդեանց հաստատեալն ի թիւս եկեղեցական սպասաւորաց Նախիջևանայ սրբոյ Լուսաւորչի աւագ եկեղեցւոյ ինքնաձեռագիր ստորագրութեամբ նորին վեհափառութեան յամի 1845 ի լինելն ի Նախիջևան կալով մնալով ի նոյնպիսի պաշտաման, մտադիր ծառայեալ է թէպէտ և յորէ անտի իւրոյ մանկութեան, այլ առաւել ևս յետ նշանակելոյ նորին սրբութեանն զնա Նալբանդեանն ի պաշտօն դպրութեան սրբոյ Լուսաւորչի ամենայն հարազատութեամբ առ եկեղեցին ազգային և յամի 1848 ի 7 յունիսի ի թիւս այլոց ընկալեալ է ի մէնջ զչորրորդ աստիճան ջահնկալութեան որոյ զի հարկաց արձակագիրն յՑ-էն նոյն յունիսի համարաւ 52, իմով յայտարարութեամբ մատուցի ի բարետեսչութիւն դոյն իշխանութեան վասն վերահաստատելոյ զնա ի հոգևոր կոչումն, յետ այսր ամենայնի ըստ բերման բախտին յիշեալ Նալբանդեանն յայնտիկ աւուրսն յունիս ամսոյ ըմբռնեցաւ ի խոլերայէ և հազիւ ուրեմն թափել կարացին զնա բժիշկը ի ժանեաց անազորոյն ախտին, այլ յետ այսպիսի ապաբախտութեանց անակնունելի իմն անկաւ նա յախտ թուութեան մինչև ոչ մարթանալ նմա շարունակաբար կատարել զիւր պաշտօն յեկեղեցւօջ, այլ ստեպ անկաներ ի մահիճս, հուակ ուրեմն իրրև ապայոյս գտաւ նա ըստ ասելոյ բժշկացն ի կատարեալ առողջութենէ, առ այն յաւել վերստին լինել խնդրագործ ազատել զինքն ի հոգևոր կոչմանէ, որում ոչն կարէր այնուհետև ի սպաս տանել, զորպիսի խնդիր նորին մեք ընկալեալ մերով յայտարարութեամբ մատուցաք ի տես լուսաւորչեան Սինօդի ի 10-էն օգոստոսի 1848 ամի, համարաւ 1161 և յետ այնորիկ յեւանելն մեր ի Նախիջևանայ դէպ ի Ղրիմ և ի Բեսարաբիա, տեսանելով զնա այնպէս ի մեծի նեղութեան, ըստ բազում հանգամանացն՝ գթացեալ յողորմելութեան նորին, առի զնա ընդ իս տաբեալ ի Ղրիմ և ի յՕդեսսայ, յանձն արարի տեղական բժշկաց, որք երեւելիք

էին, դարման մատուցանել տառապելոյն, այլ ոչ կարողացեալ յայնոսիկ քաղաքս բարօքել զնորին առողջութիւն, վերջապէս բերի ի Քիշնև, ուր յետ իբր ամօք տկարութեան եզիտ ըստ ողորմութեան աստուծոյ զիւր կատարեալ առողջութիւն, թէպէտ և լընթացս այսբանի միջոցաց արդէն ընկալեալ էի ես ի Սինօդէդ գլուծումն վասն արձակելոյ զնա ի հոգևոր կոչմանէ, այլ տեսանելով զչերմեռանդութիւն նորա առ այն և զհարազատութիւն առ եկեղեցին ազգային, յորմէ առ հարկն ստիպելոյ և ի վերջին յուսահատութենէ ի պատճառս վերաողեալ հիւանդութեանց տուեալ էր զհրաժեշտ, պահպանեցի զնա ցայսօր ժամանակի, մանաւանդ յետ առողջութեան տեսեալ զնա ըստ ամենայնի անյողորդ յիւրում նախնի ուխտին, վասն որոյ վերստին ընկալեալ ի նորոյ արձակագիր հարկաց հաստատութեամբ քաղաքական գլխոյն յորմէ առ անգամ մի արձակեալ էր, այլ որովհետև այն եղեալ էր յառաջ քան զիններորդ աշխարհագիրն և միւս ևս զի Սինօդն ի դարձուցանելն զայն առ իս եղծեալ էր խաչագծիւ, վասնորոյ սովին յայտարարութեամբ յանդիման կացուցեալ զայն չատեան Սինօդիդ, խնդրեմ բարեհաճել առնել զպատկանելն տնօրէնութիւն կարգադրութեան վասն վերահաստատելոյ զՄիքայէլ դպիրն Նալբանդեանց ի հոգևոր կոչումն, որոյ ունեմք առ մեզ զգրաւոր խնդիր և հաճութիւն անփոփոխ, մանաւանդ զի լընթացս իւրոյ չորս ամեայ գտանելոյն առ իս, թէ հիւանդութեամբ և թէ գրագրութեամբ միշտ եցոյց զիւր հարազատութիւն և հաւատարմութիւն ի ծառայութեան և զչերմեռանդութիւն առ ազգն և առ նորին եկեղեցի, ըստ իւրումն կարողութեան: Ի մատուցեալ արձակագրեն յիշատակեալ Միքայէլի Նալբանդեանց տուեցելոյ նմա ի բնակչաց քաղաքին Նոր-Նախիջևանու և վալերացուցանելոյ ի տեղական քաղաքական գլխաւորէ երևի, զի հասարակութիւն տեղոյն թուով 67 անձինք օրինաւոր ստորագրութեամբ իւրեանց արձակեալ են զՄիքայէլ դպիրն Նալբանդեանց ի կարգէ իւրեանց և մինչ ցկուշումն նորոգ աշխարհագրի յանձնառու լինի հատուցանել ի տեղի նորա զամենատեսակ արքունի հարկս վասն անարգել մտանելոյ նորա ի հոգևոր կոչումն: Իսկ ի տեղեկութեանց գործոց երևի, 1. զի վերոհիշեալ վիճակաւոր արքեպիսկոպոսն Մատթէոս ընդ յայտարարութեան իւրումն յ8 յունիսի 1848 ամի համար 52 մատուցեալ Սինօդիս զարձակագիր ի հարկաց Նոր-Նախիջևանցի Միքայէլի Նալբանդեանց, խնդրեաց զտնօրէնութիւն Սինօդիս, յաղագս ընկալելոյ զնա ի հոգևոր կոչումն: Յետ որոյ Սինօդս օրագրութեամբ իւրով յ7 յուլիսի նոյն ամի եզրակացոյց՝ զայն արձակագիր մատուցեալ տէր փոխար-

բային Կովկասեան սահմանաց, խնդրել զտնօրէնութիւն պայծառափառութեան յաղագս միջնորդելոյ ի կառավարիչ Սենաթէն զլուծումն արձակման նալրանդեանին ի հարկատու վիճակէն վասն մտանելոյ ի հոգևորականութիւն: Այլ այս եզրակացութիւն դեռ ոչ ածեալ ի կատար, նոյն վիճակաւորն ըստ յայտարարութեան իւրոյ ի 10 օգոստոսի այնր ամի, համար 116, մատոյց Սինօզիս զօրինակ խնդրագրոյ նալրանդեանին, յանուն նորին բարձու սրբազնութեան, առ որ և խնդրեաց դադարեցուցանել զտնօրէնութիւն Սինօզիս վասն նորա, և զարձակագիրն ի հարկաց դարձուցանել յետս վասն յանձնելոյ նմա, առ ի մտանել վերստին ի վիճակ հարկատու ըստ իւրումն ցանկութեան, ի պատճառս ի վերայ նորա հասեալ անբուժելի իմն թուլութեան յըմբունմանէ խօրեբական ախտի: Ուստի և Սինօզս զայն եզրակացութիւն իւր թողեալ անկատար զարձակագիրն զայն ընդ հրամանագրի ի 26 նոյեմբերի համար 1550 վերադարձոյց առ նորին սրբութիւնն և 2. ի Սինօզիս շարունակի առանձին գործ ի վերայ առաջադրութեան վեհափառ հայրապետին ամենայն հայոց տեսոն ներսիս յաղագս անվայել նամակադրութեանց առաջարկեալ Միքայէլի նալրանդեանց, որոց վասն կոչի նա ի Սինօզն յաղագս անձամբ մատուցանելոյ սմին զբացատրութիւնս վասն այնոցիկ գրութեանց: Հրամայեցին. իրովհետեւ վասն առաջարկեալ Միքայէլին նալրանդեանց շարունակի ի Սինօզիս առանձին գործ ի վերայ հայրապետականն կոնդակի յաղագս զանազան անվայել նամակադրութեանց նորա, որոց վասն կոչի նա յատեան Սինօզիս վասն անձամբ մատուցանելոյ սմին զհարկաւորն պատասխանիս, ուստի զտնօրէնութիւնն վասն ընդունելութեան նորա ի հոգևոր կոչումն դադարեցուցանել մինչ ցվախճանական վճռահատութիւն Սինօզիս ըստ այնմ գործոյ, զորմէ տալ գիտել վիճակաւորին Բեսարարիոյ յաղագս ծանօթութեան:

Տեղակալ ատենապետի Դուկաս արքեպիսկոպոս Անդամբ Սինօզի Սիմէօն վարդապետ Տէր-Գալքեանց
Մակար վարդապետ Տէր-Պետրոսեանց

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, արխիվային բաժին, Սինօզի օրագրութիւններ, թղթ. № 35, վավ. № 293:

16. 1853 թ. փետրվարի 18

ՍԻՆՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ 1852 Թ. ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԴԻՄՈՒՄԻ ԱՌԹԻՎ

Լ ու ա ն

Զինգիր զպիր Միքայէլի նալրանդեանց ի 10-էն դեկտեմբերի 1852 ամի, յորում գրէ այսպէս. «Նորին բարձր սրբազնութիւնն տէր Մատթէոս վիճակաւոր արքեպիսկոպոսն նախիջևանայ և Բեսարարիոյ, ծանոյց ինձ բանիւ բերանոյ զհրամանադրութենէ Սինօզիս սրբոյ էջմիածնի առ իւր բարձր սրբազնութիւնն, յաղագս յետաձգելոյ զտնօրէնութիւն վասն ընդունելոյ կամ վերահաստատելոյ զիս ի կոչումն հոգևոր, ցվախճանական վերջաւորութիւն քննողական գործոցն իմոյ՝ վարելոյ ի Սինօզին, առ այս տնօրէնութիւն՝ լուսաւորչեան Սինօզին պարտաւորիմ յայտնել զհետեւեալս. թէպէտ և սկզբնական հանգամանք մտանելոյ իմոյ ի հոգևոր կոչումն, ըստ բարեհաճութեան նորին սրբազնութեան ծայրագոյն պատրիարք կաթողիկոսի ամենայն հայոց տեսոն ներսիս յամի 1845 (թէպէտ և յօրէ անտի մանկութեան սկսեալ ի 1837 ամէ ծառայեալ եմ եկեղեցոյն), նոյնպէս և զկարգելն իմ ի ջահնկալութիւն ի վերայ հիման այնր հաստատութեան, ի նորին բարձր սրբազնութենէ վիճակաւոր արքեպիսկոպոսէ թէմիս, յայտնի են արգէն Սինօզի սրբոյ էջմիածնի, այլ զրութիւն իմ՝ ոչ ամենեին: Քանզի՝ աւուրք իմ անցանն և ժամանակ իմ կորնչի և ես կամ տարակուսեալ ի վերայ երկուց ճանապարհաց, թէ Սինօզն սրբոյ էջմիածնի ընդունելոց է զիս ի հոգևոր կոչումն, եթէ ի պատճառս անյարիր գործոցն՝ մերժելոց: Եւ որովհետեւ յուսով մտանելոյ ի հոգևոր կոչումն, շունիմ ցայս վայր ժամանակի այսինքն ի 24 ամեայ իմում հասակի բուռն հարեալ զայլոց եղանակէ կենաց, վասնորոյ զտանիմ և ի մեծի ազբատութեան, հայթհայթելով զկարիս անձին սակաւ թոշակաւ: Համաձայն ազգական պարտաւորութեան իմոյ ըստ յորդորանաց բարենախանձ անձանց, ի գործ եղի զառ յինէն կախեալ միջոցս, վասն մտանելոյ ի հոգևոր կոչումն, որովք և ազատ համարեալ կարեմ զխիղճ իմ յապագայ կեանս իմ, եթէ այլ ազգ լիցի վախճան նպատակիս: Պատկառ ակնածանութեամբ աղաչեմ զՍինօզն իրրու ողորմեալ ազբատութեան և թշուառութեան իմում, փութացուցանել զտնօրէնութիւն իւր, զի թէ ըն-

դունելոց իցէ զիս յայն, համաձայն ցանկութեան իմոյ՝ ընկալցի, իսկ թէ՛ մերժելոց՝ քան զօր յառաջ վճռեսցէ և մի՛ թողուցու ինձ կորուսանել զժամանակ իմ ի շարաշար զրկանս ոչորմելի անձին իմոյ, և հասանել ի յետին ծայր ապարազդութեան: Ընդ այսմ համարձակիմ խնդրել զայս ևս, զի ի դէպս չընդունելոյ զիս Սինոդին ի հոգևոր կոչումն՝ բարեհաճեսցի զարձակման ի հարկաց վկայագիր իմ, ըստ առաջնոյն, շեղճանել, վասն զի հարկաւոր լիցի ինձ յայնժամ յաղագս մտանելոյ յարբունի ծառայութիւն, և կամ յայլ կոչումն, զորմէ չկարեմ այժմիկ խօսիլ ինչ, այլ նոյնութեամբ հասուցանել առ իս զայն ընդ ձեռն տեղւոյս բարձր սրբազնութեան վիճակաւոր արքեպիսկոպոսին կամ կոնսիստորիային թէ՛միտ: Ի զործոց Սինոդիս երևի ի հետևումն յայտարարութեան վիճակաւորին Բեսարաբիոյ յ9 ապրիլի 1852 ամի, համարաւ 117, յաղագս ընկալնլոյ ի հոգևոր կոչումն զՄիքայէլն Նալբանդեանց, ի վերայ հիման մատուցեալ արձակագրոյ նորա ի հարկաց, Սինոդս հրամանագրութեամբ ի 27 յունիսի նոյն ամի համարաւ 994 ետ գիտել յիշեալ վիճակաւորին թէ՛ որովհետև ի Սինոդիս շարունակի առանձին զործ ի վերայ առաջադրութեան վեհափառ հայրապետին ամենայն հայոց տեառն Ներսիսի յաղագս անվայել նամակագրութեանց առաջարկեալ Միքայէլի Նալբանդեանց՝ որոյ վասն կոչի նա ի Սինոդս յաղագս անձամբ մատուցանելոյ ամին զբացատրութիւն վասն այնոցիկ գրութեանց, ուստի զտնօրէնութիւն վասն ընդունելութեան նորա ի հոգևոր կոչումն դադարեցուցեալ է մինչ ցվախճանական վճռահատութիւն Սինոդիս ըստ այնմ զործոյ: Հրամայեցին. որովհետև Սինոդս չհամարի ինքեան իրաւունս առնելոյ զտնօրէնութիւն յաղագս ընկալնլոյ ի հոգևոր կոչումն զՄիքայէլն Նալբանդեանց յառաջ քան զվերջաւորութիւն կազմեցեալ ի Սինոդս զործոյն ի վերայ հայրապետական առաջադրութեան վասն անվայել նամակագրութեանց նորա, իսկ յիշատակեալ Նալբանդեանցն որպէս երևի յարգեան խնդրագրոյ նորա, ոչ յօժարի սպասել ցվախճան վերոյիշեալ զործոյն, ուստի զարձակագիր նորա ի հարկաց առաքել ըստ հրամանագրի ի վիճակային կոնսիստորիային հայոց Նոր-Նախիջևանու և Բեսարաբիոյ առ ի դարձուցանել նմա համաձայն նորուն ցանկութեան, այլև յանձնել կոնսիստորիային՝ պահանջել ի նոյն խնդրատուէ զվաթսուն կոպէկս արծաթոյ վասն երկուց թերթից անդրոշմ թղթոյ, և առաքել զայնս ուղղակի յինքենէ ի տեղական գաւառական գան-

ձարանն, զորմէ ծանուցանել ի Սինոդէս յիշեալ գանձարանին և արբունի պալատան յայսկոյս Կովկասու:

Անդամք Սինոդի Գուկաս արքեպիսկոպոս
Սիմէօն Եպիսկոպոս
Մակար Եպիսկոպոս

Հայկական ՍՍԻՔ Պետ. Մատենագարան, արխիվային
բաժին, Սինոդի օրագրութիւններ, թղթ. № 37,
վալ. № 110:

17. 1854 թ. ապրիլի 24

**ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՉՈՒՄԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հրաման նորին կայսերական մեծութեան ինքնակալին ամենայն
ուսաց, ի լուսաւորչական հայոց վիճակային կոնսիստորիայի Նոր-
Նախիջևանայ և Բեսարաբիոյ, Մոսկուայի հայոց հոգևոր կառավա-
րութեան, ըստ հրամանի նորին կայսերական մեծութեան ի կոնսիս-
տորիայիս լուան զհրաման կառավարչական մասին լուսաւորչա-
կան հայոց սինոդի սրբոյ էջմիածնի ի 21 օգոստոսի անցելոյ 1853
ամի, համարաւ 1282, յորում գրեալ է՝ դպիր Միքայէլն Նալբանդ-
եանց խնդրագրով մատուցելոյ սինոդին յանուն բարձրագոյն ի 24
մայիսի նոյն ամի, խնդրեալ էր ցտնօրինութիւն Սինոդին յաղագս
հաստատելոյ զինքն ի հոգևոր կոչման կամ վերադարձուցանելոյ
զարձակագիր իւր ի հարկաց գտանեցեալ ի զործս նորին, ի հետևումն
որոյ, կառավարչական մասն, ըստ պատուիրանի տեսաց ատենա-
կալաց սինոդին սրբոյ էմիածնի, յանձնէ կոնսիստորիայիս յայտնել
յիշեալ Նալբանդեանցին, թէ սինոդն, համաձայն այսմ ցանկութեան
նորա, արարեալ է արդեն զարժանաւորն տնօրէնութիւն, զորմէ և
յայտնեալ է նմա հրամանագրութեամբ յանուն կոնսիստորիայիս ի
15 մայիսի նոյն ամի և զտեղեկութիւնս ի զործոց սոյն ատենիս,
յորոց երևի, զի սոյն վիճակային ատեանս, ի լրումն հրամանա-
գրութեան յիշեալ սինոդի ի 15-էն մայիսի 1853 ամի, համարաւ
688, ընդ որում վերադարձուցեալ էր զարձակագիր ի հարկաց վերա-
սաց Միքայէլի Նալբանդեանց առ ի յանձնել նմա, աղագաւ ո՛չ հա-
մարելոյ ինքեան իրաւունս առնելոյ զտնօրէնութիւն յաղագս ըն-
կալնլոյ զնա ի հոգևոր կոչումն ըստ զօրութեան օրագրութեան
իւրոյ, կազմելոյն ի 6 յուլիսի նոյն ամի յանձնարար նմա: Հրամայե-

19. 1853 թ. հունիսի 21
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԳԱՊԵՏ ԶԱԼԱԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ԽԱԼԻՔՅԱՆԻՆ՝ ՆԱԼՔԱՆԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ձերդ ազնուփին,
ողորմած տէր

Ձյարգելի նամակ Ձերոյին ազնուութեան ստացայ հանդերձ երկու պաշտելի կոնդակօք նորին վեհափառութեան ընդ նմին և զհաշուէթուղթսն ազայ Աստուածատուրի Անուշեանց, զորմէ պատիւ վարկայ ծանօթս առնել Ձերոյին ազնուութեան:

Վերադարձն իմ այսուհետեւ պարտ է լինիլ անագան, վասն որոյ վարձեցի զտուն և անդ բնակիմ, ըստ որում հաշուէտուրն չեն աստմինն է ի Ս. Պ. Բուրգ և միւսն անդամալոյժ անկեալ յՕղեսայ և ես պարտ եմ սպտել ցվախճան:

Մանուկ դպիրն այն, որ թաղաւորեալ է ի վերայ տեառն իւրոյ ինձ առելի և ազգաց նախատինք, խորհրդով դիմեցաւ աչոր և ի Ղոխմ, թէ զինչ է պատճառն՝ ինձ անյայտ, բայց տեառնականէ հրամանն, թէ զինչ իցէ ծածուկ որ ո՛չ յայտնեցի, պատճառ չելանելոյ իմ յառաջնորդարանէ տեղուոյ ո՛չ ալ ինչ է, եթէ ո՛չ շտեսանել զնոյնպիսի լրբացեալ անառակն նստեալ ընդ իս ի սեղան:

Պատմեալ էր տեառն իւրոյ, թէ դուք երկիցս կոչեալ էք զինքն առ Ձեզ և ինքն շէր արժան համարեալ ի զալ. սոյնպիսի սուտ համբաւ եղև միխթարութիւն տեառն իւրոյ, բայց փութով տանելն զսաաստէն բարօք առնէք:

Յատուկ խնդրեմ ի Ձենչ, եթէ կարելի է ի ձեռն հաւատարմի Ձերոյ տալ ժողովեալ առանձին զայս տեղեկութիւն, թէ փոշտի կօնտօրքն Նոր-Նախիջևանայ Բօստովու որքան դրամ իցեն առաքեալ առ եպիսկոպոսն, առ յՕհաննէս վարդապետն, առ Միքայէլ դպիրն և առ առեանն սկսեալ ի 1849 ամէ ցայսօր, նշանակութիւն եղիցի համառօտ միայն ամն, ամիսն, առաքողն, դրամն, և առ ո՛վ, զի յոյժ հարկաւոր է, թէպէտ ես կամէի զալ և ժողովել զայս տեղեկութիւն, բայց ազնուութիւն Ձեր գերագոյն էք, քան զիս յայսմ մասին թէ՛ արիութեամբ և թէ՛ հաւատարմութեամբ առ նորին վեհափառութիւնն:

Ազնուութեան Ձերոյ խոնարհ աղօթարար
Սարգիս վարդապետ Զալալեան

Հայկական ՍՍԹ Պետական կենտրոնական արխիւ,
Քոնդ. № 139, գործ 798, թերթ 41:

20. 1853 թ. հունիսի 26
ԽԱԼԻՔՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆԱԼՔԱՆԳՅԱՆԻ
ՓԱՆՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ

Բարձր գերաստիճանեալ վէհափառ հայրապետ,
Ամենաողորմ սրբազան տէր

Ձամենապաշտելի կոնդակ վեհափառութեան Ձերոյ ի 24 մայիսի, ընդ համարու 225, ընկալայ մեծաւ յարգանօք ի 3 ներկայ ամսոյս, առ որ բերիմ ի պատասխանագրութիւն ամենախոնարհ յայտարարութեամբս:

Ի նոյն կոնդակի ծրարեալ գրութիւնսն ի վեհափառութենէ Ձերմէ առ պատուարժան վարդապետն Զալալեանց՝ առանց յապաղման առաջին պօշտիւ առաքեցի ուղղակի ի Քիշինև առ նորին հայրութիւնն, համարելով որ առ նա ժամանեցէ անդ, և առ այն սպասէի ի նմանէ պատասխանագրութեան առ ի յայտնել և զստացմանէն վեհափառութեան Ձերում, բայց տակաւին չէ իմ ստացեալ զայն:

Այլև ունիմ յայտնել ամենախոնարհարար աստուածարեալ տէրութեան Ձերում, զի ըստ տնօրինելոյ Թաւանոսկու քաղաքապետին մերոյ գնիազ Լիվինին ի վերա հիման հրամանագրութեան կուսակալին Կովկասեան կողմանց մագիստրաթն քաղաքիս ի ներկայ ամսոյ ուղևորեաց աստի զԵղիա քահանայն Շարշնիկեան ի սուրբ աթոռն Էջմիածնի, ընդ տեսչութեամբ առանձին նշանակեալ պահապանի և, որպէս հրամայեալ էր վեհափառութիւն Ձեր ի մասին ճանապարհային ծախուցն՝ յանձնեցի շափաւոր հարկաւորեալ դրամն յայն պէտս նոյն նշանակեալ պահապանին. ապա և որովհետև դպիրն Միքայէլ Ուստայեանց ո՛չ գտանէր աստ՝ մագիստրաթ, ըստ մտաց յիշեալ տնօրէնութեան վեհագոյն իշխանութեան, զրեաց իսկոյն ի Քիշինև բօլիցիական կառավարութեան տեղուոյն, որպէսզի և զնա անտի առաքեցէ ի սուրբ Էջմիածին, բայց յայսմ միջոցի, այսինքն յաւոր ուղևորելոյ աստի քահանային Շարշնիկեան, Միքայէլ Ուստայեանցն ի Քիշինևայ եկն աստ պօշտիւ, և մինչ իմացեալ մեր ըզգալստենէն, այն ինչ կամէաք ի ձեռն մագիստրաթի ուղևորել և զնա նոյն եղանակաւ, նա լուեալ աստ թերևս զայսպիսի տնօրէնութենէ, փախուցեալ մեկնեցաւ աստի՝ ունելով առ իւր ապառօթնի բատօռօթնի բօ գաղիօննի նատօպնօստի անուամբ առաջնորդական զրագրի, և ի տան հորն հազիւ մնացեալ ժամս երկուս, և որպէս ի

վախճանէ լսելի եղև, որ փախստեան նորին օգնական և առ այն խորհրդատու եղևալ է Գարրիէլ քահանայն Պատկանեան:

Վեհափառութեան Ձերում ալ ևս հարկաւոր համարիմ յայտնել ամենախոնարհարար զյետագա դիպումսս. երբ մագիստրաթն քաղաքիս ի կատարումն հրամանագրութեան իւրում քաղաքապետի արար կարգադրութիւն առաքել ի սուրբ էջմիածին զքահանայն Շաբշնիկեան, նա եկեալ առ մեզ իբրև զղջացեալ մեղաւոր, թախանձանօք աղերսեաց յոյժ միջնորդել խնդրանօք առ Ձերդ վեհափառութիւն վասն թեթևացումելոյ զարժանին պատիժ մեղացն իւրոց՝ մեղմացուցեալ զհատուցումն ըստ տնօրէնութեանն և մեր յայսպիսի աղաչանացն նորա ի ժամուն շարժեալ, վերջապէս խոստացաք զկնի մեկնելոյն աստի, եթէ ըստ հետեանացն հանգամանք ներեսցեն, յայտնել զայսմանէ ամենախոնարհարար վեհափառութեան Ձերում. ալև յառաջ քան զհասանիլ հրամանագրութեան նորին լուսափայլութեան զնիազ Վօթօնցովի, վստան ուղևորելոյ զնա ալոր, քանիցս ևս եկեալ առ մեզ նախ իբր լուսալ գոլով զայսպիսի տնօրէնութենէ, յայտնեաց, թէ մտադիր է ինքնակամ յառաջագոյն դիմել յոտս վեհափառութեան Ձերոյ, և առ այս խնդրեաց ի մէջ խորհուրդ, առ որ պատասխանեցի, թէ՛ տէրտէր դու գիտես. յաւել ևս ասել, թէ զոր ինչ և գրեալ է գանգատ ի Սենաթ այն ամենայն սխալմամբ և ի թելադրութենէ ալոց ոմանց արարեալ է, յոյր սակս յօժար եմ, ասաց, այժմ առաքել ի նորոյ խնդիր ի Սենաթ, թէ իւր առաջին գանգատ է անհիմն և սխալական. առ որ նոյնպէս և ասացաք, մեզ չէ ինչ փոյթ, դու գիտէս.— ալ սակայն այսպիսի զղջումն նորա ի վախճանի յայտնի եղև լեալ իցէ սուտ և խարէական, որպէս նորոգ խարդախութիւնն նորին՝ յայտնեցեալն զկնի մեկնելոյն աստի ցուցանէ:

Վեհափա՛ռ տէ՛ր. անձն այդ իբր ճանաչելով զիւր սխալանս և մեղս յօժարացեալ էր և էր պահպանելոյ զինքն յանվայել ընթացից, յոր վարեալն էր,— բայց նոր իմն գիպուած յայտ առնէ զանգուսպ կիրս հոգւոյն նորին,— յայսմ ամի ի 15 անցեալ ապրիլի նոր ի նորոյ կրկին մատուցեալ է այդ քահանայն ի Սենաթ նոր գանգատ ըստ առաջնոյն, ի նոյն միտս. սակայն վերջինս այս վերաբերութեամբ միայն առ իս երկարաբանելով յոյժ, զոր մինիստրն ներսնային գործոց նոյնպէս առաքեալ էր առ քաղաքապէտն Թականոսիու, վստան պահանջելոյ յինէն ի դէմ այնր պատասխանի. բայց քաղաքապէտն մեր ո՛չ համարելով պատշաճ ի նորոյ պահանջել յինէն զպատասխանի, հիմնեալ յառաջին պատասխանատուութիւն իմ ի դէմ առաջին գանգատանացն քահանային, վերադարձուցեալ է զայն առ մինիստրն, պատասխանելով, թէ յիշեալ քահանայն ըստ հրամանագրութեան զնիազ Վօթօնցովի, և թէ և վիճակ նորա լինելոց է անբաղդ, որ և է բոլորովին սուտ:

թիւն իմ ի դէմ առաջին գանգատանացն քահանային, վերադարձուցեալ է զայն առ մինիստրն, պատասխանելով, թէ յիշեալ քահանայն ըստ հրամանագրութեան զնիազ Վօթօնցովի, առաքեցաւ ի սուրբ էջմիածին.— զամենայն հանգամանս գանգատանացն երկարէ ի գրել աստէն, ալ արժան վարկայ հասուցանել ընդ սմին ի հայեցողութիւն վեհափառութեան Ձերոյ զերկուս ուսերէն պատճէնս, յորոց ի միումն պարունակի յայտարարութիւն քաղաքապետին մերոյ առ մինիստրն ի դէմ առաջին գանգատանաց Շաբշնիկեանի, և ի միւսումն նոր մատուցեալ գանգատն նորին վերաբերեալ վիայն առ իս. յորում և առանց պատկառանաց համարձակեալ է ի մէջ այլոց բանից գրել, իբր զի ևս ասացեալ եմ նմա, թէ վեհափառութիւն ձեր ծանուցեալ է ինձ զտնօրէնութենէ բոնի առաքման նորին ալոր միջնորդութեամբ կուսակալին Վրաստանու զնիազ Վօթօնցովի, և թէ և վիճակ նորա լինելոց է անբաղդ, որ և է բոլորովին սուտ:

Վեհափառ տէրութեան Ձերոյ
Ամենախոնարհ ծառայ
Յարութիւն Պողոսեան Խալիպով

Հայկական ՍՍԹ Պետական կենտրոնական արխիւ,
Քոնկ № 58, գործ № 4, թերթ 8—9:

21. 1853 թ. հուլիսի 3
ԽԱԼԻԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍԱՐԳԻՍ ԶԱԼԱՅԱՆԻՆ՝
ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Բարձր արժանապատիւ
ցանկալի սուրբ հայր!

Ի 30 անցելոյ ամսոյն յունիսի ընկալայ ի նորին վեհափառութենէ զմի փակեղ կնքեալ ընդ համարաւ 237 և 253, զոր այն ինչ կամէի դնել ի ճանապարհ և ահա յերկրորդում աւուր ի 1 յուլիսի ամսոյս ընկալայ և Ձերումդ սրբութենէ զառաքեալն ի 21 յունիսի, ապա ընդ առանձին նամակաւս յղեմ առ Ձեզ, և առ բանս Ձեր պատասխանի առնեմ, թէ արգելք Ձեր վերադարձի այսր եթէ միայն հաշուատեսութեան գործ իցէ (զոր տեսի) կարծեմ չէ այնչափ յերկարաձգելի ինչ, բայց եթէ զալստեան նոցա սպասելով և կամ ալ ինչ առանձին գործով իցէ անագանել, այն չէ ինձ յայտ:

Մեծաբանել սնապարծ դպրին սուտ է բոլորովին, զի իմ չիք տեսեալ զնա, և ոչ իսկ կոչեալ առ իս, ալ մագիստրաթ տեղւոյս

լուեալ զգալուատ նորա եղ պահաէս, այլ նա վաղագոյն իմացեալ միայն ժամս երկուս ի տան եղեալ փախուցեալ է ձեռամբ Պատկանովին, վասն որոյ մագիստրաթիս հարկ եղև գրել առ փոլիցի տեղւոյդ կալեալ առաքել զնա դատաստանական զգուշութեամբ, ուստի սպասէ մագիստրատս պատասխանելոյ փոլիցիդ, և ըստ այնմ յայտ առնել կոռոտնաչալնիքին:

Առնուլ զառանձին տեղեկութիւն ի փոշտայի կանդորէն վասն գրամոց առաքելոյ այդր առ նշանակեալս առ ի Ձէնջ անձինս ի 1849-էնդ դիրին իմն էր մեզ, սակայն այժմ գրեթէ անկարելի, զի ի լրանալ իւրաքանչիւր ամին ամենայն տարեկան տումարք փոշտային առաքին ի կուպեռնի, և անդ պահին, վասն որոյ չգտանի ի փոշտայն մեր անցեալ ամաց տումար և ո՛չ մի, այլ միայն ներկայ տարւոյն, որպէս այժմ գտանի աստ միայն 1853-ին, ուստի և դիրին է տալ Ձեզ զտեղեկութիւն այսր ամի միայն:

Գիտեմ զի տեղեկ էք արգելման ի քահանայագործութենէ Պօղոս քահանայի Խրոճեանց ամ և կէս իրր ի պատճառս զնալոյ նորա ի Ս. Պ. Բուրգ առանց հրամանի, սակայն այսր խիստ պատժոյ պատճառ ըստ իմ կարծեաց չէ զնալ նորա անդր, այլ միայն պատրուակ ռխակալութեան առաջնորդին առ մեզ, զի կամելով քինախնդիր լինել մեզ վասն ընտրելոյ մեր զնա ի դատաւորութիւն, հոգացաւ արգելուլ ի գործոյն և որպէս թուի ինձ նաև զմնացեալ ընտրեալս մեր զամենայն, չնչին պատճառանս յօղեալ հեռացուցէ և զնոսս ի պաշտօնիցն, այլ զայսմանէ ունիմ գրել առ վեհափառութիւնն ի տեղեկութիւն, և կարծեմ Դուք ևս ո՛չ զանց առնէք ծանուցանել նմա զայս ամենայն եղեալսն, եթէ պատշաճ համարիցիք:

Այսու մնամ բարձր արժանապատութեան ձերում
 խոնարհ ծառայ [Խալիբյան]

Հայկական ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ,
 ֆոնդ № 139, գործ № 798, թերթ 40:

22. 1853 թ. հուլիսի 17
 ՄԿՐՏԻՉ ԵԿԵՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍԱՐԳԻՍ ԶԱԱՂՅԱՆԻՆ
 ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Բարձր արժանապատի հայր իմ սուրբ!

Յետ գրութեան իմոյ ի 12 յունիսի անցելոյ առ սուրբ հայրդ իմ զանցից ինչ եղելոց ի քաղաքիս, զճանապարհորդութենէ ասեմ տէր

Նղիայի, և զգալուենէ անսանձ պատանուոյն և անդէն առ որին հալածական եղելոյ սմա և ևս ինչ ինչ անակնուէելեաց լեալ ականատես և ականշալուր յայսոսիկ ատուրս՝ անհնարին եղև ինձ լուել առանց ծանօթս առնելոյ և զսրբութիւն Ձեր, զի որպէս սոսկացայ և սարսափեցայ, ընդ լուրսն, նոյնպէս և Դուք ո՛չ սակաւ հիասքիբ ընդ անզուապ ռխակալութիւն և շարութիւն սրտի ոմանց հոգեւորականաց տեղւոյս:

Ծանուցեալ իսկ էի հայրութեանդ ի 13 ապրիլի նամակաւ, թէ տէր Նղիա ընդ ամբաստանական գիրն իւր զղացեալ, ցանկացաւ յետս կոչել զայն, կամ գէթ զի խափանեցի ներգործութիւն այնր գրոյ, որով իբր հաճել էր զմիտս աղայ Յարութիւնի, կամ ցածուցանել զբարկութիւն նորայ և շարժել զնա ի գութ՝ միջնորդ առ վեհապետն լինել, զի թերևս ի զնալ նորա յոտս վեհին յէջմիածին, մի՛ կարի խեթիւ հայեացէ ի նա, և ընդերկար լիցի պանդխտութիւն նորա անդր: Ապա զիա՛րդ և իցէ արտասուք ծերունի հօրն, միջնորդութիւն ոմանց մերձակայից նորայ, և խոնարհ ապաշաւ մեղուցելոյն քաղցրացուցին զայրն վեհանձն, և գրեթէ յանձն էառ եթէ ո՛չ ուղղակի առ վեհափառն, այլ ի ձեռն Գուկաս եպիսկոպոսի՝ լինել նմա օգնական. և ի նշան պահպանութեան քահանայական պատույ տէր Նղիայի, եղ զնա ի ճանապարհ ո՛չ որպէս զյանցաւոր ոք պահանջեալ ի մեծաւորէն, այլ ամենայն պատուով իբր մտերիմ իւր ուղևոր ի Տխփիս, և այնպէս ել ի ճանապարհ ի 11 յունիսի, և ի 27 նոյն ամսոյ մուտ առնել նորայ ի Տփխիս ծանոցց մեզ իւրով նամակաւ. (լուիցէ արդ հայրդ իմ աստանօր զզարմանալին): Յերկրորդում ատուր ելանելոյ աստի տէր Նղիայի, և աղայ Յարութիւն երթայ ի Թաղանոռի վասն իւրոց գործոց և ի ներկայանալն անդ կոռոտնաչալնիքին, առաջի առնէ աղայ Յարութիւն զերկրորդ զանգատագիր տէր Նղիայի նորոգ ընկալեալ ի նախարարութենէ, տուեալ յաւազ շարաթու երկրորդ անգամ զնոյն զառաջին բան զանգատանաց, և ի զարմանալ աղայ Յարութիւն ասէ կոռոտնաչալնիքին. չենք եղ պէտք պատասխանի առնել այսր երկրորդիս, զի առաջնոյն պատասխանի բաւական է առ միևնույն զանգատ, այլ պարտաւորեմ զքեզ (ասէ) առեալ զգաղափարն առաքել առ կաթուղիկոսն, զոր և արար իսկ աղայ Յարութիւն ի դառնալ իւր յետս ի Նախիջեան. և ի հարկէ յետս եկաց ի միջնորդութենէ:

(Ահա Ձեզ առաջին լուր, սոսկալի յամառութեան տէր Նղիայի ի կորուստ անձին): Լուիջի՛ք և զերկրորդն և՛ ևս սարսափելին. (սոսկամ ասել). քահանայի աստուծոյ խորհել զգործ մարդասպա-

նութեան: Եւ մի՛ ինչ ստապատիր կամ վարկպարագի համարեսցէ լուրս սրբութիւն Ձեր... Այսր պատմութիւն զփոքր ի շատնն պատմեցից գրով առ այժմ, իսկ զլիովին դէմ յանդիման. տրամաբանութեամբ: Յաւուրս յայտոսիկ լուայ զի տէր Պատկանովն կոչեալ զհայ յոք իւր մտերիմ սրտակից, բանայ նմա զխորհուրդ շարութեան սրտի իւրոյ ասելով, թէ զիա՞րդ կարելի իցէ մեզ բառնալ ի կենաց զեւրիպովն. յայս բան շուարեալ այրն ասէ՝ զայդ առնել չէ իմ գործ և գնայ ի բաց. այլ քահանայն շար ստէպ կոչեալ զայրն առ ինքն, հուակ ուրեմն զմտաւ ածեալ առնն՝ փորձել զհաստատութիւն շար մտաց նորայ յայն եղեոն, երթայ միւս անգամ առ Պատկանովն և իբր համոզեալ ասէ ցնա՛ ասացի յանցելումն թէ այդ չէ իմ գործ. սակայն ա՛յլ իմն եղանակաւ կարելի է զայդ առնել. կոչեսցուք զաւագակ արիւնախանձ և կաշառեալ զնա յանձն առցէ զսպանութիւնն և բարձցին կեանք եւրիպովին: Հասանեալ Պ... բնդ այս խորհուրդ առն գտանեն զերկուս մարդախոշոշ աւագակս, խոստանան նոցա զ115 արծաթս. զ13 անդէն տան ի ձեռս աւագակին առ ի շոյէ պատրաստական դրամոյ. այլ թէ յետոյ և զմնացորդն կամ զկնի եղեոնագործութեանն ունին հատուցանել շփտեմ: (Ահա գործ և խորհուրդ քահանայի օծելոյ տեառն)... Ձայս ինչ լուեալ իմ, յարուցեալ գնացի առ աղայ Յարութիւն, և մեղմիկ իմն հանի ի վեր զբանն, և գիտացի զի ինքն վաղու ևս լուալ գիտէ զամենայն լիովին. և ի յորդոր լինել իմ նմա գրել զայս բան առ վեհն կամ առ Ձեզ. ինքն ամենևին ո՛չ էառ յանձն, այլ յասելն իմ, թէ ևս գրեցից առ սուրբ հայրն իմ, պատասխանեաց՝ այն կամք քո են, իցէ թէ, ասէ, և հայր սուրբն կասկած ինչ տնիցի յանդանօր եղելոյն, և թերևս յարմար դատեսցէ ողջախոհ մտօք ծանուցանել զայս և վեհափառ տէրն: Եւ յայտոսիկ եղելոց հետեւեցուցանէ ևս՝ թե պատճառ յանկարծական զալստեան այսր ստահակ պատանուոյն և յառանձնական խորհրդակցութիւն իւրում ի տան Պ[ատկանովն]ին, ցանկեալ իցեն զայս խորհուրդ շարութեան, գուցէ և տէր պատանուոյն առ այս առաքեալ իցէ զնա այսր առ ի կատարումն խորհրդոցն, և որպէս կարծեմքս, անհնարին է, թէ առանց նորայն գիտութեան և հաղորդակցութեան իցէ այս ամենայն: Այսչափ ինչ գրեալ իմ առ սրբութիւն Ձեր ի վերջ բանիս, խնդրեմ խոնարհաբար ունել ի խորհրդեան մինչև բանն ի վեր ելցէ: Ողջոյն սիրոյ և մեծարանաց նուիրէ արժանապատուութեան Ձերում ի մասնաւորի աղայ Յարութիւն, և խնդրէ մի՛ անխայել զցանկալի գրութիւն Ձեր ի նմանէ,

որով և ևս բաւականացեալ մնամ բարձր արժանապատուութեան Ձերում

խ[ոնարհ] ծ[առայ] Մ[կրտիչ] Ե[կեհեան]

Հայկական ՍՍԻ Պետական կենտրոնական արխիւ,
ֆոնդ № 139, գործ № 798, թերթ 26:

23. 1853 г. августа 22

**СВИДЕТЕЛЬСТВО О СЛУЖБЕ НАЛБАНДЯНА ПИСЬМОВОДИТЕЛЕМ
У НАХИЧЕВАНСКОГО И БЕССАРАБСКОГО ЕПАРХИАЛЬНОГО
НАЧАЛЬНИКА**

Дано сие Михаилу Налбандову в том, что он, приготавливая себя к духовному званию, находился при мне в должности письмоводителя с 17-го июля 1848 по 8-е июля 1853 года, в течение которого времени он вел себя отлично и все возложенные на него поручения исполнял со всею рачительностью и деятельностью. Ныне же согласно просьбе его увольняя от означенной должности, я долгом считаю снабдить его настоящим свидетельством, о чем подписью и приложением поста моего печати удостоверяю. Кишенев, августа 22 дня 1853 года.

Нахичеванский и Бессарабский армяно-григорианский епархиальный начальник, архиепископ и кавалер Մաթթևու

ЦГИАЛ, фонд 880, оп. 5, дело 312, лист 3.

24. 1853 г. августа 31

**ОТНОШЕНИЕ НАМЕСТНИКА М. С. ВОРОНЦОВА КАТОЛИКОСУ
НЕРСЕСУ С РАСПОРЯЖЕНИЕМ ОТНОСИТЕЛЬНО ВЫСЫЛКИ
НАЛБАНДЯНА**

Ваше святейшество,
милостивый архипастырь.

Сделав вместе с сим распоряжение о высылке из Кишинева в Эчмиадзин дьячка Михаила Устаянца, я имею честь сообщить об этом вашему святейшеству.

Поручая себя архипастырским молитвам вашим, с глубо-

чайшим почтением и совершенною преданностию имею честь
быть вашего святейшества покорнейшим слугой, **Воронцов.**

Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 122, վավ. 310ա, թերթ 49:

25. 1853 թ. փետրվարի 9

ՄԻՆՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԵԿԵՆՅԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԳԵՄ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐԱԾ ԲՈՂՈՔԱԳՐԻ ԱՌԹԻՎ

39 փետրվարի յամի ազգական 1302 և փրկչական 1853 ըստ հրամանի նորին կայսերական մեծութեան ի Սինօղի սրբոյ էջմիածնի լուան զյայտարարութիւն Միքայէլ դպրին Նալբանդեանց յ7 դեկտեմբերի անցեալ ամի, ի վերայ հասարակ թղթոյ վասն պատկանելութեան ուսուցչին Նախիջևանայ, Մկրտչին Սիմէօնեանց հոովմէական դաւանութեան և ցուցանելոյ զինքն ի վերին երեսս կեղծ ու պատիր եղանակաւ լուսաւորչակրօն հայ: Հրամայեցին. որովհետև յիշեալ Միքայէլ դպիրն Նալբանդեանց գոյով անձն մասնաւոր, շունի իրաւունս դիմելոյ ի Սինօղս յայտարարական գրութեամբ ի վերայ հասարակ թղթոյ, այլ պարտի մատչիլ ի Սինօղս օրինաւոր խնդրագրութեամբ ի վերայ կանոնադրեալ թղթոյ, և այն ոչ այլ ազգ, բայց եթէ ընդ ձեռն անընդմիջական տեղական հոգևոր իշխանութեան իւրոյ, համաձայն սահմանեցեալ կարգին օրինաց, եթէ յայնպիսին պարունակէ յինքեան զհոգևոր առարկայ, վասն որոյ, առաքեալ զայն յայտարարութիւն ի քաղաքական պօլիցիայն Քիշնեայ հանդերձ մակագրութեամբ ի վերայ այնր յայտարարութեան, խնդրել յայնմանէ վերադարձուցանել զայն Նալբանդեանին, և պահանջել ի նմանէ ի գին անդրոշմ թղթոց ի գործ եղելոց ի Սինօղիս ըստ այնմ առարկայի զ90 կոպ. արծաթոյ և առաքել զայն ուղղակի ի տեղական գանձարանն, զորմէ ծանուցանել նոյն գանձարանին և արքունի պալատն Քիշնեայ:

Անդամք Սինօղի Ղուկաս արքեպիսկոպոս
Սիմէօն Եպիսկոպոս
Մակար Եպիսկոպոս

Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարան, արխիվային բաժին, Սինօղի օրագրութիւնները, թղթ. № 37, վավ. № 92:

26. 1855 թ. մարտի 21

ՄԻՆՈՂԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՅ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԲՈՂՈՔԱԳՐԻ ԿԵՐԱԳՐԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոգևոր կառավարութեան
հայոց Մոսկովու

Կառավարչական մասն Գրիգորեան հայոց Սինօղին սրբոյ էջմիածնի համաձայն օրագրական սահմանադրութեան Սինօղին առաքեալ ընդ այսմ զամբաստանագրութիւն դպիր Միքայէլին Նալբանդեանց՝ բնակողին այժմ ի Մոսկովա քաղաքին, վասն ինչ ինչ ապօրէն արարմանց ուսուցչի հոգևոր ուսումնարանի հայոց նախիջևանու, հանդերձ պատշաճաւորն մակագրութեամբ ի վերա այնր՝ առաջագրէ կառավարութեանդ յանձնել զայն ամբաստանագիր նոյն Նալբանդեանցին, և ընդ նմին պահանջեալ ի նմանէ զ90 կոպէկս արծաթոյ ի գին դրուագաւոր թղթոց՝ ի գործ եղելոց ի Սինօղին ըստ այսմ առարկայի, առաքել զայնս ի տեղական արքունի գանձարանն՝ ուղղակի ի դիմաց դորին:

Ատենադպիր Յովհ. Սիմէօնեան

Չյայտարարութիւն իմ վերադարձուցեալ մակագրութեամբ ի լուսաւորչական Սինօղին սրբոյ էջմիածնի ի մասին պապականութեան Մկրտչի Սիմօնեան ընկալայ յետս, վասնորոյ ստորագրեմ, Մ. Նալբանդեանց.

27 ապրիլի, 1855, ի Մոսկովա

Հայկական ՍՍԻ Ֆոտո-Ֆոնո-կինո դոկումենտների արխիվ:

27. 1853 г. марта 9

РАПОРТ ХАЛИБОВА ТАГАНРОГСКОМУ ГРАДОНАЧАЛЬНИКУ
О ПРОТИВОЗАКОННЫХ ДЕЙСТВИЯХ НАЛБАНДЯНА

Р а п о р т

Ваша светлость при предписании от 30-го октября 1852 года за № 3002 препровождая в подлиннике прошение армянского священника Ильи Шапошникова, поданное Правитель-

ствующему Сенату с жалобой между прочим и на меня по делу его с дьяконом Протопоповым,— предписать изволили по содержанию и с возвращением онаго составить подробное объяснение.

Прочитав эту просьбу, я прежде всего не могу не сказать, что редко из священников (образцов смиренно-мудрых) может найти себе столько врагов из духовных же особ, сколько проситель насчитывает, ибо жалоба его простирается, кроме меня, на членов Нахичеванского Духовного Правления, на патриарха и католикоса всех армян, Эчмиадзинский Синод и прокурора онаго. Собственно на меня священник Шапошников жалуется в том, что я будто бы делал ему притеснения по означенному делу его с дьяконом Протопоповым, при чем помещены в отношении ко мне и разные другие выражения, которые хотя голословны и посторонны от существа дела его с Протопоповым, но заключают в себе поношение меня пред правительством, каковые суть: вмешательство будто бы мое с превышением власти в дела духовные и какие-то произвольные распоряжения мои по г. Нахичевану.

Против каковой жалобы и других помещенных в ней в отношении ко мне выражений,— имею честь объяснить; во 1-х. Из прилагаемого при просьбе священника Шапошникова в копии указа епархиальной Консистории, в котором прописана таковой же Эчмиадзинского Синода, видно, что его сиятельство, патриарх всех армян и католикос Нерсес поручил мне произвести при бытности депутата со стороны Духовного ведомства изыскание о несоответственных духовному сану поступках его Шапошникова (бывшего тогда дьяконом) и армянского дьякона Микаела Устаева, изъясненных в собственноручных бумагах их, при предложении патриарха ко мне переданных, и я, приступая к исполнению таковой порученности его сиятельства, требовал от Нахичеванского Духовного Правления назначения ко мне депутата; но получив в том отказ со стороны Духовного Правления и епархиального начальника, донес об этом верховному патриарху с возвращением порученных мне бумаг. Вот все мои действия по делу священника Шапошникова с дьяконом Протопоповым, из которых вовсе не

видно никаких с моей стороны стеснений для него и означенный приложенный при прошении его Шапошникова указ может служить достаточным с моей стороны оправданием против несправедливой жалобы его на меня; во 2-х я никогда не вмешивался самопроизвольно в какие-либо духовные дела, как об этом может посвидетельствовать и патриарх и католикос всех армян Нерсес, и если я до определения архиепископа Матеоса в должность начальника Нахичеванской и Бессарабской епархии имел участие в каких-либо делах духовных: то в этом состояла воля верховного патриарха, со вступлением же архиепископа Матеоса в эту должность я не имею никаких участия в делах духовных, кроме только исполняю те особые поручения, кои от патриарха на меня возложены будут. Впрочем я никогда не домогался от его святейшества какой-либо порученности по духовному ведомству, а напротив неоднократно убедительно просил его сиятельство освободить меня от оных, как обремененного другими обязанностями службы, однако все мои просьбы верховным патриархом не только не уважены, но напротив его сиятельство, не переставая подтверждать свои порученности, наконец изволил возложить на меня кондаком от 30-го истекшего января за № 38, должность в заведывании как делами в Нахичевани, относящимися до первопрестольного армянского Эчмиадзинского монастыря, так и суммами церквей г. Нахичевана и пяти армянских селений; во удостоверение всего вышеизложенного, покорнейше прошу запросить его, верховного патриарха; в 3-х. Не явная ли клевета — изъяснение священника Шапошникова, что я в предварительной с патриархом переписке мог исходатайствовать у него поручение о произведении над ним Шапошниковым и дьячком Устаевым следствия. Это одно выражение просителя достаточно обнаруживает, до какой степени он находится в заблуждении и самозабвении, что вместе со мною не устрасился оклеветать пред правительством и верховного своего начальника, в поручении им мне следствия будто бы по моему ходатайству; в 4-х. Если епархиальный архиепископ Матеос находится, как пишет проситель, в неприятном отношении пред патриархом, то в этом не я состою

причиною, а сам он священник Шапошников, который, в бытность дьяконом состоя под следствием, посвящен архиереем в сан священника вопреки воле верховного патриарха; в 5-х священник Шапошников также обнаруживает дерзость свою указанием правительству в прощении своем, что в Нахичеване нет властей от правительства, что надзор губернский и Таганрогского градоначальства отдален от Нахичевана, тогда как город Нахичеван управляется властями, верховною самодержавною волею при заселении этого города установленными, и управление это, подчиненное впоследствии времени, по усмотрению правительства, Таганрогскому градоначальству, отстоящему от Нахичевана в расстоянии не более 70-ти верст, находится в ближайшем онаго надзоре; в 6-х жалобщик Шапошников часто повторяет в прощении своем о каких-то самовольных распоряжениях моих по г. Нахичевану и превышении власти, но не имея никаких на это доводов, нашелся только сказать, что я употреблением в рапорте к патриарху слов «мы», «нас» будто бы присвоил себе выражение, предоставленное монаршему титулу. Неосновательность этого изъяснения Шапошникова и намерение его к напрасному оклеветанию меня доказывается тем, что на армянском языке слова эти вообще в переписках употребительны и означают покорность и унижение употребляющего оные; и в 7-х. Не говоря о прежней службе моей, проведенной под ведомством бывших градоначальников, я продолжаю таковую в должности градского главы под непосредственным начальством Вашей светлости уже 9-й год и нет почти того м-ца, чтобы я не являлся к Вам по делам службы, и Вы, светлейший князь, вполне известны о всех моих действиях и распоряжениях по должности. А потому покорнейше прошу Вашу светлость — вместе с представлением куда следует настоящего моего объяснения не оставьте присовокупить сведения о моих действиях по должности. А как выражения священника Шапошникова насчет произвольных будто бы действий моих, превышения власти и проч. заключают в себе оскорбление чести моей, то я не премину войти на него к верховному патриарху с представлением об оказании мне законной защиты и вместе с тем имея просить от

его святейшества увольнения меня от возложенных на меня обязанностей, дабы освободиться на будущее время от подобных несправедливых и поклепных жалоб, от неблагонамеренных людей возникающих.

Подлинное прошение священника Шапошникова с приложениями при сем возвращается.

ЦГА Армянской ССР, фонд 139, дело 1560, листы 8—13.



2.

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
(1853—1857)



28. 1853 թ. օգոստոսի 8

ՄԱԳԻՍՏՐՈՍ Մ. ՄՍԵՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Մ. ՎԵՀԱՊԵՏՅԱՆԻՆ՝
ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Առ Մատթէոս արքեպիսկոպոս առաջնորդ
Պեսարապիոյ և Ն.-Նախիջևանի

Ընկալեալ զտողեալն յՑ յուլիսի զարժանայարգ գրութիւն
Չերոյին սրբազնութեան, և ծանօթացեալ այնու ցարգ անծանօթին
ինձ՝ թղթարերի՛ և ապա հասու ևս եղեալ ի նորուն բերանացի
պատմութենէ դիտաւորութեանցն Չերոց վասն նորա, պարտ անձին
վարկանիմ տալ զհետագայ տեղեկութիւնդ:

Ճեմարանն կազարեան ունի իրաւունս ի հարցաքննութիւն
ընդունելոյ միայն զաշակերտեալսն ի ծոցի իւրում: Վասն որոյ վար-
ժեալքն յայլ ուսումնարանս կամ ի դպրոցս եթէ կամիցին ստանձնել
ի ճեմարանիս զպաշտօն ուսուցչի արևելեան լեզուաց՝ յորոց մի է
և հայկականն, պարտին զօրինաւոր վկայականն վասն ուսման
իւրեանց ունել յայնց ուսումնարանց՝ յորս վարժեալքն են և եթէ չու-
նիցին զայն, պարտին նախ հարցաքննիլ ի համալսարանին Պ. Բուր-
գայ, և ապա անդուստ առնուլ զվկայականն, որպէս և ոմն ի նորեկ
վարժապետաց տաճկական լեզուի շունելով զպահանջեալ վկայա-
կանն, չոգաւ աստի ամսովք ինչ յառաջ ի համալսարան անդր և
հարցաքննեցաւ ի տաճկական լեզուի, և ունի դարձեալ հարցաքննիլ
յայլ ասիական լեզուա, ևս և ի ուսացն: Այսոսիկ հանգամանս
իրացն հայեցեալ նախայիշեալ թղթարերն հարկեցաւ զիմել փու-
թանակի ի Պ. Բուրգ, ակն ունելով զիարդ և իցէ տնօրէնութեամբ և
հրամանաւ հոգաբարձուի ճեմարանին ըստ Չերում յանձնարարական
գրութեան առ նա՝ կատարումն տալ գործոյն: Եւ արդարև, չել ի գերև
ակնկալութիւն նորա, զի (որպէս զրէ նա ինքն ի նամակին, որ առ
իս յՅ-էն ամսոյս) բարեսիրտ հոգաբարձուն յարգելով զխնդիր Չեր՝
զրեաց հրաման ի կառավարութիւնն ճեմարանի ընդունել զնա ի

Ն Այն է՝ Միրայէլ դպրի Նախիջևանցոյ, որոյ տոհմանուն զառաջինն էր
«Ուստայեանց» և ապա փոխեալ էր ի «Նալբանդեանց» (Ծանոթությունը Մսեր-
յանինն է):

շարս ուսուցչաց հայկական լեզուի: Հրամանագիրս այս հասնել առ իս այսօր՝ տուաւ ի կառավարութիւն անդր: Այլ զի չէ աստ այժմ կառավարն ճեմարանի (զի գնացեալ է ի գիւղն իւր), հարկ ի վերայ կայ սպասել դարձի նորա առ ի գործ գնելոյ զհրամանն զայն: Իսկ ընտրեալն ի պաշտօն ուսուցչութեան՝ կարէ ցայն ժամ մնալ Պ. Բուրգ յաւարտել զիւր քննութիւնն: Յետ այնորիկ ի վերադառնալն այսր, յայտ է թէ ունի նա ուսուցանել զլեզուն հայոց յայնստիկ գասարանս, յորս դասատու կարգել հաճեցի կառավարիչն ըստ խորհրդոյ տեսչին՝ որում յանձնէ ուսումնական կարգաւորութիւն:

Մնամ... Մ. Մսերեանց

Ի Մոսկոս

Հայկական ՍՍԻ Պետ. Մատենագարան, արխիվային բաժին, Մսերյանների արխիվ, թղթ. № 207, վավ. № 1972:

29. 1854 թ. մայիսի 8

ԽԱՒԻՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍԱՐԳԻՍ ԶԱՒԱԼՅԱՆԻՆ
ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Բարձր արժանապատիւ
սուրբ հայր իմ!

Զցանկալի գրութիւնս Ձերում սրբութեան, գառաջինն ի 28 փետրվարի ստրախավօյ, և զ10-ին և զ12-ին մարտի, և զ24-ին ապրիլի զամենայն ամբողջապէս ստացեալ եմ, և տեղեկացեալ ամենայնի գոր գրէքդ: Այլ յառաջ քան զտալ պատասխանիս գրութեանցդ նախ խնդրեմ զներումն ցայս վայր յերկարելոյ ծուլութեամբս զպատասխանատուութիւն նորից նամակացդ. ծուլութեամբս ասեմ, սակայն համարձակիմ ասել ո՛չ առ ծուլութեանս այնչափ, որչափ առ մեծի զբաղանացս յանցեալ 2 ամիսս ի գալստեան կնեազ Վարանցովին, զի նա շորիցս զառանձին սուրհանդակս իւր ուղղակի առ իս առաքեաց, թէ առ քեզ ունիմ իջեանել, թողեալ ի բաց զբաղաքահան զլուխ և զայլ իշխանատրս. վասն այնորիկ ամենայն հոգ պարտաւատշաճ ընդունելութեան յիմ վերայ գոլով, պատճառ եղև յապաղման լրութեան պարտուցս առ սրբութիւն Ձեր: Այլ փառք տեսառն ամենայնիւ կատարեալ ի մէնջ ընդունելութեամբ, և ի նորին գերազանցութեան կողմանէ լիովի գոհունակութեամբ, եղաք

զնա ի ճանապարհ ի 21 ապրիլի: Այլ իմ առ Ձեզ կրկին խնդիր այս, զի Դուք ներող գտեալ թէ՛ և ծուլութեան իմոյ մի՛ ընդհատ արասջիք յինէն զգրութիւն Ձեր:

Ցաւեցայ յոյժ ընդ անտանելի դառն ճանապարհորդութեան Ձեր, որպէս պատմէքդ՝ յայտ իսկ է՛ զի միայն ակներև սքանչելեօք պահեալ է զձեզ հզօր աջ տեսառն ի մահահրաւէր արկածիցդ:

Ի 10 մարտի գրութեան Ձերում գրէք, թէ կոնսիստորն առաքեալ է զձեռագիրն պարոն Նաթալովի, բայց այդ բոլորովին սուտ է, և մինչև ցայսօր չեն ուղարկեալ, այլ կարելի է զձեզ խաբելով իմն այդպէս հաւատացուցեալ իցին: Ամաշեսցե՛ն թշնամիք մեր զբախօսք և նանրախորհուրդք, զի զայդպիսի զուր զրպարտութիւնս կուտեն ի վերայ իմ:

Ցանկալի էր ինձ գիտել, թէ ա՛րդեօք ուէզդնի սուղն պահանջեալ է ի Ձէնջ զգազափար գրոյ տէր Պետրոսի Պատկանեան, որ առ եղբայր իւր, վասն զի ես այնպէս պատասխանեցի՝ թէ առ Ձեզ դտանի այնր դաղափար:

Վեհափառ կաթուղիկոսին տակաւին շեմ գրեալ ինչ, այլ ի ներկայ աւուրս ունիմ գրել, և առաքել նաև զպատկանեալ դրամս սրբոյ կաթողոցն ապա և զայն 100 մանէթն հաշուեալ՝ ծանուցից նորին վեհափառութեան: Զոր ինչ գրեալն էիք վասն տպագրութեան մատենին (զոր մոռացեալ եմ յանուանէ, թէ զի՞նչ մատեան էր այն) առաքել զպատկանեալ 300 մանէթ փողն, կամ առ Ձեզ կամ ի Մոսկով, ես յամենայնի պատրաստ եմ կատարել և հատուցանել զայդ դրամ ո՛ւր և իցէ հրաման Ձեր, այլ առ ի կրկին չլինելոյ ծախուց ճանապարհին հարցանեմ զՁեզ, թէ ա՛րդեօք շիցէ յարժարագոյն յինձէն ուղղակի առաքել առ Մսուր վարժապետն, զի իցէ թէ հարկ լիցի ինչ միւս անգամ ունել այսպիսի գրութիւն ընդ նմա. ուստի խնդրեմ եթէ այսպէս մինասիպ իցէ, ուրեմն յուղարկեսջիք ինձ օրինակ մի գրոյ, թէ ո՞րպէս պարտ է գրել առ նա այս առաջին անգամ, ապա թէ ո՛չ առաքեմ առ Ձեզ որպէս կամիք արասջիք այնպէս:

Զիք Միքայէլն Ղազարեան որպէս լուաք յականատեսից՝ կա ի Մոսկով քաղաքի և շրջի համարձակ (միայն արգելեալ ի պաշտօնէն) ունելով զքնակութիւն և զվարձն ի վեհազնեայց: Բայց որովհետև սրբութիւն Ձեր արար յառաջագոյն գրութիւն զնմանէ առ զանազան երևելի հայազգի անձինս Մոսկովու, ինձ թուի, թէ չէ պարտ Ձեզ լուել տակաւին, այլ գրել դարձեալ առ նոսա և իմանալ զիսկական պատճառ այսօրինակ խափանման հրամանաց վեհափառին,

և պահանջման դատաստանական տեղեաց, և մնալ լրբին այնորիկ այնպէս հետեալ և անընկճելի, և այսու մնամ բարձր արժանապատուութեան Ձերում

ամենախոնարհ ծառայ [Խալիբյան]

Հայկական ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 798, թերթ 27:

30. 1854 թ. մայիսի 26

ՍՍ.ԲԿԻՍ ԶԱԼԱՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԽԱԼԻԲՅԱՆԻՆ
ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ձերդ ազնուութեան
ողորմած տէր

Ստացալ զպատուական նամակ Ձեր որում և անձկանօք սպասէի. յաղագս լսելոյ իմ զՁեր առողջութիւն ուրախացաւ անձն իմ զլխովին և տացէ աստուած լինիլ Ձեզ ի բարօր և յերջանիկ կացութեան ի պարծանս ազգի:

Տեղւոյդ իրաւարանն պահանջեալ էր յինէն զպատճէն նամակի Պետրոս քահանայի, զոր և ես առաքեցի ի նոյն իրաւարանն:

Յաղագս չի՞ք պատանեկին բազում անցք անցին, զորս յայտնեցի նորին վեհափառութեան ի գիտութիւն: Լիրբն այն ի բազում տեղիս ղօղանջեալ է զիս և զՁեզ ցուցեալ է ինքեան թշնամի, բայց իմով գրութեամբ վեհազնեայք ծանուցեալ զրնութիւնս նորին, զարձուցեալ են զմիտս իւրեանց այլ իմն կերպ: Լիրբն այն հրատարակեալ է, թէ կաթողիկոսն վասն այն հալածէ զինքն, զի ինքն է եղեալ պատճառ պատկի կազարեանց և Բարեկոնի սրբազան աստուածն վասն նոյն լրբին խնդրեալ է, ուտի հա՛րկն է, զաստիճան «Բեգիտտաթօնի»։ միայն շուտով յայտնի ունի լինել, թէ նա ծնունդ է անհարազատ, որպիսիքն իրաւամբ մերժին յօրինաց:

Ես չունէի ժամանակ գրելոյ զնամակ առ Ձեր ազնուութիւնն, ըստ որում, յութէն մարտի ցայսօր անդադար աշխատեալ ի շինութիւն և ի նորոգութիւն հոյակապ շինուածոց նորին վեհափառութեան, սկսեալ ի 4 ժամէ աւաւօտու ցժ ժամն երեկոյցին ո՛չ հանգրստանամք:

Տեղւոյ ղուրբնատօրն թախանձազիր աղերսանօք խնդրեաց յինէն շնորհել զվիրաւորեալ զօրաց զտուն ի բնակութիւն և այն օգ-

տաւէտ զնով արքունական գանձու 900 մանէթ ևս բարեհաճեալ հանեցի իտանէ զաղայ Աստուածատուրն և ետու կայսերական զօրաց, զի աղայ Աստուածատուրն նստէր ի տարին 200 մանէթիս:

Բարօք առնէք իմէ ղ300 մանէթ ուղղակի առաքեսցիք առ Մսուր վարժապետն և յայտնէք նմա զՁեր ազգասիրութիւն, որով կամիր ի գերեզմանէ յարուցանել զթանգազին արգասիս նախնեաց մերոց թաղելոց ի փոշի մոռացութեան, այն է բազմաց ցանկալի Ուխտանէս պատմագիրն որպէս և ես յիմմէ կողմանէ զոր ինչ արժանն էր գրեցի. ևս զօրինակ նամակի ի Ձեր կողմանէ չգրեցի, յուսալով զի հոգւով սիրեցեալ բարեկամն իմ Մկրտիչ պատուական վարժապետն ունի գրել ըստ պատկանելոյն:

Ձերոյին զերազանցութեան խոնարհ ծառայ Սարգիս վարդապետ Զալալեանց

Հայկական ՍՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 798, թերթ 34:

31. 1854 թ. օգոստոսի 5

ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԳՐԱԿԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ՝
ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻՆ ԷՋՄԻԱՍԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ներսէս ծառայ Քրիստոսի... մեծարու գերազանցութեան տեանն Յոհաննիսի Յովակիմեան գրութիւն առ մեզ ի 12 փետրուարի այսմ ամի համարաւ 58, ընկալեալ ի մարտի 7, և հասու եղեալ պատրաստութեան կամաց ձերոց առ փոխարինարար կատարումն կամաց նորուն սրբազնութեան վիճակաւորի նոր-Նախիջևանայ և Բեսարաբիոյ Մատթէոս եպիսկոպոսի ըստ նորուն հաճոյից, սպասելով մեր գրեցելոցն ձեօք հաւաստի տեղեկութեանցն, անագան ի 24 յունիսի ընկալեալ զգրութիւն նորուն պայծառափայլութեան Տաղանթօզու քաղաքապետի համարաւ 3698 և ծանուցեալ յաղագս յայտնեցելոցն նմա ի Մոսկովու քաղաքական կառավարութեան համաձայն գրեցելոցն մեզ ի ձեր գերազանցութեան, իսկապէս իմով ցաւակցութեամբ կենդանեաց և ննջեցելոց բարեհամբաւեալ տոհմի Եղիազարեանց՝ հարկադրեալ գտանիմ այսու մերով գրութեամբ ընթեռնուլ ձեզ զնոյն գրութիւն ձեր գերազանցութեան մեզ՝ որոյ սկզբնաւորութիւն է գերագոյն յարգանօք մերում կողմանց:

«Զերդ վեհափառագոյն տէրութեան ամենաողորմած հայր հոգևոր»: Իսկ, հետեանքն ամենևին անհամաձայն այնոցիկ՝ անպատկան և անյարիր վեհափառագոյն տէրութեան և ամենաողորմած հոգևոր հայրութեան շարահիւսեալ նախ ամենազուարճ հռչակահարութեամբ զպանծալի պարծանսն ձերում զմայլեցուցիչ լսողաց սքանչելի ներգործութիւն և հետևեցուցեալ այնմ մինչ իսպառ անխնամ ձեր բանակոծութեամբ զի են քղտցեալ անարգագոյն ծառայի ամբարշտութեամբ ապացուցեալ սաստկատապարտ յանցաւորութիւնսն վեհափառագոյն տէրութեան և անողորմ հոգևոր հայրութեան մեր. բացածանուցանէք այսպէս՝ «Մտալեալն զըշտութեամբ առ նորին սրբազնութիւն արքեպիսկոպոսն Մատթէոս՝ վիճակաւորն մեր, Միքայէլն Նալբանդեանց, յանցեալ ամին դիմեալ ի Քիշիւնա յաստ Ս. Պ. Բուրգ և յառաջադրեալ ինձ զտուեալն ինքեան ի յիշեալ արքեպիսկոպոսէն զհաւանական վկայագիրս և զյանձնարարութեան նամակ, խնդրեաց ընդունիլ զինքն ի վարժապետութիւն հայոց լեզուի ի Լազարեանցս ճեմարանի Արևելեան լեզուաց: Պատանին այն նմուտ ի քննութիւն հիմնաւոր հայոց լեզուի աստ ի Ս. Պ. Բուրգ յարքունի ունիվերսիտետն՝ յորում վկայեցաւ նա լինիլ ըստ շափու հմուտ ընդ հայկականին և ուսաց լեզուի: Յիշեալ Նալբանդեանցն ըստ վկայութեան շափարեբական թղթոցն զոր ունէր առ ինքն՝ ըստ որում էր նա յաշխարհական կոչումն, մեք զայնոսիկ վկայականսն նորա և զտուեալն ինքեան ի կառավարութեան ունիվերսիտետին զվկայականն՝ ներկայացուցեալ ի տեսութիւն գլխաւոր կառավարչին ճեմարանի մերում զենեբալ ատիւտանդ զրաֆ Օսլովի, զոր և նա մատուցեալ առ կառավարիչ Սէնատն վասն հաստատութեան նոյն Նալբանդեանի ի ծառայութիւն ուսումնական մասին ի ճեմարանի անդ:

Այժմ կառավարիչ ճեմարանին ծանուցանէ ինձ, որպէս թէ՛ Մոսկովու քաղաքական դատաստանատունն ի հետևումն պահանջողութեան տեսուն Կովկասեան տեղապահի՝ խնդրէ զՆալբանդեանն վասն առաքելոյ ի Թիֆլիզ առ ի դատել զնա. իսկ թէ՛ առ ինչ օրինաց ընդդէմ կենցաղավարութեանց նորա՝ շփոթեմք: Մոսկովու կառավարիչն զայն յայտ առնէ, որպէս թէ՛ պահանջողութիւն նորուն պայծառութեան կենալ Միխայէլ Միմնիչ Վօթօցովի հիմնեալ է ի վերայ կամաց ձեր վեհափառութեան: Գրեն և ինձ զի ըստ վկայութեան բարեկարգիչ կառավարութեան Մոսկովու ուպրավի և բլագոչինի երեւեալ էր զի Նալբանդեանցն այն զորով անառողջ և յոյժ նուազ՝ ո՛չ կարէ նա այնքան ընդ երկար ճանապարհորդութիւն կատարել և

այն ըստ օրինակի քրեական բանտարկեալ յանցաւորաց հալածանօք հանդերձ: Բաց յայսցանէ՛ Միքայէլ Նալբանդեանցն թէպէտ յառաջին կոչումն իւր էր քաղաքացի, այլ այժմ ըստ կառավարչութեան Սէնատին ի նոյն միջոցի արձակեալ է նա յայնմ քաղաքական կոչմանէ և ո՛չ ենթարկի դաւադրութեան հոգևորականաց զի հաստատեալ է նա յուսումնական ծառայութեան, և արձակեալ գտանի նա այժմ ի քաղաքական ասացեալ կոչմանէ»:

Եւ ի վախճանի յայտնութեանց այս ամենայն բազմաջան աշխատութեամբ մեծադործութեանց ձեր կամ ձերայնոց՝ հարուստ հանգամանօք ջատագովութեամբ ձերում կարծեցեալ յաղթանակի՝ բարեհաճեալ էք՝ նաև վասն ձեօք դատապարտեալ անիրաւութեանցն մերոց պահանջել ի մէնջ՝ «Յայտնել ձեզ մանրամասնաբար և հիմնաւոր հանգամանօք՝ թէ՛ զի՛նչ իցեն ընդդէմ օրինաց յանցանք և կենցաղավարութիւնք Նալբանդեանցին և ի հաստատութիւն այնոցիկ որպիսի գտանիցին ճշմարիտ ապացուցութիւնք, որ եթէ իրաւի վկայեալ յանցաւոր իցէ Նալբանդեանն, արդարապէս ենթարկելի է նա ընդ պատժովք յուղղութեան ինքեան, իսկ եթէ ո՛չ ըստ խղճի մտաց ապօրէն է, ողորմած տէր՝ հալածելն զնա ի Տիֆլիս, է առիթ բամբասանաց վիճակի հոգևորականութեան ազգի մերում: Գրեցէք խնդրեմ, Թիֆլիզոյ քաղաքական կառավարութեան, զի նա յիւրմէ կողմանէ հաղորդեցէ Մոսկովու քաղաքական կառավարութեանն, և յանձնել զՆալբանդեանն հաստատեալ դատաստանատեղին ուր քննեն զյանցանսն և զգործ նորին՝ թէ՛ ճշմարտեացին ի վերայ նորա յանցանք՝ յայնժամ անկանի նա ընդ պատժովք, իսկ թէ՛ ո՛չ, սրբազնագոյն տէ՛ր, այսու եղանակաւ ընդ ձեռն նորուն պայծառափայլութեան պահանջելն ձեր զնա ի Թիֆլիզ մերով որդիական հաւատարմութեամբ հաւաստի առնեմ ձեզ՝ համարի իսպառ անպատշաճութիւն և անվայելչական կարգի ընթացից հոգևորական դատողութեան՝ անհամաձայն օրինաց և ի վերայ յիշեալ հրովարտակի Սէնատին: Առ այս հաւաստի լեբուք, վեհափառ տէր, զի ես յիմոյս կողմանէ թողեալ յայնժամ զպաշտելի ճշմարտութիւնն՝ ո՛չ պաշտպանեցից զյիշեալ Նալբանդեանն, այլ ի գործ եղեալ զկարելի ներգործութիւնս իմ ըստ յանցանաց նորա առանց նուազ ինչ բացատրութեանց տացից ենթարկել զնա ընդ արժանաւոր պատժօք, նախ առ այն՝ զի ըստ նորագործ կենցաղավարութեանցն, գտցէ նա արժանաւոր հատուցումն, և երկրորդ՝ ևս՝ զի օրինակ առցեն ամենայն թերահաս որդեգիրք ճեմարանին մերոյ և այլ ամենայն ծառայողք անդէն յուղղութեան բարուց իւրեանց և վա-

բուց, և ի զգուշութիւն յապագայ ժամանակս, որպէս և ամենեցուն: Ընդ ամին եղեալ և զօրինակ հրովարտակի կառավարիչ Սէնատին, առաքեմք առ ձերդ վեհափառութիւն ի տեղեկութիւնս:

Այսմ ձեր գրութեանց ի ձեր գերազանցութեանց խնդրեմ վկայել, թէ օրէնք աստուծայինք կամ օրէնք եկեղեցականք կամ քաղաքականք ունիցին ներել ումեք գրել առ ընտրեցեալն ի միլիօնաւոր միարանութեանց հոգևորականաց ընդհանուր ազգի հայոց՝ զանազանեալ յամենից աստիճանաւորաց եկեղեցականաց հայկազեանց, և համաձայնութեամբ օծելոյն աստուծոյ՝ իւրոյ կայսերական մեծութեան ամենայն Ռուսաց՝ վերապատուեալ օծութեամբ գազաթանն սրբարար մեռոնաւ կարգեցելումն զլուս համազգական եկեղեցւոյ հայկազանց՝ և ընդհանրական առաջնորդ հաւատոյ և օրինաց քրիստոնէութեան ամենաբարեպաշտ սրբոյ առաքելական եկեղեցւոյ վիճակեցելոյ սրբոյ լուսաւորչացն հայոց Թադէոսի և Բարդուղիմոսի առաքելոցն Քրիստոսի, և աթոռակալի նոցա սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի, որոյ ի սակի և տուաք ի սկզբնաւորիւն նոցա զայս ձեր գրութիւն ո՛չ անծանօթ ցուցանելով զձեզ յարգի կոչմանցն մերոց պահպանութեամբ գերաթանաւորութեանց կամ վերտառութեանց [...] յատկացուցելացն հայրապետ, հօտապետ, կաթողիկոս և պատրիարք կանխաձայնէք նովին վերտառութեամբ. Զերդ վեհափառագոյն տէրութեան, ամենաողորմած հայր հոգևոք, այլ անդէն առ նմին ի բաց մոռացել զամենայն արժանաւորութիւն այնոցիկ կոչմանցն ձերոց՝ հաղթահարել յօտար կրից ձեր կամ ձերայնոց՝ անցեալ շանցեալ զամենայն իրաւամբ ձեր և ընդհանրական գլխոյն եկեղեցւոյ Հայաստան ազգի յառաջանայք յայն ամենայն անվայելչականսն ձերում գերազանցութեանց մինչև ո՛չ անարժան համարիլ զզանազան գերաթան անուանակոչութեամբ վերապատուեալ զլուսն եկեղեցւոյ հայոց անուանել անծանօթ պարտաւորութեանց ամենից իւրումն կոչմանց՝ հալածիչ, ամբարիշտ, անիրաւ, տգէտ օրինաց և կանոնաց հաւատացելոց իւրումն եկեղեցական իշխանութեանց, և հրաւիրել զնա ապացուցական հաստատուն վկայութեամբ առաջի առնել ձերում գերազանցութեան զլանցանսն եկեղեցական դպրի Միքայէլի Նալբանդեանց, և որպէս ո՛չ պատկանեալ մերում հոգևորական ատենից, յառաջագրել, գրել քաղաքական կառավարութեան Թիֆլիզոյ, զի և նա յիւր կողմանէ հաղորդեսցէ Մոսկովու քաղաքական կառավարութեանն, վասն յանձնելոյ զնա ի հաստատեալ դատաստանատեղի: Զկամիմ գտանիլ մեղադիր ձերում գերազանցութեանցն, զի քաջածանօթ գտանի ինձ պարզութիւն և բա-

րութիւն հոգւոյ ձերում գերազանցութեան: Բայց զի անզանցառնելի պարտաւորութիւն մերում պաշտօնի ո՛չ ներէ մեզ մերով անհոգութեամբ հզօրացուցանել զամբարշտութիւնսն մերում տեսութեանց յանձն եղեալ եկեղեցականաց մերազանց ցայն վայր՝ մինչև խորտակմամբ քաղցր լծոյն քրիստոնէական կապելոց ի պարանոց իւրեանց՝ շարաշար յանդգնութեամբ, յառաջանալ ըստ կամս անձանց գործել զամենայն անօրէնութիւն՝ արհամարհութեամբ ամենայն արժանաւորութեանց և եկեղեցական նախամեծար իշխանութեանց, որոց յանդուգն ամբարշտութեանց, գայթակղութիւնք համօրէն ազգի հայոց դատապարտ կացուցանեն և զմեր վերերեւեալ անհոգութիւնն ակնկալութեամբ անձնական օրինական դատախարակութեամբ համոզելոյ զամբարշտութիւնն ամբարշտաց՝ ճանաչել զանձնական իւրեանց պարտաւորութիւն կալոյ ի հնազանդութեան օրինաց և պատուիրանաց աստուածայնոց: Իսկ զի ընդունայնացան այնպիսի մեր ակնկալութիւնք, զի մի՛ տարապայման մերով երկայնամտութեամբ զանձն և զանձնական պարտաւորութիւն մեր համազգական աստուածային՝ աններելի դատապարտութեանց ըստ մարգարէական ձայնարկութեանցն թախանձեմ զձեր գերազանցութիւնն ո՛չ լինիլ անխնամ ձեր ընդ մեզ վաղնջական հայր[ական] սուրբ սիրոյն, և ո՛չ արժանաւոր ձերում գերազանցութեան ճանաչել, փոխանակել զեպիսկոպոսապետն ընդհանուր հայոց ընդ միոյ վիճակաւորի նորնախիջևանայ և Բեսարաբիոյ սրբազան Մատթէոս եպիսկոպոսի ձեզ քաջածանօթ, և ձէօք փորձառեալ անծանօթին պարտաւորութեանց իւրումն կոչմանց՝ անխնամակալ շեն եկեղեցւոյ հայրենեաց և կանոնաց եկեղեցականաց, և ամենեին անարժան համարել վասն Միքայէլ Նալբանդեանց անզգամեալ դպրի յանձնեցելոյ դատողութեանց կայսերահրաման ատենի Սինօզի էջմիածնի պարտաւորել զմեզ խնդրել զգերազօր հովանաւորութիւն իւրոյ կայսերական մեծութեան առ պաշտպանութիւն մերում կաթողիկոսական և պատրիարքական արժանաւորութեանց, զոր ո՛չ բնաւ ներեցից ինձ թողուլ իմով անհոգութեամբ ընդ ոտիւք Մատթէոս եպիսկոպոսի և հարազատի նորա Միքայէլ աղճատեալ դպրի՝ որ ի վեց ամաց հետէ գտանի հանդիսագիր իւրումն հանդգնութեանց օժանդակութեամբ հանձարարողին զնա պաշտպանութեանց ձերում գերազանցութեան, զոր գրէ որպէս պաշտպանեալ էք ըստ այսմ ձերում գրութեան՝ ունիցիք պաշտպանել դարձեալ, և ո՛չ բարեհաճեսցիք համաձայն խոստմանցն ձերոց վասն առաքելոյ զնա ի Սիպիր՝ առաքել զնա ի դատաստան Սինօզի էջմիածնի: Մեք յայնմհետէ մնամք պարտաւոր ի գործ զնել

զամենայն զպատկանեալան մերում կարողութեանց յազազս պահպանութեանց գերարժանաւորութեանց եկեղեցական բարձրագոյն իշխանութեանց ընդհանուր ազգի հայոց՝ և ամենից աւանդիցն մեզ աստուածայնոց ի համապատշաճ դրութեան իւրաքանչիւրոց անվտանգի մերոց անհոգութեանց ըստ աստուածահրաման սեպուհ պաշտպանութեանց աւանդապահից:

Ողջ լէ՛ր, գերազանցութեան ձեր, մշտապարտաւոր ամենահարազատ բարեկամ և հանապազորդեան աղօթարար կաթողիկոս և պատրիարք ամենայն հայոց **ՆԵՐՍԷ**

Հայկական ՍՍԹ Պետ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 122, վազ. № 310ա, թերթ 95—96:

32. 1854 թ. հուլիսի 27

**Մ. ՎԵՀԱՊԵՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԽԱԶԱՏՈՒՐ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ՝
ՆԱԼԲԱՆԻՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՂԱԾ ԹՇՆԱՄԱԿԱՆ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ**

**Ձերոյին գերազանցութեան վեհագն աղա
Խաչատուր Յովակիմեան
Ողորմած տէր.**

Ուրախութեամբ հոգւոյ շնորհաւորելով զբարէհաջող եկաւորութիւն Ձերդ գերազանցութեան հանդերձ աստուածախնամ գերդաստանաւ ի հեռուոր վայրեաց յօրհնեալ բնակութիւն Ձեր աղօթեմ յամենայնի:

Ահա և ծանուցանեմ հարկաւորարար, զի՛ ի գրութեանց Նալբանդեանի նախկին քարտուղարի իմոյ վաղ ուրեմն Եհաս ի ծանօթութիւն իմ թէ՛ արք անբարեմիտք մարթացան վերջապէս հաւատարիմ առնել գերազանց աղա Իւան Եակիմիչն և զգերազանց աղա Իւան Դաւիթիչ Դելանովն յայնմ թէ՛ Նալբանդեանն երկբայելի որ է՛ ի բարոյականութեան մասին, որպէս թէ՛ յանձնեցի ես զնա ի պաշտպանութիւն Ձերդ գերազանցութեան և նոցա հակառակ իմոյ սեպհական կամաց և որպէս թէ՛ բարեմիտ գրութիւնք իմ զնմանէ յառաջացան պատահմամբ առանց յատնի քննելոյ զճշմարտութիւնն:

Յաւեցուցիչ եղեալ մեզ սուտ բարուրանդ այգորիկ միանգա-

մայն զրկեալք յօրինաւոր ապացուցական փաստից, բայց ես որպէս աչք՝ սուրբ պահող յամենայնի զխիղճ իմ և իբրև անձն հոգևոր զպարտականութիւն իմոյ սրբազան աստիճանի ճանաչող, ի հակիրճ բանս ծանուցի գերազանց ազա Իւան Եակիմիչի զճշմարտութիւն գործոյն և ապացուցի ընդ նմին զլրոցն զու յիմարութիւն, ապա ո՞ր բանք ի գործումս յարգելի պարտ էին լինել և զնել ի ծանրութիւն կշռոյ, բայց եթէ այնմ որ իբրև իշխանաւոր ունէր զլայն հնար և ժամանակ ճանաչելոյ զորպէսն ինքեան ծառայողի յընթացս ամբողջ հինգ ամաց, ըստ այնմ գրեցի գերազանց աղա Իւան Եակիմիչին, թէ՛, որովհետև պարոն կառավարին ճեմարանի յաղթահարեալ ի թշնամական բանից թշնամեաց Նալբանդեանի, զինաւորեալ է՛ ընդդէմ նորայ և ո՛չ կամի անդրէն առ Նալբանդեանն զարձուցանել զնորա նախկին պաշտօն ի ճեմարանին, վասն որոյ հրամայեմ Նալբանդեանին մտանել ի համալսարան և այնու նպատակաւ խնդրեցի ի գերազանց աղա Իւան Եակիմիչէ տալ Նալբանդեանին իբրև առն գտանեցելոյ դեռեւս ընդ տեսչութեամբ կառավարութեան ճեմարանին զվկայագիր պատշաճեալ, որպէսզի բացցի առաջի նորա ճանապարհ լսել զղասս համալսարանին մինչև ցմտանելն նորա ի կարգս օրինաւոր ուսանողաց:

Որպէս վկայութիւն իմ զարդարութեանէ Նալբանդեանին հակառակ վատասողաց զնմանէ, ըստ այնմ խնդիր իմ յարաբերեալ առ ապագայ տնօրինութիւն կենաց Նալբանդեանին, մնաց ցայսօր առանց յարգանաց և դրութիւն Նալբանդեանին առընթեր ճեմարանին հազիւ թէ՛ լաւ քան զդրութիւն այնմ, որ փակեալ պահի ընդ հարկաւ բանտի:

Ես լսեմ որպէս թէ՛ պարոն կառավարին ո՛չ թոյլատրէ նմա ելանել ի Պետերբուրգ յազազս տեսաւորութեան ընդ պարոն հոգաբարձուին, մանաւանդ վասն խնդրելոյ զվկայագիր յազազս լսելոյ զղասախօսութիւն համալսարանին ցկէս ամ այսր տարւոյ, և նորին գերազանցութիւն աղա Իւան Դաւիթիչ Դելանովն առ որ Նալբանդեանն աղաղակեալ էր յազազս այսր՝ պատասխանեալ է՛ լոռութեամբ և եթէ:

Ի վերտողելոցս երևի յայտնի թէ՛ գերազանցութիւն նորին աղա Իւան Դաւիթիչի առեալ ի յարգանս զպղտոր և զանհաստատ բանս թշնամեաց Նալբանդեանի և զմեր այնքան գրութիւն համարեալ կարծիքական:

Շատ զարմանամ ողորմած տէ՛ր թէ՛ որպէս անլիշելի եղեն ի նորուն գերազանցութեան այն ամենայն բանք իմ զորս ի սկզբան

գրեցի ես ինքեան, երբ Նալբանդեանն առաջին անգամ յայտնեցաւ նորին գերազանցութեան ի Պետրիբուրգ, ի նմին նամակի ծանուցի ես և զպատճառ հեռացուցանելոյ զՆալբանդեանն յինէն, գուշակելով ընդ նմին զայն ամենայն որ պարտ էր լինել առ յապայ, որպէս և եղև իսկ:

Նորին գերազանցութիւն յայտնեալ էր ինձ ընդ ձեռն Նալբանդեանին թէ պատրաստ է ի պաշտպանութիւն իւր ընդունել զնա, որ յանիրաւի հալածեալ լինէր, բայց յետ ո՛չ բազում ժամանակաց զկնի այնր՝ կառավարիչն ձեմարանի, ի հարկէ ո՛չ առանց թոյլտուութեան իւրոյ բարձրագոյն իշխանութեան, եղև նմա հալածիչ, որ որպէս թէ՛ գտանէր յանձնեալ ինև ի պաշտպանութիւն գերդաստանից Ձերոց ամենից օրհնեալ ազգատոհմութեանց, դուք ինքնին տեսեք ողորմած տէ՛ր արդէն զգրութիւն որպիսութեան նորա, թո՛ղ խօսեսցի փոխանակ իմ գործն կենդանի:

Առեալ ի մտադրութիւն զգառն գրութիւն Նալբանդեանի ես հարկաւոր համարեցի անհանգիստ առնել զՁեր գերազանցութիւն գրելով զայս նամակ ի տեղեկութիւն, յորում բացերև զնին բանք իմ վերաբերեալ առ այս առարկայ, նախ՝ զի ամենայն հիմնական լուրք յածեալք զՆալբանդեանէ են բոլորովին սուտ և ծնունդք մտաց անբարեմիտ արանց թշնամեաց նորա որոց հաւատալ չէ՛ պիտոյ: Երկրորդ՝ զի Նալբանդեանցն յամենայն ժամանակս գտանելոյ իւրոյ առ իս գտաւ յամենայնի հաւատարիմ ի բանս և գործս, յորոց ի վարձ արժանացաւ իմոց առանձին խնամոց: Երրորդ՝ յածեալ յիմարական համբաւք զՆալբանդեանցէ այդր և ի զանազան տեղիս ո՛չ իւր կարեն լինել հաստատեալ, վասն զի զրկեալ են այնք յամենայն հիմանց ապացուցական փաստից. եթէ պարոն հոգաբարձուն ո՛չ ցանկայ այսուհետև ունիլ զՆալբանդեանցն ի ձեմարանին, զնոյն շցանկայ այս ինքն Նալբանդեանն և ես յիմմէ կողմանէ ո՛չ հրամայեմ նմա ծառայել յայնպիսի տեղոջ, ուր բազմացան վասն նորա ձայնք թշնամեաց: Չորրորդ, որովհետև ես արդէն տնօրինեալ եմ յիմմէ կողմանէ, զի Նալբանդեանն մտցէ ի Մոսկովայի համալսարանն բժշկական, վասն որոյ խնդրեմ ի Ձեր գերազանցութենէ արձակել զնա բոլորովին ի ձեմարանէ անտի, դարձուցանելով նմա զամենայն թուղթս իւր և զվկայագիրս, ըստ այնմ տալ նմա վկայագիր վասն ծառայութեան ի ձեմարանին և թէ նա հաստատեալ է վարժապետական կողման ընդձեռն կառավարիչ Սինկիդիտոսին, եթէ յայնկոյս Կովկասեան իշխանութիւն վերստին պահանջեսցէ զՆալբանդեանն, այնժամ նա ունելով ի ձեռին զհարկաւորեալ թուղթս իւր,

կարասցէ ինքնին անձամբ ելանել ի հանդէս և որոնել զարդարութիւն յօրէնս տէրութեան, առաջի զնելով զամենայն պատճառս նորա հալածման:

Բաց յայտմանէ երևի, եթէ հակառակորդք Նալբանդեանի առաջի արասցեն զօրինաւոր ապացուցութիւնս առ յանձնարարութիւնս Նալբանդեանի, յայն ժամ նա ինքն, իբրև անձն պատկանեալ զարդիս մարմնաւոր իշխանութեան, ենթարկեալ ունի քաղաքական դատաստանի, որով կամ դատապարտեսցի և կամ փալցեցուցէ զիւր արդարութիւն:

Եթէ ես բազմապատիկ գրութեամբք իմով առ գեղազանց աղա Իւան Եակիմիչ և առ գերազանց աղա Իւան Դավիթիչն ո՛չ մարթացայ հասանել նպատակի իմոյ, այլ այն ամենայն հակառակն եղեն ի նախատինս Նալբանդեանին, վասն որոյ այսուհետև անօգուտ է անհանգիստ առնել և զՁեր գերազանցութիւն երկարապատում գրութեամբք զայսր առարկայէ:

Այլ միայն խնդրեմ ի Ձէնչ, ողորմած տէ՛ր, շնորհ՝ ունել կարելին փութով տնօրինել այնպէս զի տացի Նալբանդեանին զիւր թուղթս, ծանուցանելով և մեզ պտուղութեան և ընդունել ի հաւատարմութիւն զկատարեալ յարգութիւն իմ ի Ձեզ՝ որով մնամ վասն պատուական կենաց Ձերոյին գերազանցութեան, ողորմած տէր,

խոնարհ ծառայ և աղօթարար
արքեպիսկոպոս Մաարէոս

Խ. Լազարյանի ձեռքով մակագրված է՝ К г. директору. Это отношение архидяея доставляется по секрету. Рассмотреть и сообщить мнение, притом возвратить ко мне это.

ЦГИАЛ, фонд 880, оп. 5, дело 312, листы 34—35.

33. 1854 թ. օգոստոսի 9

ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԸ Խ. ԼԱԶԱՐՅԱՆԻՆ՝ ԻՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԳՎԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձերոյին գերազանցութեան վեհագնեայ աղա
Խաչատուր Յովակիմեան

Ողորմած տէր.

Յերեկի ատուր ընկալայ ի նորին բարձր սրբազնութենէ զպահանջեալ նամակ, որով հրամայէր ինձ մատուցանել զայն Ձերո-

յին վեհազնութեան նովին կնքով անկորուստ, կարծելով թէ Չերոյին գերազանցութիւն գտանիք ի քաղաքիս: Զնոյն զայն նամակ նովին ամբողջութեամբ յարդարեալ ի սմին՝ համարձակիմ մատուցանել Ձեզ, ի կատարումն հրամանի բարձր սրբազան տեառն իմոյ և ծնողագուծ բարերարի:

Զեն պէտք ծանօթարանութեան զանձնէ իմմէ, արդէն բազմապատիկ նամականիք նորին բարձր սրբազնութեան յանուն վեհազնեայ աղայ Յովհաննու Դաւիթիչի կարեն խօսիլ փոխանակ իմ՝ ընդ իմ, և թե զի՞նչ անցք անցին ընդ իս՝ համարիմ թէ գիտացեալ է Ձեր գերազանցութիւն: Յոյս իմ հաստատ է ի Ձեզ, թէ դուք, ողորմած տէր, ըստ բարձր խոհականութեան Ձերոյ, կարեք ճանաչել զանմեղութիւն իմ և զի նանիր հալածանս, զորմէ աւելորդ համարիմ գալ ի գրաւոր խօսակցութեան, ժամանակին թողեալ յաջողելոյ՝ եթէ արժան գտայց տեսանել զձեզ այսր: Այժմիկ զայս միայն մնա ինձ խնդրել ի Ձերոյին գերազանցութեանէ, զի դուք, ողորմած տէր, իբրև պաշտպան ցուցեալ ինձ ի բարձր սրբազան տեառնէ, խնամակալ լիջիք ինձ նեղելոյս, և հրամայեալիք դարձուցանել առ իս զօրինաւոր վկայագիրս իմ որք գտանին այդր, և զառանձին վկայութիւն՝ յայնմ, թէ կառավարիչ Սենաթն հաստատեալ է զիս ի վարժապետական կոչման. վասն զի ըստ յատուկ հրամանի նորին բարձր սրբազնութեան գոլով պատրաստեալ՝ ունիմ մտանել տեղոյս կայսերական համալսարանն, զորմէ երկիցս խնդրեալ էի ի բարձրապատիւ նփրեմ վարդապետէ՝ միջնորդել առաջի Ձերոյին գերազանցութեան յաղագս իմոյ վկայագրաց:

Զիք տեղի կասկածանաց, թէ շնորհելով Ձեր զվկայաթուղթս իմ՝ պարտաւորեսիք զիս գոլ միշտ երախտագէտ առ ազգասէր գերդաստան Չերոյին գերազանցութեան: Մնալով ակնկալեալ տնօրինութեան Չերոյին գերազանցութեան, ողորմած տէր,

մնամ պատրաստական խոնարհ ծառայ,
Միքայել Նալբանդեանց

և. Լազարյանի ձեռքով մակագրված է՝ К г. директору. Эта просьба Налбандяна доставляется. Рассмотреть и сообщить мнение, притом возвратить ко мне это.

ЦГИАЛ, фонд 880, оп. 5, дело 312, лист 36.

34. 1854 թ. հոկտեմբերի 14

Խ. ԼԱԶԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Մ. ՎԵՀԱՊԵՏՅԱՆԻՆ՝ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԹՇՆԱՄԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՔԻ ՄԱՍԻՆ

Ձերդ բարձր սրբազնութիւն,
Ողորմած տէր.

Մինչև ցայսօր ժամանեալ լինին առ բարձր սրբազնութեան ձեր գրութիւնք մեր, յորոց և տեղեկացեալ լինիք, զԴրպիսաբար տնօրինելոյ մեր զՄիքայէլէ Նալբանդեանց, որ առաւել օգտակար էր ինքեան որքան ի մեզ է կար մեք շեմք վերջացեալ ցայսօր սերտորեն իմն պաշտպան և ջատագով գտանիլ ձերում բարձր սրբազնութեան, սակայն կաթողիկոսն ներսէս, ո՛չ իսկ դադարի իւրոց խորհրդոց, և ո՛չ զիջանի առ միջնորդութիւնս մեր, այլ կամի միշտ զնեհահին ներգործել ի մասին նոյն Նալբանդեան դպրի ձերում:

Ի 5ն օգոստոսի սոյն ամի գրեալ գոլով նորուն վեհափառութեան առ մեզ բազմատող նամակ մի լի վաւերական և անվաւեր բանիւք մեք ևս տողեալ զպատշաճականսն այնր գրածի նորա կրկին ևս հզօրացուցաք զթախանձալի միջնորդութիւն մեր առ ի յաջողուած անդորրամիտ կենցաղավարութեան ձերում բարձր սրբազնութեան զորոյ և զօրինակն ընդ սմին առաքեմք առ ձերդ բարձր սրբազնութեան, յորմէ և կարէք կշռագատել, որպէս փոյթ է մեզ առ պահպանութիւն ձերոց յարգանաց ի նանիր զայրազնութեանց նորուն վեհափառութեան:

Յաւէտ քան զայսոսիկ, մնամք իսկական վերապատուեամբ Ձերում բարձու սրբազնութեան ամենախոնարհ ծառայ խաչատուր Լազարեկ

Ընդ սմին առաքեմք նաև զօրինակ վճռական գրոյ Սենաթին, որ առ ճեմարանն մեր ի Մոսկուայ, յանուն Նալբանդեան դպրի յուսուցչութեան:

Հայկական ՍՍԹ Պետ. Մատենադարան, Կաթողիկոսական գրիվան, թղթ. № 172, վալ. № 126:

35. 1855 г. июля 18

**ОТНОШЕНИЕ И. ЛАЗАРЕВА В ПРАВЛЕНИЕ ЛАЗАРЕВСКОГО
ИНСТИТУТА О ВЫДАЧЕ НАЛБАНДЯНУ СВИДЕТЕЛЬСТВА
О БЕДНОСТИ**

Г. инспектор представляет мне, что Налбандов поступает в студенты Московского университета, а потому просит снабдить его свидетельством от правления, что он, Налбандов, совершенно бедного состояния и не имеет никаких средств вносить установленные правительством за слушание лекций в Московском университете 50 руб. серебром. Представляю непосредственному начальству института рассмотреть и решить просьбу Налбандова, на месте удовлетворить эту, выдав ему надлежащее свидетельство о бедности за подписанием г. г. директора, инспектора и членов правления института. Это было бы гораздо ближе и удобнее; мне же по званию моему неприлично подписывать подобного рода бумаги.

Подписал: попечитель **Иван Лазарев**

В то же время получены мной из Тифлиса весьма любопытные известия, касающиеся вообще дел нашей церкви и имеющие некоторое отношение к моему настоящему положению. До настоящего времени католикос в большей части своих действий и распоряжений, в своем расположении или преследовании тех, или других лиц — между прочими и меня — руководствовался наставлениями назарьянцев, налбандовых, паткановых и других так называемых патриотов, более или менее известных вам, в эгоистические цели и интересы которых входило, между прочим, постоянное преследование меня, с тех пор как переехал в Россию. Они вооружались и вооружали других против меня особенно в Петербурге и Тифлисе, но имея везде единомышленников, действовали против меня и в Москве, и в Нахичевани, и в Эчмиадзине, и даже в Константинополе, опираясь постоянно и употребляя орудием для достижения своих целей католикоса. В этих собственно видах, но не из преданности к национальной церкви и интересам, — как они хотели заставить думать других, — они везде и словом и делом старались поддерживать настоящего патриарха, к которому лично не имею никакого уважения. Но он им нравился потому, во 1-х, что слу-

жил их целям, а во 2-х, потому, что он не только не согласовался никогда в своих действиях с существующими в России положениями и установлениями для управления делами нашей церкви; но, напротив, выражал всегда, при всяком случае, полное неуважение и даже презрение к сказанным узаконениям, что соответствовало целям и намерениям названных выше господ, так как они считают себя какими-то либералами и реформаторами, недовольными существующим порядком вещей. Цели же и намерения этих господ вообще нехороши и нечисты. По отношению к нашей церкви, виды и намерения их заключались собственно в том, чтобы проводить везде какие-то германские и английские идеи и стараться делать разные перемены в духе протестантизма. Для людей благоразумных и истинноверующих, действия партии этих людей давно не были тайной, но патриарх Матеос, по своей непроницательности, ничего не видел и находился до настоящего времени, можно сказать, почти совершенно в руках этих людей.

Так он представил им, между прочим, заведывание и управление армянским училищем в Тифлисе, где они втихомолку занимались протестантской пропагандой, замеченной очень многими. Но когда один из единомышленников этой партии Петр Шаншиев, сделавшись начальником армянского училища в Карабаге, стал там и между детьми, и в народе открыто проповедывать протестантизм, тогда многие спохватились и там, и в Тифлисе и написали католикосу, который потребовал к себе Шаншиева, удалил его от управления училищем в Карабаге и, увидев наконец опасность для себя и для церкви — от людей, с которыми до того был в союзе, прибегнул за советом и за помощью к другой партии, людей благомыслящих и всеми уважаемых между армянами в Тифлисе, к которым он постоянно не благоволил, находясь под влиянием враждебной партии, и к которым теперь обратился с письмами, прося их советов и содействия. Некоторые из них отвечали католикосу на его письма, что он должен переменить свой образ действий относительно некоторых лиц, преданных церкви и полезных ей, но оклеветанных в его глазах и несправедливо им преследуемых, должен оставить все свои преследования, изменить относительно их свое поведение и, чистосердечно раскаиваясь, обратиться

к ним за помощью для общего с ними действия на защиту нашей национальной церкви. Между такими лицами ему указали на бывшего тифлисского архиепископа Саркиса и на меня; и архиепископ Саркис уже призван католикосом из своего добровольного изгнания в монастырь Сенагин и должен был отправиться в Эчмиадзин после праздников.

Все это дело, как мне пишут, и эта внезапная перемена в мнениях и направлении действий патриарха Матеоса, произвели не только в Тифлисе, но и почти везде в Закавказье сильное впечатление, особенно потому, что патриарх совершенно отшатнулся от людей, которые им до сего руководили и которые теперь стали действовать против него, и склонился к стороне их противников. Эта перемена в католикосе действительно может повести к серьезным результатам, и потому я счел нужным сообщить вашему превосходительству полученные мною о том известия. Каковы будут дальнейшие последствия этого дела, я не премину написать вам все, что узнаю.

С искренним уважением и совершенной преданностью, имею честь быть, милостивый государь, вашего превосходительства покорнейшим слугой и богомольцем, архимандрит
Гавр. Айвазовский

ЦГИАЛ, фонд 880, оп. 5, дело 33, листы 213—215 об.

д)

13 февраля 1865 г., г. Феодосия

О тех печальных событиях, зрелищем которых был в эти последние дни Нахичевань, вашему превосходительству вероятно уже более или менее известно. С тех пор, как я переехал в Россию и предпринял здесь труды для пользы церкви, народа и правительства, каким только жестоким преследованиям и обвинениям я не подвергался, каким только позором не покрывалось мое имя, мои слова и поступки, моя личность! Но последние происшествия в Нахичевани, которые мерами, принятыми своевременно, легко могли быть устранены, и совершение которых было между тем допущено, переполнили меру претерпе-

ваемых мной столь несправедливо страданий и позора: все зло, какое только можно было мне делать,—сделано и дальше уже идти некуда. Я могу говорить об этом со всей откровенностью с вашим превосходительством, ибо я знаю, что вы один в целом армянском народе принимаете искреннее участие во мне, один делали и делаете все, что только возможно для облегчения моего положения. Побуждаемый чувством искренней благодарной преданности к вам, я беру смелость и теперь передать вам свои жалобы, излить перед вами всю горечь, которая накопилась у меня на сердце за все это время, будучи уверен наперед, что справедливые жалобы не встретят в вашем превосходительстве равнодушного слушателя.

Продолжительное бездействие министерства, более чем равнодушное невнимание ко всем донесениям моим и к отправленной мною наконец телеграфической депеши о скором прибытии в Нахичевань назначенного католикосом на мое место епископа Аршаруни, привели дело к такой грустной развязке. 31-го января в нахичеванской соборной церкви прочтен был всенародно кондак католикоса, в котором, без следствия и суда, с наглым бесстыдством и клеветой меня обвиняют во всевозможных преступлениях, возвещают об удалении меня от управления высочайше вверенной мне епархии, и о назначении на мое место епископа Аршаруни, имя которого провозглашается при литургии; духовенству строго приказывается признавать епископа Аршаруни, а не меня, начальником епархии, с угрозой удалить от мест и священнодействия тех из них, которые остались бы послушны мне. Ваше превосходительство, можете ясно представить, какое впечатление, какое беспокойство и волнение произвело чтение этого кондака в духовенстве и во всем населении города и его селений и как оно еще отзовется в других городах епархии? Это тревожное положение длилось в Нахичевани в течение 3-х дней до получения из Петербурга от г. генерал-губернатора депеши, которой предписывалось признавать меня управляющим епархией до окончания дела. Без сомнения, это позднее распоряжение не может изгладить дурного впечатления, произведенного всенародным прочтением кондака католикоса.

Между тем, как я не только в последнее время, но в тече-

ние стольких лет уже постоянно пишу, что вся цель католикоса, подстрекаемого нахичеванским городским головой Гайрабетовым, Налбандовым, Паткановым и другими, заключается лишь в том, чтобы удалить меня от управления епархией и чтобы с моим удалением уничтожить и все предпринятые мной труды, что именно с этой целью названные лица убедили католикоса назначить ревизию в управляемой мной епархии; что эта ревизия имела в сущности характер не ревизии, а комедии, которая была бы очень смешна, если бы не была так жалка. Обо всем этом я писал давно, равно, как и о том, что виной всех беспокойств в Нахичевани — Гайрабетов с несколькими другими влиятельными лицами; пользуясь слабостями нынешнего католикоса, они вооружили его против меня, а главное против учрежденного мной училища, и с помощью своих денег делали с ним до сих пор, что хотели, тем более, что я в свою очередь не мог, да и не считал нужным действовать на него теми же средствами. Из многих фактов правительство увидело наконец само, что Гайрабетов, действуя против меня, прямо вмешивался в церковные дела; бывший екатеринославский губернатор граф Сиверс, по распоряжению министерства, взял с него подписку о невмешательстве в дела епархиального управления, и, несмотря на то, Гайрабетов и прямо и косвенно вел и ведет до сих пор переписку с католикосом обо мне и о церковных делах, подстрекает его — нередко при помощи особых посланных от себя — с значительными суммами денег (как, напр., Анании Султаншахова в 1863 году) — действовать против меня, требовать от меня отчета в употреблении церковных денег на Халибовское училище, именем католикоса вмешивается в дела и распоряжения епархиального управления, постоянно по вопросу о церковных деньгах мутит и вооружает против меня народ, который зависит от него и от преданных ему членов местного управления материально. Нет клеветы, нет грязного и позорного дела, которых Гайрабетов, Налбандов и подстрекаемый ими католикос не распространили бы обо мне как здесь, так и за границей, и посредством которых не старались бы очернить меня в глазах народа, оклеветать мои сочинения, открытое мной училище и мое управление епархией.

Со всеми этими кознями и недостойными интригами я бо-

рюсь вот уже семь лет, и надо удивляться, как еще при всем не уронено до сих пор совершенно доверие и уважение ко мне, к моим трудам и к Халибовскому училищу в большой и лучшей части духовенства епархии и в массе народа? Об ограждении меня от несправедливых нападений и об устранении препятствий, поставленных моим трудам названными лицами, я писал своевременно каждый раз министерству, но все мои бумаги оставались без всякого действия, а большая часть даже без ответа, как например, мои донесения об употребленных на устройство и содержание Халибовского училища церковных деньгах в декабре 1862 года и другое от 3-го октября прошлого 1864 года об удалении епископа Андреаса из управляемой мной епархии или же об уведомлении меня, если просимая мера не будет принята, чтобы я мог просить об увольнении от должности епархиального начальника. Оба эти донесения требовали положительного ответа, которого я не получал до настоящего времени. Я даже в праве допустить сомнение, известно-ли содержание всех моих донесений тем, кому они писаны. И не будет ли мало удивительно, если в самом деле неизвестно, когда все доклады в министерстве по моим донесениям делаются г. Езовым, другом Налбандова, экссвященником Паткановым, клеветом Гайрабетова, который вероятно через него одного может получать из Петербурга копии со всех моих донесений в министерство. Кроме того, Езов из собственного личного интереса относится очень дурно обо мне и особенно об управляемом мной Халибовском училище во всех армянских обществах, где только бывает — что мне известно положительно. И это весьма понятно, потому что он содержит в Петербурге пансион или школу для детей богатых армян, и в своих сношениях с последними никогда не упускает случая представить в черных красках Халибовское училище и его учредителя. Не могу при этом не указать еще на одно значительное обстоятельство: в школе Езова занимается обучением детей лишенный священнического сана Патканов, который был сослан в Вятку. Я не знаю, по чьему ходатайству и как этот человек возвращен оттуда и живет в Петербурге, городе, принадлежащем к моей епархии, без всякого ведома о том с моей стороны и без сношения со мной. О качествах же Патканова, кажется, нечего распространяться:

оставленные им в Нахичевани и в других местах следы и ученики громко говорят о губительном влиянии этого человека на народную нравственность повсюду, где только ему приходилось действовать. Он и теперь продолжает писать (это я легко узнаю по его слогу) в издаваемом в Петербурге его сыном армянском журнале, в котором нередко встречаются язвительные и неблагоприятные отзывы о моей деятельности и управляемой мной училище.

При такой обстановке понятно, что все донесения мои министерству и мои труды умышленно представляются в превратном виде. Вследствие чего правительство перестало в последнее время держаться той системы доверия, которым оно меня облекло в начале моих трудов здесь, предпринятых мной по его поручению, все мои представления давно перестали пользоваться в его глазах тем вниманием, которого они заслуживают. Легко понять, насколько такая перемена повредила предпринятому мной делу, серьезному делу, которое к моему сожалению, задев личные интересы и страсти немногих лиц, нашло себе в них отъявленных врагов, не постыдившихся действовать против меня и против моего дела всеми темными путями. Но не взирая на это последнее обстоятельство, и ничтожное само по себе, враждебное отношение ко мне этой небольшой партии своекорыстных и заведомо дурных людей и самая враждебность католикоса к моей деятельности легко могли быть устранены в самом начале, согласно моим указаниям, энергической поддержкой меня и моего дела со стороны правительства, поручившего мне это весьма серьезное и важное предприятие.

Нужно знать, была ли какая-либо разумная причина к упомянутой перемене? В чем собственно меня обвиняют, и кто обвиняет? Что собственно, какие преступления нашли в моих действиях в течение семилетнего управления моей епархией все обвиняющие меня — католикос и так называемая ревизия епископа Андреаса? Все обвинения, которые я до сих пор слышал, сводятся к одному пункту, что я употребил и продолжаю употреблять на устройство и содержание Халибовского училища церковные деньги. Но, не говоря о том, что я уполномочен употреблять с указанной целью церковные деньги и что я предположил все-таки возратить со временем в церковный капи-

тал все, что употреблено из него на училище — не говоря уже об этом, — разве церковные деньги могли быть лучше и святее употреблены, как на образование народа? Разве не первая обязанность духовенства заботиться о духовном образовании народа? Разве во всех просвещенных странах не слышатся упреки духовенству, именно в том, что оно не хочет употреблять церковные имущества и доходы в пользу народного образования? Меня же нашли нужным обвинять именно за то, что я издерживаю церковные деньги с пользой для народного образования. Ведь я же не проедаю, не употребляю эти деньги в свою собственную пользу на свои прихоти. Ведь я в течение семи лет содержу учебное заведение, в котором обучаются и получают полное содержание — пищу, одежду и проч. более 100 мальчиков, в котором одних служащих, получающих значительные жалованья, около 125 человек. Для этого нужны ведь средства, и всем известно, что ежегодное содержание училища обходится мне от двадцати пяти до тридцати тысяч рублей серебром, и что я не только не пользуюсь лично церковными деньгами, но еще и из принадлежащих мне по праву, как епархиальному начальнику, доходов от браков, погребений, крещений и проч. все отдаю на содержание Халибовского училища. Это всем известно, я говорю, а меня все-таки обвиняют в растрате церковных денег, которые до меня проедались и употреблялись бог знает на что и бог знает кем.

Покорно прошу ваше превосходительство извинить меня за мои длинные жалобы. Я мог с ними обратиться только к вам, как к единственной особе, понимающей мое положение и принимающей живое участие в моих трудах и в моих страданиях. Для меня поэтому крайне важно, чтобы вашему превосходительству были известны все обстоятельства и истинные причины, вовлекшие меня в то тяжелое положение, в котором я теперь нахожусь, и из которого я решился так и иначе непременно выйти. Довольно для меня и прошедших семи лет, проведенных в неслыханных и в неожиданных мной мучениях и в постоянной, унижительной для меня, борьбе с людьми бог знает какого сорта. Я устал. И если мне придется продолжать начатое мной здесь дело, то я соглашусь на это не иначе, как под условием твердых гарантий и верного энергического ограждения моей дея-

тельности, моей чести, моей личности от чьих бы то ни было недостойных нападений.

Примите, ваше превосходительство, уверение в искреннем моем к вам уважении и совершенной преданности, ваш покорнейший слуга и богомолец, архимандрит
Гавр. Айвазовский

ЦГИАЛ, фонд 880, оп. 5, дело 33, листы 221—227 и оборот.

е)

[Январь, 1865 г.]

1) Прямых, т. е. письменных улик для облегчения враждебных мне и вредных для церкви и нации действий Езова я не имею, потому что не искал их; но в полной враждебности всех его действий относительно меня едва ли можно сомневаться кому бы то ни было. Что он отзывается крайне дурно о моей деятельности, об училище, устроенном мной, и обо мне лично,— на это я могу представить много свидетельств не только людей, оценивающих по заслугам мою деятельность, но и даже людей мне враждебных. Он друг и сообщник Налбандова, Патканова, Гайрабетова и всей этой небольшой шайки армян, которые действуют против меня и стараются всячески меня очернить. У Гайрабетова есть копии почти всех важнейших донесений моих в министерство. И кто, как не Езов, может ему их сообщить? Но понятно, что он очень осторожен, ничего не пишет сам, а действует через других. Мне еще на днях писали из Нахичевани, что недавно послан из Ростова на Дону донос в министерство о том, что именно он сообщает Гайрабетову из министерства все копии моих бумаг и нужные ему сведения. Кем и по какому случаю послан этот донос — мне неизвестно. Вся причина, почему я не получаю ответов и удовлетворений по своим представлениям в министерство, заключается именно в том, что состоит Езов...

ЦГИАЛ, фонд 880, оп. 5, дело 33, лист 231.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՆԱԼԲԱՆԳՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Վավերագրեր 1—2.— Նալբանդյանի շարադրությունը և «Հայտարարությունը» Կարևոր նշանակություն ունեն նրա կյանքի առաջին տարիների հետ կապված որոշ հարցերի լուսարանման համար:

Արխիվային նոր վավերագրերից պարզվում է, որ Գարր. Պատկանյանը 1843 թ. մարտի 12-ին դիմել է Էջմիածնի Սինոդին, խնդրելով՝ թույլատրել տեղափոխվել իր ծննդավայրը՝ Քիֆլիս, այնտեղ պաշտոնավարելու համար: Նրա այդ դիմումին Սինոդը պատասխանել է, որ այդ հարցը կարող է լուծել Վիճակային Կոնսիստորիան: Ներսես Աշտարակեցին, որ այդ ժամանակ մեկնել էր Պետերբուրգ, հնարավորություն չի ունենում զբաղվելու Գ. Պատկանյանի խընդրով: Միայն 1845 թ. աշնանը, երբ նա կրկին վերադառնում է Նոր-Նախիջևան, շտապում է րավարարել Պատկանյանի խնդիրը, մանավանդ որ կղերաազայական դասի ներկայացուցիչները վաղուց ի վեր ցանկանում էին ազատվել «խռովասեր» և «անհանգիստ» քահանայից:

Այս տեսակետից բնորոշ են Ներսես Կաթողիկոսի հրամանի հետևյալ տողերը. «...Հրամայեմք զնալ ընտանեօք իւրովք ի Քիֆլիզ, ուր գուցէ հաջողեսցի ինքեան գտանել զհանգիստ իւրոց կամաց» (Հայկական ՍՍԻ Պետ. կենտր. արխիվ, ֆոնդ 54, գ. 2535, թ. 34): Նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբերին Գ. Պատկանյանը տեղափոխվում է Քիֆլիս: Ներսես Կաթողիկոսը նրա փոխարեն ուսուցիչ է նշանակում Խաչիբյանի հավատարիմ գործակալ կաթողիկ վարժապետ Մկրտիչ Սկենյանին, հրամայելով, որ քաղաքի բոլոր տիրացուները և նորընծա քահանաները հաճախեն նրա դպրոցը:

Մկ. Սկենյանի «դպրոցն» սկսեց գործել 1846 թ. հունվարից: Հաճախողների կազմը չափազանց խալտարղետ էր, թե՛ ըստ տարրի և թե՛ ըստ կրթական մակարդակի. ինքը, վարժապետ Մկ. Սկենյանը, խիստ ցածր պատրաստականության տներ էր՝ տիպիկ ներկայացուցիչը «խալիֆայական» մանկավարժության: Նա շփոթում էր իր ընկերակիցներից, այլև «շարքային» տիրացուներին անզամ. այդ մասին է վկայում Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը ներկայացրած ուժ տիրացուների բացատրագիրը, որի մեջ ասված է. «... ի դպրոցի անդ, ի մեջ բազմաթիւ մանկանց և բարձրաձայն ձայնից և աղաղակաց նոցա անհնարին լինէր մեզ ուսանիլ, և մանաւանդ ոչ զոյր մեզ անդ տեղի նստելոյ և պարապելոյ: Բաց յայսմանէ, մինչև ցայն վայր շեղև երբէք դասատու վարժապետն մեր զարուեստ բերականութեան կամ ճարտասանութեան, պատճառելով՝ դուք բաւական գիտէք, և ոչ կամեր ուսուցանել իսկ, այլ և եթ ցանկայր շարունակել զերթեկութիւն մեր ի վարժատուն անգր շարադրութեամբ, և ոմանց ընթեռնուլ զգիրս հեղինա-

կաց, և այնու զընթացս մեր առ նա երկարել ջանալը, և մեր տեսանելով զանօրուտ աշխատանս, կանցար յուսումնասութենէ...»: Բացատրութեան հեղինակները նշում են, որ իրենք, շարունակելով հաճախել «ամիսս երիս, և այլ անկիւսասար և ոչինչ» (Հայկական ՍՍԻ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 2192, թ. 7):

Սկզբնական շրջանում Նալբանդյանը ևս, ստիպված լինելով կենթարկվել կաթողիկոսի հրամանին, մի քանի անգամ հաճախում է Մկ. Եկեղյանի դպրոցը, սակայն տեսնելով վարժապետի տգիտությունը, կտրականապէս հրաժարվում է նրան աշակերտելուց: Նորահայտ վավերագրից երևում է, որ Եկեղյանն ուղղակի հրաժարվել է քերականություն, տրամաբանություն, ճարտասանություն ավանդելուց, բերելով զանազան պատճառարանություններ. նրա ամբողջ վարպետությունը կայացել է «պարզագրություն» կամ վայելչագրություն մէջ: Պարզվում է նաև, որ Նալբանդյանն այնքան վարժ և անսխալ գրաբար շարադրություններ է գրել, որ Եկեղյանը կասկածել է դրանց ինքնուրույնության վրա, անգամ այն ժամանակ, երբ Նալբանդյանը վարժապետի կասկածները ցրելու համար գրել է նրա և ուրիշների ներկայությամբ: Իր «Հայտարարություն» մեջ Նալբանդյանը բողոքում է, որ Եկեղյանը խեղաթյուրել է իր շարադրությունները, և որպէս ապացույց, ներկայացնում է 1846 թ. մարտի 27-ին գրած շարադրությունը՝ ուշադրություն հրավիրելով վարժապետի «ուղղումներին» վրա: Ուշագրավ է այն, որ Նալբանդյանը զեռուս այդ շրջանում, հմուտ լինելով մատենագրական հին աղբյուրներին, վստահորեն հայտարարում է, թէ Եկեղյանն իդուր է վկայակոչում Ռսկեբերանին և ուրիշներին, քանի որ չի կարող ապացուցել սուկ անգիտության վրա հիմնված իր պնդումը:

Նալբանդյանի աշակերտական այդ շարադրությունն արժեքավոր է նրանով, որ ցույց է տալիս պատանի Նալբանդյանի գրաբարի և հին մատենագրության իմացության աստիճանը:

Վավերագրեր 3—8.— Վավերագրերի այս շարքը վերաբերում է 1849—1854 թթ. հալիբոլայի և Ներսես կաթողիկոսի կողմից Նալբանդյանի դեմ ուղղված հալածանքներին:

Ինչպես հայտնի է, Նալբանդյանը 1846 թ. փետրվարի 5-ին և մարտի 5-ին տիրացու Սարգսին (հետագայում՝ Բարսեղ քահանա Պոպով) գրած նամակներում խիստ քննադատության էր ենթարկել Նոր-Նախիջևանի աղաներին, հատկապես խոշոր կալվածատեր և վաճառական Հարություն աղա հալիբոլային և վերջինիս պաշտպան ու հովանավոր Ներսես կաթողիկոսին, որ նրանք Նոր-Նախիջևանից հեռացրել էին ուսուցիչ Գարրիել Պատկանյանին և նրա փոխարեն նշանակել իրենց կամակատար, սահմանափակ գիտելիքների տեր կաթողիկ վարժապետ Մկրտիչ Եկեղյանին (հիշյալ նամակները տես Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 4, էջ 7—8):

Տիրացու Սարգսը, որ 1843 թ. մինչև 1847 թ. զանվում էր էջմիածնում, իր «հողեր տիրոջը» հաճողանալու համար՝ Նալբանդյանի նամակները հանձնում է Ներսես կաթողիկոսին: Բնորոշ է այն, որ կաթողիկոսը, ի հատուցումն տիրացու Սարգսի այդ «ծառայության», 1847 թ. հալիբոլային գրած կողակում, կարգադրում է նորընծա քահանա Բարսեղ Պոպովին (տիրացու Սարգսին) հատուկ ուշադրություն դարձնել և հողեր կառավարության միջոցով նրան «ծխերով ապահովել»:

Սակայն ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Ներսես կաթողիկոսը մինչև 1849 թ. ընթացք չի տվել իրեն հանձնված Նալբանդյանի նամակներին:

Խնդիրն այն է, որ 1845 թ. մինչև 1848 թ. հալիբոլայի Ներսես կաթողիկոսի կողմից նշանակված լինելով Նոր-Նախիջևանի և Բնասարբայի թեմի կեղեցական գումարների լիակատար հավատարմատար, վայելում էր անսահմանափակ իրավունքներ: Մատթեոս Վեհապետյանը թեմի առաջնորդ նշանակվելով, ձեռնարկում է հալիբոլայի իրավունքների սահմանափակելու գործին, պահանջելով, որ կեղեցական գումարներն այլևս հալիբոլային չհանձնվեն: Այդ գործում Մատթեոս Վեհապետյանին նուանդուն աջակցություն է ցույց տալիս Միք. Նալբանդյանը, որը վարում էր «առաջնորդական գործոց» քարտուղարի պաշտոնը: Նալբանդյանը պաշտոնական գործերով մոտիկից շփվելով ժողովրդի հետ, ակնատես էր եղել հալիբոլայի կեղեքումներին ու շարագործություններին. հալիբոլայի լինելով խոշոր կալվածատեր ու վաճառական, իր ձեռքը կենտրոնացրած ունենալով նաև կեղեցական-հասարակական գումարները, հենվելով մի կողմից էջմիածնի Սինոդի և կաթողիկոսի, մյուս կողմից՝ ցարական կառավարական օրգանների պաշտպանության վրա, անսանձ կերպով շահագործում ու կեղեքում էր ժողովրդին: Այդ բանը Նալբանդյանի մեջ առաջացրել էր բուռն ցասում ու բողոք հալիբոլայի և նրա հովանավոր Ներսես կաթողիկոսի դեմ: Ահա թե ինչո՞ւ նա եռանդուն կերպով աշակցում էր Մատթեոս Վեհապետյանին՝ հալիբոլայի իրավունքները սահմանափակելու և նրա կամայականությունները սանձելու գործում, իսկ հետագայում արդեն նա հանդես է գալիս նախաձեռնողի և ղեկավարողի դերում, մի բան, որ չէր վրիպում հալիբոլայի և նրա համախոհների աչքից. ուշագրավ է, որ Սարգիս վարդապետ Զալալյանը հալիբոլային ուղղած իր մի գրության մեջ որոշակի կերպով ասում է, թե «մանուկ դպիրն այն (այսինքն՝ Նալբանդյանը) թաղատերել է վերջ տեսան իւրոս, այսինքն՝ Մատթեոս Վեհապետյանի վրա (Հայկական ՍՍԻ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 798, թ. 41): Երբ հալիբոլայի դեմ Նալբանդյանի տեսնում էր մի լուրջ և վտանգավոր հակառակորդի, որին իր ճանապարհից հեռացնելը նա անհրաժեշտություն էր համարում: Կան տվյալներ, որ հալիբոլայի 1849 թ. Ներսես կաթողիկոսին հասցեագրած նամակներում զանգատվելով Մատթեոս Վեհապետյանի՝ իր դեմ ուղղված գործողությունների մասին, նրա ուշադրություն է հրավիրում Նալբանդյանի վրա: Ներսես կաթողիկոսն ահա այդ ժամանակ է, որ որոշում է ընթացք տալ տիրացու Սարգսին գրած Նալբանդյանի նամակներին, և դրանք, որպես ապստամբության և անհնազանդության փաստեր օգտագործելով, հալածանք է սկսում Նալբանդյանի դեմ՝ նրան ասպարեզից հեռացնելու նպատակով: 1849 թ. սեպտեմբերի 2-ին Նալբանդյանի նամակների պատճենները հատուկ կոնգրեսով նա ուղարկում է հալիբոլային, պահանջելով հողեր կառավարության ներկայացուցչի հետ միասին քննության ենթարկել դրանք և արդյունքների մասին տեղեկացնել իրեն: Նալբանդյանի նամակների հետ քննության էին ուղարկված նաև մի օտարկվազի, հետագայում Յոզա քահանա Եարշնիկյանի, գրությունները: Ահա թե ինչո՞ւ հրապարակվող փաստաթղթերում վերջինիս անունը հիշատակվում է Նալբանդյանի անվան զուգընթաց, թեև նրանց գործերն ըստ կուսության միանգամայն տարբեր բնույթ էին կրում: Եարշնիկյանը մեղադրվում էր այն բանի մեջ, որ նա Մոսկվայում բնակվող ոմն Գերասիմ Սահրատյանին գրած նամակներում առաջարկել էր, որ վերջինս իր քրոջը հողեր կառավարության միջոցով բաժանել տա նրա նշանածից՝ տիրացու Պրոտոպոպովյանից, նպատակ ունենալով ինքն ամուսնանալ հետը: Սահրատյանը Եարշնիկյանի նամակներն ուղարկում է Պրոտոպոպովյանին ի գիտություն, վերջինս հողեր կառավարությանը հանձնելով դրանք (նամակները),

խնդրում է սանձել Եարչնիկյանին: Հոգևոր կառավարությունը 1846 թ. հարկ է համարում Եարչնիկյանի նամակներն ուղարկել Ներսես կաթողիկոսին: 1849 թ. սեպտեմբերի 2-ի Հ. Խալիբյանին գրած կոնդակով՝ կաթողիկոսը պահանջում է Նալբանդյանի հակաօրինական գրությունների հետ միասին, քննության անել նաև Եարչնիկյանի գործը:

Ինչպես երևում է այստեղ հրատարակվող և բազմաթիվ այլ վավերագրերից, Նալբանդյանի նամակները քննության հարցի շուրջը տեղի է ունենում երկարատև գրագրություն քաղաքազույտ Խալիբյանի, հոգևոր կառավարության և վիճակային կոնսիստորիայի միջև: Այնուամենայնիվ, Խալիբյանին չի հաջողվում քննության ենթարկել Նալբանդյանի նամակների գործը: Ակնհայտ երևում է, որ Մ. Վեհապետյանը աշխատել է ամեն կերպ ձգձգել գործի քննությունը և Նալբանդյանին ազատել պատասխանատվությունից: Նա շատ լավ էր հասկանում իր հակառակորդների շանքերի բուն նպատակը, այն է՝ չեզոքացնելով Նալբանդյանին, դրանով իսկ թուլացնել հոգևոր «բարձրագույն» իշխանության դեմ բուստացող ուժերի դիրքերը:

Ինչպես հայտնի է, տիրացու Սարգսին ուղղված նամակները ստորագրված են Միքայել դպիր Խաղարյան Ուստայանց: Նալբանդյանը հետևողականորեն հրաժարվել է այդ նամակների հեղինակ ճանաչվելուց, պատճառաբանելով, որ իր ազգանունը Ուստայան չէ, այլ Նալբանդյան (տես «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 4, էջ 14): Միանգամայն պարզ է, որ Նալբանդյանը այդպիսով աշխատել է խուսափել Ներսես կաթողիկոսի անողոր հալածանքներից: Պնդելով, որ իր ազգանունը Ուստայան չէ, Նալբանդյանն ուներ որոշ հիմքեր. այդ ժամանակ պաշտոնական փաստաթղթերում նա հայտնի էր Նալբանդյան ազգանունով. սակայն նորահայտ փաստաթղթերից երևում է, որ Նալբանդյանի հայրը կոչվել է նաև Ուստայան-Ուստան. այսպես, օրինակ՝ Նոր-Նախիջևանի հարկային ցուցակներից մեկում «Ցեխալիբ» բաժնի № 39-ի տակ Նալբանդյանի հայրը հիշվում է «Տաղար Գրիգորով Յուստանով Նալպանտ» (Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 1158, թ. 27): Նալբանդյանի եղբայրներ՝ Գրիգոր և Լուսեղեն Նալբանդյանները 1864 թ. դեկտեմբերի 18-ին հոգևոր կառավարությանը ներկայացրած դիմումի մեջ հոր մասին գրում են՝ «Հայրն մեր նախիջևանաբնակ մեշչանին Ղազար Գրիգորեան Ուսթայել (որ և Նալբանդեանց), այժմ հանգուցեալ ի տէր» (նույն տեղ, ֆ. 54, գ. 871, թ. 1):

Խալիբյանը տեսնելով, որ Մ. Վեհապետյանը իր պաշտպանության տակ է վերցրել Նալբանդյանին և տրամադիր չէ կատարելու կաթողիկոսի հրամանը, այդ մասին գրավոր զեկուցում է Ներսեսին, նրան ուղարկելով Նալբանդյանի նամակների հարցի շուրջը եղած գրագրությունների պատճենները: Կաթողիկոսը զայրացած Մ. Վեհապետյանի անհնազանդության վրա, 1852 թ. հունվարի 8-ին առաջադրում է Սինոդին, հրամանագրել Նոր-Նախիջևանի և Քեսարաբիայի վիճակային կոնսիստորիային, որ Նալբանդյանին անհապաղ էջմիածին ուղարկեն՝ հսկողություն տակ՝ հոգևոր ատյանի առաջ պատասխան տալու համար: Նույն թ. մարտի 7-ին Սինոդը Մ. Վեհապետյանին հայտնում է կաթողիկոսի հրամանը՝ Նալբանդյանին էջմիածին ուղարկելու մասին, սակայն, այս անգամ ևս թեմի առաջնորդը ձգձգում է «բարձրագույն» հոգևոր իշխանության հրամանի կատարումը: Ներսես կաթողիկոսը դիմում է Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի օգնությանը: Վերջինս էլ իր հերթին, հրամանագրում է Տազանրոզի քաղաքապետ-

տին՝ «գանազան հակաօրինական արարքների մեջ» աչքի ընկած Մրքայել Ղազարյան Ուստայանին ձերբակալել և ուղարկել էջմիածին: Սակայն Նալբանդյանը, նախօրոք տեղեկացած լինելով իրեն ձերբակալելու հրամանի մասին, 1853 թ. հուլիսին, Մ. Վեհապետյանից վերցնելով հոգևոր կոչումից ազատված լինելու վկայական, մեկնում է Մոսկվա: Հրատարակվող վավերագրերը ցույց են տալիս որ Նալբանդյանի հակառակորդները ոչ միայն չեն հանդարտվում, այլև մեծ եռանդով շարունակում են հետապնդել նրան նաև Մոսկվայում:

Այս վավերագրերից №№ 3, 4 և 5-ը հատվածաբար օգտագործվել են Գ. Հարությունյանի «Կենսագրական նյութեր Միքայել Նալբանդյանի մասին» հոդվածում, որ տպագրվել է «էջմիածին» ամսագրի 1948 թ. №№ 5—6 և 10—12-ում,

№ 8, ինչպես նաև №№ 15, 16, 24, 27 և 84 վավերագրերը, տպագրության է պատրաստել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանի գիտաշխատակից ընկ. Ավետիք Աղամյանը:

Վավերագիր 9.— Առաջին անգամ հրատարակվող այս դիմումի մեջ հիշված Ավետիք Ավետիքյան Վատուժյանը Նալբանդյանի Վասիլաոն քրոջ որդին է: Նալբանդյանն առանձին հոգատարություն է ցույց տվել Ավետիքի նկատմամբ. նրան բնգունել է տվել Լազարյան ճեմարանը և ապա ուշադիր հետևել ուսման ընթացքին: Պետրոպավլովյան ընդունված շարունակել է հետաքրքրվել նրա վիճակով և նամակագրություն է ունեցել հետը (տես Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 4, էջեր 227, 242, 287—289, 291, 297):

Վավերագիր 10—14.— Ինչպես այս վավերագրերից երևում է, 1852 թ. ապրիլին Նալբանդյանը դիմել է Նոր-Նախիջևանի Մագիստրատի դատավոր Մասլինովին այն մասին, որ 1850 թ. օգոստոսի 17-ին ոմն Գարբիել Տեր-Կարապետյան Տոխսանյան իրեն վիրավորանք է հասցրել և փորձել է ծեծել: Նշելով վկաների անունները, Նալբանդյանը խնդրել է գործը քննել: Թե ինչու՞ դեպքը կատարվելուց մոտ երկու տարի հետո է նա դիմել դատարանին, որոշակի ոչինչ հայտնի չէ. հավանական պետք է համարել, որ Նալբանդյանը ժամանակին կարևորություն չի տվել և չի բողոքել, սակայն հետագայում, հակառակորդների գրգռումով, նույն անձնավորությունը նոր վիրավորանքներ է հասցրել նրան, և Նալբանդյանը ստիպված է եղել դիմելու դատարան:

Այստեղ հրապարակված են դատավոր Մասլինովի երկու գրությունը հոգևոր կառավարությանը՝ դեպիկ ներկա գտնվող քահանաների գրավոր ցուցմունքների ներկայացնելու մասին. երրորդ վավերագիրը հոգևոր կառավարության որոշումն է. մնացածները՝ վկաներից երկուսի գրավոր ցուցմունքներն են (արխիվում գոյություն ունեցող չորս ցուցմունքներից բերել ենք երկուսը, մնացածներն ունեն նույն բովանդակությունը):

Նալբանդյանի դիմումը չի պահպանվել. բացակայում են նաև վավերագրեր այս գործի հետագա ընթացքի և վախճանի մասին:

Վավերագրեր 15—17.— Ինչպես հայտնի է, Նալբանդյանը տնտեսական ծանր պայմաններից հարկադրված, հարկերից ազատվելու նպատակով, 1848 թ. մայիսի 10-ին դիմել է Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը իրեն հոգևոր կոչման մեջ բնգունելու համար: Սակայն դրանից բնգամներ 4 ամիս հետո, նույն թվականի օգոստոսի 9-ին, պատրվակ բերելով խոլերայով հիվանդացած լինելը, խնդրում է ազատել իրեն հոգևոր կոչումից: Եվ քանի դեռևս նրան չէին ընդունել

հոգևոր կոչման մեջ, հարկերից ազատման վկայականը վերադարձվում է և գործը կարճվում:

1851 թ. նրան հոգևոր կոչման մեջ ընդունելու հարցը կրկին հարուցվում է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մ. Վեհապետյանի միջնորդությամբ: Մակայն տիրացու Սարգսին գրած նամակների համար 1849 թ. Նալբանդյանի դեմ հարուցված գործի կապակցությամբ այդ հարցը ձգձգվում է: Նալբանդյանի դեմ սկսված հալածանքները հետզհետե սուր ընույթ էին ստացել: Ներսես կաթողիկոսը բոլոր միջոցները ձեռք էր առել Նալբանդյանին ձերբակալելու համար. իր այդ մտադրությունը իրականացնելու նպատակով նա դիմել էր մինչև իսկ Կոզկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի օգնությանը: Նալբանդյանը շատ լավ գիտեր, որ Ներսես կաթողիկոսի անողոր հետապնդումներից կարող է ազատվել միայն այն դեպքում, եթե ձեռքին ունենա վկայական, որ ինքը ազատ է հոգևոր կոչումից, հետևապես հոգևոր իշխանությանը ենթակա չէ: Նա շատ լավ գիտեր նաև այն, որ Սինոդում իր դեմ հարուցած գործի կապակցությամբ և ստեղծված լարված իրադրության պայմաններում, հոգևոր կոչման մեջ ընդունելու հարցը միայն մերժմամբ կարող է ավարտվել, որը և նրա ցանկությունն էր:

Ստեղծված ծանր վիճակից դուրս գալու համար նրան անհրաժեշտ էր Սինոդի եղբայրացույթյունը մերժման մասին, որն իր ձեռքին կլիներ մի գործը ղենք՝ Ներսեսի հալածանքներից պաշտպանվելու համար: Հենց այդ նպատակով էլ գրված էին նրա 1852 թ. դեկտեմբերի 10-ի և 1853 թ. մայիսի 24-ի՝ Սինոդին ուղղված դիմումները (տես Նալբանդյանի «Նրկերի լիակատար ժողովածու», հատ. 4, էջ 24—28):

Նալբանդյանը հասնում էր իր նպատակին: Էջմիածնի Սինոդը 1853 թ. փետրվարի 18-ի նիստում, ըննելով Նալբանդյանի 1852 թ. դեկտեմբերի 10-ի դիմումը, անհնարին է համարում նրան հոգևոր կոչման մեջ ընդունելը, նկատի ունենալով Ներսես կաթողիկոսի նրա դեմ հարուցած գործը, իսկ նույն թ. մայիսի 15-ին այս որոշման մասին հայտնելով Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիային, վերադարձնում է Նալբանդյանի հարկերից ազատման վկայականը:

Սինոդի այս եղբայրացույթյան հիման վրա Մ. Վեհապետյանը 1853 թ. հուլիսի 7-ին Նալբանդյանին տալիս է վկայական այն մասին, որ նա ազատ է հոգևոր կոչումից: 1854 թ. հունվարին, երբ Վորոնցովի հրամանով ձերբակալում են Նալբանդյանին, վերջինս այս վկայականը ներկայացնելով, ազատվում է:

Ուշագրավ է այն պատասխանը, որ Սինոդը 1855 թ. հունվարի 21-ին տվել է Ներսես կաթողիկոսին՝ Նալբանդյանի հոգևոր կոչումից ազատվելու հանգամանքների մասին նրա հարցման անթիվ. «...Միջառն Նալբանդեանց գոյով որդի արքունական հարկատու անձին, յամենայն ի կեանս իր երբեք չէ հաստատեալ կամ հաշուեալ ըստ օրինաց տերութեան ի կարգի պարզ հոգևորականաց, քստ այնմ և չէ ընկալեալ ի Սինոդէս երբևիցէ դարձագրի ի հոգևորականութենէ» (Հայկական ՍՍՌ-ի Ժողովուրդագրության կից պետական ձեռագրատուն — Մատենադարան, Երիտական նյութերի ժողովածու, № 1, 1941, էջ 202):

Այս փաստաթղթերից հատվածաբար օգտագործված են № 15-ը (աշխարհաբարի վերածած) և 16-ը Ե. Շահապիզի «Դիվան Միքայել Նալբանդյանի» զբրքում (տես էջեր 44 և 46):

Վավերագրեր 18—24.— Այս վավերագրերը Կոզկասի փոխարքա Վորոնցովի,

Ներսես կաթողիկոսի, հալիբյանի, Ջալալյանի և Եկենյանի միմյանց գրած նամակներն են, որոնք ցույց են տալիս, թե Նալբանդյանի հակառակորդները ինչպիսի եռանդով, միջոցների մեջ խտրություն չգնելով, հետապնդել են նրան. միաժամանակ փաստաթղթերից երևում է, որ Նալբանդյանը կարողացել է նախօրոք տեղեկանալ իր թշնամիների դավադրությունների մասին և խուսափել նրանց լարած որոգայթներից: Այս տեսակետից խիստ ուշագրավ է 1853 թ. հուլիսի 3-ին Ջալալյանին գրած հալիբյանի նամակը, որից երևում է, որ Նոր-Նախիջևանի մագիստրատը հատուկ պահակ է նշանակած եղել քաղաքում, որ Նալբանդյանին քաղաք մուտք գործելու պես, ձերբակալեն, սակայն այդ չի հաջողվում. Նալբանդյանը 1853 թ. հունիսի 5-ին գալիս է Նոր-Նախիջևան, և մինչև մագիստրատը կտեղեկանար այդ մասին, մեկնում է Քիշինև: Ուշագրավ է, որ Նալբանդյանն իրեն հետապնդողներին մուրհեցնելու նպատակով հակասական և տարբեր լուրեր է տարածել իր մեկնելու վալրի մասին, ինչպես այդ երևում է Ջալալյանի՝ 1853 թ. հունիսի 21-ին հալիբյանին գրած նամակից:

№ 20 վավերագրից մի հատված տպագրված է Գ. Հարությունյանի «Կենսագրական նյութեր Միքայել Նալբանդյանի մասին» հոդվածում («Էջմիածին» ամսագիր, 1948, № 10—12):

№ 23.— Այս վկայականը Մ. Վեհապետյանն ուղարկել է Նալբանդյանին այն ժամանակ, երբ վերջինս արդեն գտնվում էր Պետերբուրգում:

Վավերագրեր 25 և 26.— Կաթողիկ վարժապետ Մ. Եկենյանը, որի ազիտությունը Նալբանդյանը ցույց էր տվել 1846 թ. և կտրականապես հրաժարվել նրա «գպրոցին» հաճախելուց, դարձել էր Նալբանդյանի կատաղի հակառակորդներից մեկը: Նա սևտորեն գործակցում էր Ներսես կաթողիկոսին, հալիբյանին և Ջալալյանին՝ փաստորեն կատարելով լրտեսի դեր. ընտրոշ է, որ հալիբյանի մի շարք գրությունները Նալբանդյանի դեմ գրված են Եկենյանի ձեռքով: Այստեղից հասկանալի է Նալբանդյանի խոր ատելությունը նրա նկատմամբ:

Միանգամայն պարզ է, թե ինչու՞ Սինոդը ընթացք չի տվել Ներսես կաթողիկոսի հավատարիմ գործակալ Եկենյանի դեմ Նալբանդյանի գրած այս բողոքին:

Վավերագիր 27.— Հ. հալիբյանի 1853 թ. մարտի 9-ի զեկույցը Տագանրոգի Բաղաբապետ Ա. Կ. Լիվենին:

Այս վավերագրից հայտնի է դառնում, որ քահանա Սղիա Շաբշեկյանը 1852 թ. իր դեմ հարուցված գործի առթիվ բողոք է ներկայացրած եղել կառավարող սենատ, որի մեջ գանգատվել է Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարության անդամների, Ներսես կաթողիկոսի, Սինոդի, վերջինիս դատախազի և հատկապես քաղաքագլուխ Հ. հալիբյանի դեմ: Կառավարող սենատից Շաբշեկյանի բողոքն ուղարկել են ներքին գործերի մինիստրություն, իսկ այստեղից՝ Տագանրոգի քաղաքապետին: Վերջինս բացատրություն է պահանջել Հ. հալիբյանից. ահա այդ բացատրությունն է ներկա փաստաթուղթը:

Ուշագրավ է, որ հալիբյանը, նախքան Լիվենին պատասխանելը, 1852 թ. նոյեմբերի 18-ի նամակով այդ գրության բովանդակության մասին տեղյակ է պահել Ներսես կաթողիկոսին (Հայկական ՍՍՌ պետ. կենտ. արխիվ, ֆ. 58, գ. 4, թթ. 4—5):

հալիբյանի այս պատասխանի մեջ ուշագրավ է նրա այն ցուցումը, որ 40-ական թվականների վերջերից Նոր-Նախիջևանի «կայսերաշնորհ» ինքնավա-

րությունը ցարական կառավարության կողմից սահմանափակումների մեջ է դրվել և Նոր-Նախիջևանը ենթարկված է եղել Տաղանթոզի քաղաքապետութայնը: Խալիբյանը խոստովանում է, որ վերջին 9 տարվա ընթացքում ինքը սերտ կապ է պահպանել Ա. Կ. Լիվինի հետ, և որ այդ ժամանակամիջոցում չի եղել մի ամիս, որ չնհրկայանար նրան և իր կարգադրությունները չհամաձայնեցնեի Տաղանթոզի քաղաքապետի հետ:

Անկասկած է, որ Եարջնիկյանի բողոքագրում բերված փաստերի զգալի մասը համապատասխանում էր իրականությանը, սակայն անհրաժեշտ է նշել, որ նրա բողոքագիրը սկզբունքային բնույթ չէր կրում և բխում էր զուտ անձնական զրդումներից: Այդ մասին է վկայում Եարջնիկյանի հետագա ողջ վարքագիծը: Այստեղ հրապարակվող №№ 13 և 14 փաստաթղթերից երևում է, որ բողոքագիրը շարադրելուց ամիսներ հետո, Եարջնիկյանը խորապես զղջացել է և բնդհանուր լեզու է գտել Խալիբյանի հետ, վերջինիս միջնորդությամբ ներսես կաթողիկոսը ներել է նրան, այնուհետև, Եարջնիկյանը դարձել է Խալիբյանի և Ներսեսի հավատարիմ գործակիցն ու կամակատարը, իսկ 1866—1867 թթ. Նալբանդյանի հանդիսավոր թագման առթիվ սկսված գործում նա հանդես է եկել լրեսեսի դերում:

II. ՆԱԼԲԱՆԻՅԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ (1853—1857)

Վալերագիր 28.— Ինչպես հայտնի է, Նալբանդյանը Մոսկվա ժամանեց 1853 թ. հուլիսի երկրորդ կեսին, մտադրություն ունենալով ստանձնել հայոց լեզվի կրտսեր ուսուցչի պաշտոնը Լազարյան ճեմարանում: Այս վավերագրից երևում է, որ նա Մոսկվա մեկնելիս Մատթեոս Վեհապետյանից վերցրած է եղել երկու հանձնարարական նամակ՝ Լազարյան ճեմարանի հուղարարձու Հովհ. Լազարյանի և նույն ճեմարանի ուսուցիչ մագիստրոս Մսեր Մսերյանի անունով: Վերջինից Նալբանդյանը տեղեկանում է, որ Լազարյան ճեմարանում հայոց լեզվի ուսուցչի կոչման իրավունք ձեռք բերելու համար քննություն կարող են տալ միայն նույն ճեմարանի շրջանավարտները, իսկ այլ ուսումնարաններ ավարտածները պարտավոր են ներկայացնել համապատասխան վկայական, եթե այդպիսին չունեն, պետք է քննության ենթարկվեն Պետերբուրգի համալսարանում: Եվ քանի որ Նալբանդյանը չէր ավարտել որևէ կանոնավոր դպրոց և չունեի պահանջվող վկայականը, ուստի նա մեկնում է Պետերբուրգ՝ այնտեղի համալսարանում քննություն տալու և Լազարյան ճեմարանի հայոց լեզվի կրտսեր ուսուցչի իրավունք ստանալու համար: Ուշագրավ է այն, որ Հովհ. Լազարյանը, հարգելով Մ. Վեհապետյանի միջնորդությունը, հրամանագրում է ճեմարանի գիրեկատոր Ս. Ի. Զելենոյին՝ ընդունել Նալբանդյանին հայոց լեզվի կրտսեր ուսուցչի պաշտոնում, չնայած նա (Նալբանդյանը) դեռևս քննություններ չէր հանձնել:

Հրատարակվող վավերագրից երևում է նաև, որ սկզբնական շրջանում Մ. Մսերյանը, Մ. Վեհապետյանի հանձնարարությամբ, օգնել է Նալբանդյանին ճեմարան ընդունվելու գործում, սակայն հետագայում, Զալալյանի և Խալիբյանի հետ ունեցած նամակագրության միջոցով իմանալով Նալբանդյանի ըմբոստ, «հանդուգն» քնավորության մասին, կտրականապես փոխում է իր վերաբերմունքը՝ դառնալով Նալբանդյանի մոլի և անհաշտ հակառակորդներից մեկը:

Վալերագրեր 29—31 և 34.— Մոսկվա մեկնելուց հետո էլ, Նալբանդյանի հակառակորդները՝ ներսես կաթողիկոսը, Ս. Վ. Զալալյանը, Հ. Խալիբյանը և Մկ. Եկենյանը շարունակել են կատաղի կերպով հետապնդել նրան: Այդ հետապնդումների արդյունքն այն եղավ, որ 1854 թ. հունվարի 23-ին Նալբանդյանը ձերբակալվեց, և չնայած երկօրյա բանտարկությունից հետո, Նազարյանի երաշխավորությամբ ազատվեց, բայց զրկվեց Լազարյան ճեմարանում ստանձնած պաշտոնից: Սակայն, ինչպես ցույց են տալիս այստեղ տպագրվող վավերագրերը, Նալբանդյանի հակառակորդները այդքանով չեն բավարարվել: Նրանք ամեն միջոց գործադրել են, որպեսզի Նալբանդյանին զրկեն պետական ծառայության կամ համալսարան ընդունվելու հնարավորությունից: Այսպես, Սարգիս վարդ. Զալալյանը Հ. Խալիբյանին ուղղած 1854 թ. մայիսի 26-ի նամակում սպառնում է զրկել ուր հարկն է, որպեսզի Նալբանդյանին չհաջողվի «ոնգիստրատորի» աստիճան ստանալ, որ ըստ երևույթին, Լազարյան ճեմարանից ազատվելուց հետո, Նալբանդյանն անհրաժեշտ է համարել ձեռք բերել՝ մի այլ տեղ պաշտոն ստանձնելու նպատակով:

Ուշագրավ է այն, որ ներսես կաթողիկոսն իր գործակալների միջոցով տեղեկանալով, որ Նալբանդյանը պաշտոն է ստացել Լազարյան ճեմարանում, դիմում է Լազարյաններին, և խստիվ հանդիմանելով, որ վերջինները հովանավորում են Նալբանդյանին, կտրուկ կերպով պահանջում է իր ձեռքն հանձնել «հանդուգն» և «անհնազանդ դպիրին»: Արևես կաթողիկոսի զայրույթն էր զրգռել հատկապես այն հանգամանքը, որ Լազարյանները հովանավորելով Նալբանդյանին, կատարում էին իր հակառակորդի՝ Մատթեոս Վեհապետյանի կամքը՝ հակառակ իր «հովվապետական» իշխանության: Իրականությունն այն է, որ Լազարյանները, չիշտ է, սկզբնական շրջանում, հաշվի առնելով Մ. Վեհապետյանի միջնորդությունը, աջակցել են Նալբանդյանին ուսուցչի պաշտոնով Լազարյան ճեմարանն ընդունվելու գործում, սակայն, շատ շուտով փոխել են իրենց վերաբերմունքը: Այդ պարզորոշ երևում է 1854 թ. Հովհ. Լազարյանի և ճեմարանի գիրեկատոր Ս. Ի. Զելենոյի գրադրությունից. այդ հանգամանքը նշում է նաև Ս. Վ. Զալալյանն իր՝ 1854 թ. մայիսի 26-ին Հ. Խալիբյանին ուղղած նամակում, բնդգծելով, որ Լազարյանները Նալբանդյանի նկատմամբ արդեն փոխել են իրենց վերաբերմունքը (տես վավերագիր № 30):

Սակայն, Լազարյանները, չնայած այդ հանգամանքին, Մ. Վեհապետյանին հավատացնում էին (տես վավերագիր № 34), որ իրենք, հակառակ ներսես կաթողիկոսի ցանկություն, շարունակում են «հովանավորել» և «պաշտպանել» Նալբանդյանին:

Վալերագրեր 32—33.— Այս երկու վավերագրերը կարևոր նշանակություն ունեն մի կողմից՝ Նալբանդյանի և Վեհապետյանի, և մյուս կողմից՝ Լազարյանների փոխհարաբերությունները պարզաբանելու տեսակետից: Առաջին վավերագիրը (№ 32) բացորոշ ցույց է տալիս, թե ինչ աստիճանի թշնամական է եղել Լազարյանների վերաբերմունքը Նալբանդյանի նկատմամբ: Վեհապետյանը Նալբանդյանի վիճակի ծանրությունը բնութագրելու համար նշում է, թե «այն (Նալբանդյանի վիճակը) հազիվ թէ բանտից լավ լինի»: Նալբանդյանը և Վեհապետյանը բազմիցս դիմում են Լազարյաններին՝ Նալբանդյանին վերադարձնելու ճեմարանում գտնվող նրա փաստաթղթերը, ինչպես նաև տալու վկայական ուսուցչական կոչման մեջ հաստատված լինելու մասին. առանց այդ փաստաթղթե-

րի նազրանդյանը զրկվում էր համալսարան ընդունվելու հնարավորությունից, սակայն Լազարյանները լուսիջան են մատնում թե՛ Վեհապետյանի, և թե՛ Եփրեմ Ալթունյանի միջոցով նալրանդյանի դիմումներն այդ մասին: Մյուս կողմից՝ № 32 վավերագիրը ցույց է տալիս, թե որքան շնորհ, բարեկամական է եղել Վեհապետյանի վերաբերմունքը նալրանդյանի նկատմամբ:

Սույն երկու վավերագրերը շնայած որ տպագրված են Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագրում» (1954, № 7, վավ. №№ 22—23), սակայն, նկատի ունենալով նրանց կարևորությունը, անհրաժեշտ համարեցինք զետեղել սույն ժողովածուի մեջ:

Վավերագիր 35.— Լազարյան ճեմարանի տեսուչ Մկրտիչ էմինը 1855 թ. հունիսի 14-ին Հովհ. Լազարյանին ուղղած նամակում հայտնում է, որ Միք. Նալրանդյանը մտադրություն ունենալով մտնել Մոսկվայի համալսարանը, դիմել է իրեն՝ խնդրելով տալ վկայական այն մասին, որ գտնվում է տնտեսական աննպաստ պայմաններում և հնարավորություն չունի վճարելու համալսարանում դասախոսություններ լսելու համար սահմանված 50 աուրլի գումարը:

Այստեղ հրատարակվող փաստաթուղթը Մկ. էմինի հիշյալ նամակի պատասխանն է: Փաստաթուղթը կարևոր է այն տեսակետից, որ ցույց է տալիս, թե ինչպիսի ծանր պայմաններում է եղել նալրանդյանը Մոսկվայի համալսարանը, որպես ազատ ունկնդիր, ընդունվելու ժամանակ. սրանով հերքվում են նալրանդյանի հակառակորդների այն պնդումները, թե իբր, նա, առաջնորդարանում բարտուղար եղած ժամանակ, մեծ գումարներ էր կուտակել:

Վավերագիր 36.— Մանր Մսերյանին ուղղած նալրանդյանի նամակը դեռևս չի հայտնաբերված, սակայն տպագրվող վավերագրից պարզ երևում է, որ այդ ժամանակ (1857 թ.) նալրանդյանի և Մսերյանի հարաբերությունները խիստ սրված են եղել: Գծվար չէ ենթադրել, որ նալրանդյանի հիշյալ «նամակը» փաստորեն եղել է մի սուր պամֆլետ՝ ուղղված Ներսես կաթողիկոսի, Մանր և Զարմայր Մսերյանների դեմ: Իր այդ պամֆլետով նալրանդյանը պատասխանել է Մսերյանների կողմից իր դեմ գործադրվող հալածանքներին:

Այս փաստաթղթից երևում է նաև Հովհ. Լազարյանի որոշակիորեն թշնամական վերաբերմունքը նալրանդյանի նկատմամբ. նա գրում է, որ եթե նալրանդյանը շարունակի նման նամակներով «անհանգստացնել» Լազարյան ճեմարանի «կրոնուսույցին» (Մսերյանին), ապա ինքը «ստիպված» կլինի դիմել բարձրագույն իշխանության, խնդրելով արտաքսել նալրանդյանին մայրաքաղաքից:

Վավերագիր 37.— Պետերբուրգի համալսարանի թեկնածուի գիտական տատիճան ստանալու մասին նալրանդյանին տրված այս վկայականը տպագրվում է առաջին անգամ:

III. «ՀՅՈՒՍԻՍՍՓԱՅԼԻ» ՇՐՋԱՆ

Վավերագրեր 38—52.— Արդեն հրատարակված վավերագրերից հայտնի է, որ նազարյանը և նալրանդյանը, դեռևս 1854 թ. մտադիր են եղել հրատարակել «Ռուսիա» անունով ամի հայկական օրագիր, աշխարհարար լեզվով, հասարակին հասկանալի: Սակայն, այդ ժամանակ նրանց չի հաջողվել իրագործել իրենց մտադրությունը (Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր», Հաս. գիտ., 1953, № 12):

Հայերեն ամսագիր հրատարակելու հարցը նազարյանին և նալրանդյանին

կրկին սկսում է զբաղեցնել 1856 թ., երբ Ղրիմի պատերազմից հետո ցարական կառավարությունը ստիպված էր մեղմել մամուլի նկատմամբ եղած խստությունները:

1856 թ. մարտի 18-ին ամսագրի հրատարակության թույլտվություն ստանալու համար Ստ. Նազարյանը դիմում է Լուսավորության մինիստր Ա. Ս. Նորովին, դիմումին կից ներկայացնելով «Հյուսիսափայլի» ծրագիրը: Ինչպես հայտնի է, միայն մեկ տարի հետո, 1857 թ. մարտի 17-ին Ալեքսանդր երկրորդ ցարը «բարեհաճեց» թույլատրել հայերեն լեզվով ամսագիր հրատարակել, պայմանով, եթե «դասատուն (Մկրտիչ Բերոյանը), որին ենթադրվում էր հանձնել զբարընությունը, իր անձնավորությամբ վայելում է կառավարության վստահությունը»:

Այստեղ տպագրվող վավերագրերը վերաբերում են «Հյուսիսափայլի» հրատարակության թույլտվության, հրատարակչի (Ստեփանոս Նազարյանի) և գրաբնիչի (Մկրտիչ Բերոյանի) քաղաքական վստահության հարցերին:

«Հյուսիսափայլի» ծրագիր-նախագծի երկու վարիանտ տպագրվել են Հայկական ՍՍԻ Գիտ. ակադեմիայի «Տեղեկագրում» (1948, № 11 և 1953, № 12): Այստեղ բերված վարիանտ ուշագրավ է իր ընդարձակ ներածականով, որ հրատարակվում է առաջին անգամ,

Վավերագրեր 53—72, 74—76.— «Հյուսիսափայլն» սկսեց հրատարակվել 1858 թ. հունվարից: Առաջին ամսատետրակներից իսկ այն իր վրա գրավեց հասարակության ուշադրությունը: Լինելով պրոգրեսիվ ուղղության առաջին պարբերականը հայ իրականության մեջ, «Հյուսիսափայլը» նվաճեց ընթերցողների խավերի համակրությունը, միաժամանակ ռեակցիոն հոսանքի ներկայացուցիչները «Հյուսիսափայլի» և նրա խմբագրի ու գլխավոր աշխատակցի (Նազարյանի և նալրանդյանի) նկատմամբ լցվեցին բացահայտ թշնամանքով ու դատաբանությամբ: «Հյուսիսափայլի» դեմ առաջինը հանդես եկավ Գարրիեն վարդապետ Այվազովսկին: Նա նախ նամակով փորձեց համոզել Ստ. Նազարյանին, որ վերջինս «զգուշանա» և իր ամսագրում այլևս չտպագրի «գրգռեցուցիչ» հոդվածներ: Նազարյանին համոզելու այդ փորձը հաջողությամբ չպսակվեց: 1858 թ. հոկտեմբերի 2-ին Գ. վ. Այվազովսկին դիմում է Խաչ. Լազարյանին և սպառնում, որ եթե նազարյանը այսուհետև էլ «Հյուսիսափայլի» էջերում տեղ կտա «անպատշաճ» «վրդովեցուցիչ» հոդվածների, ապա ինքն «ստիպված կլինի» դիմելու ներքին գործերի մինիստրին: Եվ իրոք, երկու ամսից հետո Այվազովսկին իր սպառնալիքը կատարում է: Նույն 1858 թ. դեկտեմբերի 7-ին նա գրում է մի ընդարձակ լրտեսագիր ներքին գործերի մինիստր Ս. Ս. Լանսկոյին, պահանջելով փակել «Հյուսիսափայլ» «խռովեցուցիչ» ամսագիրը, իսկ նալրանդյանին պատժել «օրենքի ողջ խստությամբ» (վավերագիր № 56): Գ. վ. Այվազովսկու այդ լրտեսագիրը հայերեն թարգմանությամբ լույս է տեսել նախ «Գրական թերթում» (1941 թ. № 11) և ապա նալրանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» երկրորդ հատորում (էջ 428—429): Այստեղ առաջին անգամ տպագրվում է առեքրեն բնագիրը:

Բնորոշ է Խաչ. Լազարյանի պատասխանը Գ. վ. Այվազովսկու գրությանը (վավերագիր № 54). «Հիմնավոր» և «արդարացի» համարելով Այվազովսկու կարծիքը «Հյուսիսափայլի» մասին, Լազարյանը հայտնում է, որ ինքը անմիջապես գրել է Ստ. Նազարյանին, պահանջելով, որ դադարեցնի «անպատշաճ» ու «վնասակար» հոդվածների տպագրությունը հոգևորականների և Լազարյան ճե-

մարանում ծառայող այն անձանց վերաբերյալ (Մսեր Մսերյանի, Մկ. Էմինի), որոնց հետ «Հյուսիսափայլի» խմբադիրն ինքը և նրա «վնասակար աշխատակիցը» (նկատի ունի Միք. Նալբանդյանին) թշնամական հարաբերությունների մեջ են: Խաչ. Լազարյանի գրությունը Ստ. Նազարյանը պատասխանել է զգալի ուշացումով՝ նույն 1858 թ. նոյեմբերի 26-ին: Այդ պատասխանը առաջիմ դժբախտաբար չի հայտարարված, սակայն խաչ. Լազարյանի նույն թ. դեկտեմբերի 6-ի՝ Ն. Գ. Գեղյանովին ուղղած պաշտոնական գրությունից (վավերագիր № 55) պարզ երևում է, որ Նազարյանն իր պատասխանում համարձակ կերպով պաշտպանել է իր և իր աշխատակիցների իրավունքները: Լազարյան ձեռնարանի հոդարարձուին զայրացրել է նախ և առաջ Նազարյանի բացատրականի ուշացումը, վերջինս նա պատահական չի համարում, այլ կարծում է, որ այդ հանգամանքը կապված է «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ ամսատետրակի հրատարակման փաստի հետ:

Խաչ. Լազարյանը զայրույթով է նշում, որ Նազարյանը փոխանակ պահանջվող բացատրությունը տալու, «շտապեց հրատարակել զարձայլ երկու նոր վիտրոպական հոդվածներ նոյեմբեր ամսվա զբրում»: Ինչպես հայտնի է, «Հյուսիսափայլի» այդ ամսատետրակում տպագրված են Նալբանդյանի «Մխիթար Մեղսատացի և Մխիթարյանը» և «Նամակ առ հրատարակողը» հոդվածները, որոնց մեջ անողորմ մերկացված են Հ. Խաչիբեյանը, Գ. վ. Այվազովսկին և Ներսես կաթողիկոսը: Խաչ. Լազարյանը «Հյուսիսափայլի» այդ ամսատետրակի լույս ընծայումը համարում է «իզուր, անվայելուչ և նույնիսկ դատապարտելի»: Այդ այնքան է զայրացնում Լազարյանին, որ նա հրատարակում է այլևս շարունակել գրագրությունը Նազարյանի հետ և «պատշաճ» է համարում, որ իր գիտողությունները «Հյուսիսափայլի» հրատարակչին հայտնվեն Ն. Գ. Գեղյանովի միջոցով: Վերջինս, կատարելով իր պետի կամքը, 1858 թ. դեկտեմբերի 11-ին Ստ. Նազարյանին հայտնելով խաչ. Լազարյանի «գիտողությունները», միաժամանակ տեղեկացնում է, որ «Հյուսիսափայլի» դեմ եղած բողոքներն արդեն հայտնի են կառավարությանը: Եվ իրոք, Գ. վ. Այվազովսկու լրտեսագրի հետևանքով «Հյուսիսափայլի» հարցով սկսել էին զբաղվել ցարական կառավարության մի շարք հիմնարկություններ, ինչպիսիք են՝ ներքին գործերի և լուսավորության մինիստրությունները, Կովկասյան կոմիտեն, Պետերբուրգի գրաքննական կոմիտեն, Կովկասի փոխարքայի գրասենյակը և այլն (տես վավերագրեր 65, 67, 74—76):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ «Հյուսիսափայլի» դեմ սկսված հալածանքի իսկական գրգռապատճառը հանդիսացել են Նալբանդյանի հոդվածները, հատկապես 11-րդ ամսատետրակում տպագրված նրա «Նամակ առ հրատարակողը»: Խաչ. Լազարյանը որոշակիորեն ակնարկելով Նալբանդյանին, նրան անվանում է «վնասակար աշխատակից», իսկ Գ. վ. Այվազովսկին, ինչպես վերևում նշվեց, պահանջում էր «օրենքի ողջ խստությունը պատժել» հենց միայն Նալբանդյանին:

57 և 63 վավերագրերը ակնառու կերպով ցույց են տալիս, որ Գ. Այվազովսկին ծրագրելով «Հյուսիսափայլը» արգելել և Նալբանդյանին պատժել «օրենքի ամենայն խստությամբ», սերտորեն համագործակցում էր Խ. Լազարյանի հետ: Նա «մեծագույն գոհունակությամբ» նշում էր, որ այդ հարցում երկուսը կանգնած են միևնույն տեսակետի վրա:

Գ. վ. Այվազովսկու լրտեսագրի կապակցությամբ Նազարյանը մի քանի անգամ բացատրագրեր է ներկայացրել Խաչ. Լազարյանին, Ն. Գ. Գեղյանովին և Ս. Պետերբուրգի գրաքննական կոմիտեին: Այդ բացատրագրերից մեր ձեռքն են հասել միայն երկուսը. առաջինը, որ գրված է 1858 թ. նոյեմբերի 26-ին և ուղղված է Խաչ. Լազարյանին, հիշատակվում է վերջինիս՝ 1858 թ. դեկտեմբերի 6-ի՝ Ն. Գ. Գեղյանովին ուղղված գրության մեջ (տես վավերագիր № 55): Այս բացատրագրի հայերեն թարգմանությունը տպագրել է Լեոն «Հայ հրատարակատեսության հիսնամյակը» հոդվածում (տես «Գրական-գիտական ժողովածու», Քիֆլիս, 1908, էջ 57—60): Նազարյանի հիշյալ գրությունից պարզ է դառնում, թե ինչու էր Խաչ. Լազարյանն այդքան ռայրացել ու վրդովվել: Ստ. Նազարյանը համարձակ կերպով հերքում է իր ամսագրի դեմ հարուցված մեղադրանքները, նշելով, որ դրանց (այդ մեղադրանքների) հեղինակները լուսավորության և պրոգրեսի թշնամիներ են. «Ամեն մի ձեռնարկություն,— գրում է Նազարյանը,— որ նպատակ ունի ազգի մտավոր և բարոյական կյանքի առաջադիմությունը, գրանով իսկ պետք է կոխվ մղե հին կարգերի դեմ: Առաջադիմության յուրաքանչյուր քայլը միշտ հանդիպել է հնություն կողմնակիցների և երկրպագուների ետանդուն գիմազություն... Ազգերի ընդհանուր կացության բարվորումը, իմ տկար հասկացողությամբ, ոչ մի երկրում չէ անցել առանց խռովությունների, որոնք բարոյական աշխարհում նույն նշանակություն ունեն, ինչ որ ֆիզիկական աշխարհում ցավերը և երկունքը երկխաչի ծննդաբերության ժամանակ»: Պատասխանելով այն հարցին, թե ի՞նչն է պատճառը, որ Մոսկվայում և Պետերբուրգում ապրող հայերից ոմանք դժգոհ են «Հյուսիսափայլից», Նազարյանը նշում է, որ դրանք իր անձնական կամ զաղափարական հակառակորդներն են, և ապա ավելացնում է հետևյալ ուշագրավ տողերը. «Հասարակության կարծիքը իմ ամսագրի մասին շատ նպաստավոր է: Շատ անգամ ես ստացել եմ անձանոթ անձերից նամակներ, որոնցով շնորհակալություն են հայտնում և զովաբանում են ամսագրի մեջ հրատարակած հոդվածների ժամանակակից ուղղությունը և նրանց օգտակարությունը, և միևնույն ժամանակ ի սրտե ցանկանում են իմ ձեռնարկությանը հաջողություն և հարատևություն»:

Իր մի այլ բացատրագրում՝ ուղղված գրաքննիչ Ս. Բերոյանին (տես վավերագիր № 69), Նազարյանը կրկին վկայակոչում է իր ամսագրի նկատմամբ հասարակության արտահայտած համակրանքը: Ուշագրավ են Նազարյանի գրության վերջին տողերը. այստեղից երևում է, որ Նալբանդյանը, որպես Այվազովսկու լրտեսագրի մեջ հիշված հոդվածների հեղինակ, այդ ժամանակ մեկնել էր Պետերբուրգ՝ գրաքննական կոմիտեին անձա՛ւր բացատրություն տալու «երկու տողի» մեջ Նալբանդյանը որոշակի կերպով խոսում է ներքին գործերի մինիստր Ս. Ս. Լավոյին գրած Գ. վ. Այվազովսկու լրտեսագրի և Պետերբուրգի գրաքննական կոմիտեում իրենից պահանջված բացատրության մասին. «պ. Այվազովսկին առաջարկում էր բազմապի մինիստրին, «Հյուսիսափայլ» վնասակար օրագիրը դադարեցնել և մեզ ձգել սաստիկ պատժի տակ, օրենքի բովանդակ խստությամբ: Գուցե պ. Այվազովսկին հայրական հոգողությամբ պարաստել էր մեզ տեղի բնակության ներշնչել կամ կրանոյարակ... մեր չըմուծությունը մի փոքր բարեխառնելու համար Սիրիբի սառնամանիքը... (բուն առոջապահական խորհրդով): Պ. Այվազովսկին չէ կարող ուրանալ այս իրողությունը, բայց որում եր-

կար քննութիւնը և գրագրութիւնը եղան միեկտրերի և ցենզուրյան ժողովի մէջ, այլև առաջարկվեցան հարցմունքներ...» («Նրկերի լիակատար ժողովածու», հատ. III, 1940, էջ 31):

Գրաքննական կոմիտեի նախագահը բացատրութիւն է պահանջում նաև «Հյուսիսափայլի» գրաքննիչ Մկրտիչ Բերոյանից, Վերջինս իր ընդարձակ բացատրագիրը ներկայացնում է 1859 թ. ապրիլի 4-ին (տես վավերագիր № 70): Այդ բացատրագիրը նախ և առաջ ուղարկւմ է նրանով, որ այն բնութագրում է Բերոյանին, որպէս «Հյուսիսափայլի» բարեկամի: Բերոյանը նշում է, որ «Բոլոր հողվածները, որ նազարյանը տպագրում է իր ամսագրում՝ ընդհանուր երկրաբանութեան, ընդհանուր պատմութեան, բնագիտութեան, ինչպէս և բարոյագիտական, էսթետիկական և գրական-գեղարվեստական բաժիններում,— հենց սկզբից ձեռնարկում են ժողովրդի կրթութեան բարի նպատակին...»

Այդ հողվածները շունեն ոչ անբարենպաստակ, ոչ էլ վնասակար ուղղութիւն, ոչ կրօնի ոգով, ոչ իսկ խտամբեր բարոյականութեան սկզբունքներին հակառակ որևէ բան, ինչպէս կարծում է վարդապետ Այվազովսկին, իսկ եթէ խմբագիրը,— շարունակում է Բերոյանը,— իր դեմ եղած հարձակումներին պատասխանել է իր պատիվը պաշտպանելու նպատակով, ապա դրա համար նա լիովին իրավունք է ունեցել: Հատկապէս կանգ առնելով «Հյուսիսափայլի» 1858 թ. № 11-ում տպագրված նալբանդյանի երկու հողվածի վրա («Մխիթար Սերաստացի և Մխիթարյանը», «Նամակ հրատարակողին») և շարագրելով հողվածների հակիրճ բովանդակութիւնը, Բերոյանը նշում է, որ դրանցից ոչ մեկը այն չէ, ինչ կարծում է Այվազովսկին: Բերոյանը եզրակացնում է, որ Այվազովսկու գանգատը միանգամայն անարդար է և անհիմն. «չունի ոչ մի օրինական հիմք և չի կարող առիթ հանդիսանալ քննութիւն (պրոցես) սկսելու և դրանով կասկած հարուցելու խրմբագրի և մյուսների նկատմամբ»: Բերոյանը նշում է, որ նազարյանի ամսագրում մինչ այժմ տպագրված բոլոր հողվածները համապատասխանում են գրաքննութեան կանոններին և Ռուսաստանի այժմյան կրթութեան ու լուսավորութեանը:

Վավերագիր 73.— Ուղարկւմ է, որ նույն այդ ժամանակ՝ 1859 թ. մայիսի 11-ին Արել վարդապետ Մխիթարյանին ուղղած նամակում, նազարյանը հիշատակում է գրաքննութեան կողմից մերժված նալբանդյանի մի այլ հողվածը. «Մի նամանապիսի շատ գեղեցիկ պատասխանատվութիւնն ալ. նալբանդյանի գրչից և կողմից ընդդէմ Պալասանյանին, այս օրերումս ետ գարծուց ինձ ցենսուրյան կոմիտեար, պահանջելով, որ ռուսերեն թարգմանած դորան ուղարկէի նորան. ըստ որում այլպէս կարող չէր ցենսուրյան կոմիտեար վճռել գրչագրի տպագրութիւնը: Ասել է, թէ անկարելի էր մեզ պաշտպանել մեզ, երբ որ մյուսները դազանաբար հարձակվում էին մեր վերա: Եվ նալբանդյանցի գրվածը լինելով մի մեծապարունակ ճառ, համարյա թէ նինզ քերտ տպած, անկարելի էր ինձ ձեռնամուկ լինել այդ գործի ռուսերեն թարգմանութեանը, որ պիտո էր հափշտակեր ձեռքիցս մի ամիս ժամանակ և ամենևին խառնակեր իմ գործակատարութեան ընթացքը: Հեղինակը լինելով այժմուս Թեմզի վերա կոնզոնումը, հետ ուղարկեցի նորան յուր գրվածը, խնդրելով տպել նորան «Արևուտը» օրագրի մէջ, որ Փարիզումը հրատարակվում է պ. Ոսկանյանի ձեռքով»:

IV. ՀՆԳԿԱԶԱՅ ԿՏԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԸ

18-րդ դարի վերջին հնդկահայ հարուստ վաճառականներից մի քանիսը Նոր-Նախիջևան քաղաքին են կտակում իրենց շարժական և անշարժ գույքը: Հնդկահայ ժառանգութեան գործը, սակայն, տասնյակ տարիներ ժառանգում է անուշաղբութեան, ժառանգութիւնը ձեռք բերելու ուղղութեամբ եղած փորձերը (հատկապէս ներսես Աշտարակեցի կաթողիկոսի նախաձեռնութեամբ) արդունք չեն տալիս:

Ըստ Կալիկաթում գործող անգլիական օրենքների, կտակավանդութիւնից 70 տարի անցնելուց հետո կտակները կորցնում են իրենց ուժը և ժառանգութեան տերերը (տվյալ դեպքում՝ Նոր-Նախիջևան քաղաքը) կորցնում են իրենց իրավունքները:

Միք. Նալբանդյանը «Հյուսիսափայլի» 1859 թ. № 5-ում տպագրում է մի հողված «Ազգային ժառանգութիւնը» վերնագրով, հրատարակելով նաև կտակների պատճենները: Նույն այդ հողվածում նա Նոր-Նախիջևանի հասարակութեանը կոչ է անում, քանի զեն ուշ չէ, ձեռք բերել ժառանգութեան կտակված գումարները և ամբողջութեամբ գործադրել քաղաքի աղքատ մասի երեխաների կրթութեան գործին՝ հիմնելով մի բարեկարգ դպրոց:

Այս բաժնում տպագրվող փաստաթղթերը պարզարանում են հնդկահայ կտակների գործի հանգամանքները և հատկապէս նալբանդյանի դերը այդ գործում:

Վավերագրեր 77—80.— Այս շարքի առաջին վավերագիրը (№ 77) Նոր-Նախիջևանի հասարակութեան ներկայացուցիչների (65 հոգի) դիմումն է քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանին՝ հնդկահայ կտակների մասին: Դիմումից պարզ երևում է, որ կտակների հարցի արժարժման խթան է հանդիսացել «Հյուսիսափայլում» տպագրված նալբանդյանի վերոհիշյալ հողվածը, որը և վկայակոչում են դիմումն ստորագրողները: Կ. Հայրապետյանը այս դիմումի հիման վրա 1860 թ. ապրիլի 19-ին պաշտոնական նամակով նալբանդյանին առաջարկում է հանձն առնել հնդկահայ կտակների գործը. նալբանդյանը ապրիլի 30-ին պատասխանում է Կ. Հայրապետյանին, առաջարկելով իր պայմանները (տես նալբանդյանի «Նրկերի լիակատար ժողովածու», հատ. IV, 1949, էջ 68—73): Կ. Հայրապետյանը համաձայնում է նալբանդյանի առաջարկած պայմաններին, և նույն թվականի հուլիսի 15-ին հրավիրում է հասարակական ժողով՝ հարցը օրինական կարգով լուծելու համար:

Այստեղ տպագրվող № 78 վավերագիրը հիշյալ ժողովի վճիռն է՝ վավերացված 248 ստորագրութիւններով: Ժողովում կտակների գործով Կալիկաթ մեկնելու համար երեսփոխաններ են ընտրվում Միքայիլ Նալբանդյանը և Հարութիւն Աճեմյանը: Նույն թվականի օգոստոսի 8-ին Նոր-Նախիջևանի հասարակական ժողովի ներկայացուցիչների և քաղաքագլուխ Կ. Հայրապետյանի ստորագրութիւններով արվում է երեսփոխանական թուղթ նալբանդյանին և Հար. Աճեմյանին (վավերագիր № 79): Թե՛ հասարակական ժողովի որոշումը և թե՛ երեսփոխանական թուղթը Մատթնոս կաթողիկոսը վավերացնում է 1860 թ. հոկտեմբերի 10-ին՝ նալբանդյանի ջեմիածնում եղած ժամանակ («Նրկերի լիակատար ժողովածու», հատ. IV, էջ 76):

№ 80 վավերագիրը Մատթնոս կաթողիկոսի՝ 1860 թ. հոկտեմբերի 14-ի

գրութիւնն է Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկուն հնդկահայ կտակների ձեռք բերման գործին աջակցելու վերաբերյալ:

Արխիվային այլ վավերագրերից երևում է, որ Նալբանդյանի հակառակորդներն ամեն միջոց գործադրել են, որպէսզի իրենց ձեռքը վերցնեն հնդկահայ կտակների գործը: Հասարակական ժողովի 1860 թ. հուլիսի 15-ի որոշումից անմիջապէս հետո նրանք բողոքել են այդ որոշման դէմ («Յերկերի լիակատար ժողովածու» հատ. IV, էջ 76): Նալբանդյանի հակառակորդների դրդամբ է, անշուշտ, որ հաշ. Լազարյանը 1860 թ. սեպտեմբերին դիմում է Մատթեոս կաթողիկոսին խնդրելով հնդկահայ կտակների գործը հանձնարարել Կարապետ վարդապետ Եահնազարյանին և Փարիզում Թյուրքիայի դեսպանատան խորհրդական, Գ. վ. Ալվազովսկու գործակից հակոբ Կրճիկյանին (տես՝ Հայկական ՍՍԻ Պեւ. կենտր. արխիվ, ֆոնդ 52, տնտեսական բաժին, գործ № 75, Բ. 21—22): Խաշ. Լազարյանի այդ գրութիւնն հիման վրա Մատթեոս կաթողիկոսը նույն թվականի հոկտեմբերին հատուկ կոնզակով հնդկահայ կտակների գործի համար երեսփոխաններ է նշանակում Կարապետ վարդապետ Եահնազարյանին և Հակոբ Կրճիկյանին (տես նույն տեղը, թերթ 23—24): Ուշագրով է, սակայն, որ Նալբանդյանը, որ այդ ժամանակ արդէն էլ միաձնում էր, կարողանում է հաղթահարել թշնամիների դիմադրութիւնը, մերկացնել նրանց դավերը, և կաթողիկոսին հաստատել տալ Նոր-Նախիջևանի հասարակութեան՝ իրեն և Հարութիւն Աճեմյանին տրված լիազորութիւնները: Այս հանդամները մի անգամ ևս վկայում է Նալբանդյանի գործը կամքն ու վճռականութիւնը իր հակառակորդների դէմ մղած պայքարում:

Վավերագիր 81.— Այս վավերագրից առաջին անգամ տեղեկանում ենք, որ Նալբանդյանը 1860 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին էլ միաձնում եղած ժամանակ 100 ոտրի է նվիրաբերել այնտեղ կառուցվելիք ուսումնարանի օգտին: Փաստը վկայում է Նալբանդյանի շինք վերաբերմունքը դեպի մանուկ սերնդի դաստիարակութեան գործը, որի համար նա գրամական նվիրաբերութիւն է կատարում իր սուղ միջոցներից:

Վավերագիր 82.— Նալբանդյանի 1861 թ. փետրվարի 8-ի և 22-ի նամակներից բերված քաղվածքները զգալի չափով տարբեր են բնագրերից (տես «Յերկերի լիակատար ժողովածու», հատ. IV, էջ 92—96). ամենայն հավանականութեամբ, Կ. Հայրապետյանը Նալբանդյանի մտքերը վերաշարադրել է և ոչ թե բերել նույնութեամբ: Գիտումի մեջ հիշված՝ Ալվազովսկու և Թադեոս արքեպիսկոպոսի դավերը, որոշ չափով, անշուշտ, դժվարացրին Նալբանդյանի գործը, բայց այնուամենայնիվ Նալբանդյանին հաջողվեց ցույց տալ, որ Նոր-Նախիջևանի հասարակութեան օրինական ներկայացուցիչն ինքն է, և ինքն է վարելու կտակների գործը: Նալբանդյանի հակառակորդներն այստեղ ևս պարտութիւն են կրել: Նալբանդյանը հաջողութեամբ ավարտելով կտակների գործը, 1861 թ. սեպտեմբերի 27-ին Կալիպաթայից մեկնում է:

Վավերագիր 83.— Նալբանդյանը 1861 թ. սեպտեմբերին Կալիպաթայում ստանալով հնդկահայ ժառանգութեան գումարների մի մասը, և հնարավորութիւն չունենալով սպասելու, տալիս է լիազորագիր Աբգարյաններին՝ ստանալու և Նոր-Նախիջևան ուղարկելու ինչպէս գումարի մնացած մասը, այնպէս էլ անշարժ կայրից յուրաքանչյուր տարի հասանելի եկամուտը: Նոր-Նախիջևանի հասարա-

կական ժողովը 1863 թ. ապրիլի 8-ի իր նիստում հաստատում է Նալբանդյանի տված լիազորագիրը, ժամկետ նշելով մինչև 1867 թվականը:

Կ. Հայրապետյանի՝ 1866 թ. մարտի 14-ին հատուկ հանձնարարութիւնների պաշտոնյա Կատակալիին տված բացատրութիւնից երևում է, որ Նոր-Նախիջևանի հասարակական ժողովն այդ նիստում միաձայն իր երաստագրութիւնն է հայտնել Միք. Նալբանդյանին, որ նա իր ատոզութիւնը և նույնիսկ կյանքը վստահել են թաղիկով հաջողութեամբ գլուխ է բերել հնդկահայ կտակների՝ տասնամյակների շարունակ ձգձգվող գործը (տես վավերագիր № 99):

Վավերագրեր 84—101.— Ինչպէս հայտնի է, Նալբանդյանը արտասահմանից վերադառնալուց հետո Նոր-Նախիջևան ժամանեց 1862 թ. հուլիսի 10-ին: Երեք օրից հետո նա պաշտոնական գրութեամբ դիմեց քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին, խնդրելով գումարել հասարակական ժողով, որպէսզի ինքը հաշվետվութիւն ներկայացնի հնդկահայերի ժառանգութեան գործի վերաբերյալ (տես «Յերկերի լիակատար ժողովածու», հատ. IV, էջ 126): Սակայն, հետևյալ օրն իսկ, հուլիսի 14-ին, Նալբանդյանը ձերբակալվում է՝ նախքան հաշվետվութիւն տալը:

Նալբանդյանի հակառակորդները զրպարտութիւններով լի լրտեսագիր են ուղղում Նովոռոսիյսկի և Բեսարաբիայի նահանգապետին, ներքին գործերի մինիստրին և ալլոց, թե իբր Նալբանդյանը հնդկահայերի ժառանգութեան գումարները յուրացրել է և դրա համար էլ հաշվետվութիւն չի ներկայացրել, և ալլն: Իր հակառակորդների այդ դավերին Նալբանդյանը տեղեկանում է բանտում. 1863 թ. հունվարի 18-ին Կ. Հայրապետյանին ուղղած պաշտոնական նամակում այդ առթիվ նա գրում է. «Ամբողջ քաղաքը գիտի, որ ես եկա Նախիջևան հուլիսի 10-ի երեկոյան և ձերբակալվեցի 14-ի առաւոտյան. ես հո՛ չէի կարող երեք օրվա ընթացքում պատրաստել հաշվետվութիւն, զուր նույնպէս չէիք կարող ժողով գումարել այդ խնդրի մասին, թեև թե՛ իմ և թե՛ Ձեր կողմից միջոցներ էին ձեռք անելիք գրանց նկատմամբ... Ես հարստութիւն չունեմ, բայց ունեմ պատիւ և ես պատրաստ եմ առաջին հնարավոր դեպքում լրիվ, ամենամանրամասն, մինչև վերջին կողմերը, հաշվետվութիւն ներկայացնել մեր հասարակութեանը իմ գործողութիւնների մասին» («Յերկերի լիակատար ժողովածու», հատ. IV, էջ 137—138):

Նալբանդյանի հակառակորդների լրտեսագրերի հիման վրա ներքին գործերի մինիստրութիւնը և Եկատերինսկայի նահանգային վարչութիւնն առանձնահատուկ ուշադրութեամբ սկսում են զբաղվել հնդկահայերի ժառանգութեան հարցով: Հատկապէս նրանց զբաղեցնում է այդ գործում Նալբանդյանի կատարած դերը, ընդ որում, ինչպէս երևում է այստեղ հրատարակվող փաստաթղթերից, Նալբանդյանի արած յուրաքանչյուր քայլը անվում է կասկածանքի տակ և այդ առթիվ բացատրութիւն է պահանջվում: Հատկապէս ուշադրով են №№ 92—93, 96, 98—100 և 103 վավերագրերը: Յարական օրդաններն, անշուշտ, ճիգ ու շանք էին գործ դնում հնդկահայ կտակների կապակցութեամբ Նալբանդյանի յուրաքանչյուր քայլում տեսնելու ինչ-որ կապ նրա քաղաքական գործունեութեան հետ: Այսպէս, օրինակ, ներքին գործերի մինիստրութեան կից և Նովոռոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետի տրամադրութեան տակ գտնվող հատուկ հանձնարարութիւնների պաշտոնյա Մ. Կ. Կատակալին, 1866 թ. մարտի 6-ին Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին ուղղած գրութեամբ բա-

ցատրութիւնն է պահանջում, թե ինչո՞ւ Նալբանդյանը մենակ է ուղարկվել, և ոչ երկրորդ պատվիրակ Հարութիւն Աճեմյանի հետ (տես վավերագիր № 93), կամ թե՛ ինչո՞ւ Հայրապետյանը չէր ստիպել սպասելու Նալբանդյանին, մինչև Հ. Աճեմյանի գալը, որպեսզի միասին մեկնեն Կալկաթա (վավերագիր № 100):

Ն. թ. մարտի 12-ի գրութեամբ նույն Կատակազին բացատրութիւնն է պահանջում, թե Նալբանդյանն ինչո՞ւ, փոխանակ կանխիկ դրամի, բերել է Խտական արժեթղթեր, և թե ինչո՞ւ նրա «հակաօրինական» այդ արարքի մասին չեն տեղեկացրել նահանգական վարչութեանը՝ «նրա (Նալբանդյանի) հետ օրենքի համաձայն վարվելու համար» (տես վավերագիր № 98): Ուշագրավ է այն հանգամանքը, որ «հատուկ հանձնարարութիւնների պաշտոնյա» Կատակազին պահանջում էր, որ Հայրապետյանն իր բացատրութիւնները տար «անհապաղ» և շարադրեր դրանք հենց իր ուղարկած գրութեան վրա:

Անհրաժեշտ է նշել Կ. Հայրապետյանի համարձակ պատասխանները, որոնցով նա որոշակի կերպով աշխատում էր հիմնավորել և արդարացնել Նալբանդյանի վարքագիծը հնդկահայ կտակների գործում, այսպես, օրինակ, նա բացատրում է, որ Նալբանդյանը մենակ է մեկնել Կալկաթա, որովհետև Հ. Աճեմյանը ուշանում էր և իզուր սպասել էր տալիս, և որ ինքը, Հայրապետյանը, տեսնելով այդ, անհրաժեշտ է համարել կարգադրել, որ Նալբանդյանը մենակ մեկնի (տես վավերագիր № 96). մի այլ գրութեան մեջ Հայրապետյանը նշում է, որ այնպիսի ծանր գործի համար, ինչպիսին հնդկահայ կտակների գործն էր, անհրաժեշտ էր «վճռական, կրթված և գործունյա մարդ, և եթե Նալբանդյանն իր վրա չլիքցներ այդ պարտավորութիւնը, ապա հնդկահայ ժառանգութիւնը կմատնվեր մոռացութեան, և ի վերջո իսպառ կկորչեր» (տես վավերագիր № 99): Կ. Հայրապետյանի այս նույն բացատրականում կարևոր է նրա այն վկայութիւնը, որ Նոր-Նախիջևանի հասարակական ժողովի 1860 թ. հուլիսի 15-ի որոշման մեջ, Նալբանդյանի պահանջով, արված է եղել վերապահում այն մասին, թե պատվիրակներից որեւէ մեկի բացակայութեան դեպքում, լիազորութիւնն ամբողջովին անցնում է նրան, ում մոտ որ կլինի լիազորագրերը: Հայրապետյանն ընդգծում է, որ այդ հավելումը Նալբանդյանն համարում էր անհրաժեշտ և առանց դրա, նա վճռականապես հրաժարվում էր մեկնել Կալկաթա:

Վավերագիր 105.— Այս վավերագիրը հիմք է տալիս ենթադրելու, որ Նոր-Նախիջևանի հասարակական ժողովը հնդկահայ ժառանգութեան միջոցներով զբաղւոց (գիմնադրի) հիմնելու որոշումը կայացրել է Նալբանդյանի համախոհների ազդեցութեամբ: Գեոև 1859 թ. «Ազգային ժառանգութիւնը» հողվածում արժարժեղով հնդկահայ ժառանգութիւնը ձեռք բերելու հարցը, Նալբանդյանը նշում էր, որ այդ գումարներով, առաջին հերթին պետք է հիմնել «մի այնպիսի բարեկարգ դպրոց, որ առաջինը լիներ, և տասն տարու մեջ ամենայն հայ մարդ պարծանքով և դժայկանքով դարձուցաներ յուր աչքը այդ դպրոցի վերան»:

Մի այդպիսի ազգային աշխարհական բարեկարգ դպրոց, նախ և առաջ կլիներ մի լուսավորութեան առողջ ծննդարան մեր ազգին, երկրորդ, Նախիջևանին փառք ու պարծանք, իսկ բարեգործ, ազգասեր, հանդուցյալ կտակավանդներին անմահ հիշատակի արձան» («Երկերի լիակատար ժողովածու», հատոր II, 1947, էջ 277): Գեոևի Հնդկաստան կատարած ճանապարհորդութեան ընթացքում և Կալկաթայում բազմաթիվ խոչընդոտների դեմ մղած պայքարում Նալբանդյանին:

բաշաւերն է Նոր-Նախիջևանում հիմնվելիք դպրոցի հետակարք. 1861 թ. հունիսի 26-ին (նոր տոմարով հուլիսի 8-ին) Անանիա Սուլթանշահին ուղղած նամակում Նալբանդյանը գրում էր. «Առայժմ այտեղի (Կալկաթայի) ծայրագուն դատարանի մեջ (Սուլթան Կորտ) երեք դատ ունիմ: Քո մարզարեութիւնը միշտ կատարվում է, թե ես պրոցեսից ազատվելու չեմ, բայց վերջը հաջող է, և Նախիջևանի մեջ մի հոյակապ դպրոց տեսնելու հույսը քաշաւերում է ինձ և զոքացնում է իմ ֆիզիկական թուլութիւնը՝ պատճառված դժոխային շերժութենից...» («Երկերի լիակատար ժողովածու», հատոր IV, 1949, էջ 109):

Այս վավերագրի մեջ ուշագրավ է նաև, որ հասարակական ժողովը որոշել է Նոր-Նախիջևանում հիմնվելիք դպրոցի (գիմնադրի) ծրագիրը կազմելն հանձնարարել այդ ժամանակ (1866 թ. ամառ) Նոր-Նախիջևանում գտնվող Ստեփանոս Նազարյանին (տես Նոր-Նախիջևանի քաղաքագլխի պաշտոնակատարի գրութիւնը Ստ. Նազարյանին. պահպանվել է գրութեան սեպար օրինակը. Հայկական ՄՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 139, գ. 1716, թ. 7—9)

Վավերագրեր 106—107.— Եկատերինոսլավի նահանգական վարչութիւնը, բոտ երևույթին, լրավարարվելով «հատուկ հանձնարարութիւնների պաշտոնյա» Կատակազիի ընտրության արդյունքներով, 1867 թ. մայիսին, երբ դեռ շարունակվում էր Նալբանդյանի հանդիսավոր թաղման գործի հետաքննութիւնը, կազմում է մի նոր հանձնաժողով՝ Նալբանդյանի շանքերով բերված հնդկահայ ժառանգութեան գումարներն ստուգելու նպատակով: Ինչպես տպագրվող վավերագրերը ցույց են տալիս, հանձնաժողովը առանձնապես շանք է գործադրել «պարզելու» Նալբանդյանի մենակ ուղևորվելու պատճառները:

V. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՔՍՈՐԸ

Վավերագիր 108.— Վավերագիրն ուշագրավ է այն տեսակետից, որ վկայում է, թե ցարական կառավարութիւնն արդեն ծրագրած լինելով ձերբակալել Չերնիշևսկուն, ամեն միջոց գործ էր դնում՝ կանխելու նրա «փախուստը»: Ներքին գործերի մինիստրը հարկ էր համարում՝ Չերնիշևսկուն արտասահմանյան անձնագիր չտալու մասին ղգուշացնել նույնիսկ Երևանի նահանգի ոստիկանական հաստատութիւններին:

Վավերագրեր 109—110, 138.— Այս վավերագրերից № 109-ը և 110-ը ցույց են տալիս, որ ցարական կառավարութիւնը դեռևս 1862 թ. ապրիլին, Նալբանդյանի ձերբակալութիւնից ալելի քան երկու ամիս առաջ, նախազգուշական միջոցներ է ձեռնարկած եղել Գերցենի անլեզալ հրատարակութիւնների տարածումը Անդրկովկասում և Հայաստանում կանխելու համար: Երրորդ վավերագիրը (№ 138), որ գրված է նույն թվականի նոյեմբերի 19-ին, հանդիսանում է ուղղակի արձագանքը քննիչ հանձնաժողովի նախագահ իշխ. Ա. Յ. Գոլցիցինի՝ Կովկասի փոխաքային ուղղով 1862 թ. օգոստոսի 14-ի այն գրութեան, որի մեջ նա հիմք ընդունելով Նալբանդյանի մոտ գտնված թղթերը, հայտնում էր ցարի հրամանը՝ լոնդոնի ռուս պրոպագանդիստների (Գերցենի և ընկերների) հրատարակութիւնները Կովկասում տարածելու դեմ նախազգուշական միջոցներ ձեռք առնելու մասին (տես վավերագիր № 131):

Վավերագիր 111.— Ի. Ս. Տուրգենևը 300 ա. փոխարինարար վերցրել էր Նալբանդյանից՝ Բուկունինի կնոջը հանձնելու համար: Տուրգենևի ստացականի հայերեն թարգմանությունը տպագրվել է Նալբանդյանի «Յրկերի լիակատար ժողովածուի» III հատորում, էջ 438:

Վավերագրեր 112, 120.— «Երկրագործության» 10 օրինակը, ինչպես և Բալկունինի նամակները հասցեագրված էին Ղ. Խաֆաֆյանին, ուստի և ոստիկանական օրգանները նախ և առաջ նրան են ձեռքակալում և ենթարկում հարցաքննություն: Խաֆաֆյանի վերաբերյալ կասկածելի ոչինչ չգտնելով, հարցաքննությունից հետո, նրան ազատում են, ստորագրություն վերցնելով, որ առանց հատուկ թույլտվության նա Պետերբուրգից չի մեկնի և Նալբանդյանին չի հայտնի, որ իրեն հարցաքննել են (տես վավերագիր 160):

Վավերագրեր 113, 115 և 117.— Հիշատակված բրոշյուրը Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ոնդիղ ճախապարհ» աշխատությունն է: Քննիչ հանձնաժողովը Արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտի թարգման Ասկարխանովի միջոցով ծանոթանում է «Երկրագործության» բովանդակությանը, սակայն, մինչև վերջն էլ անհայտ է մնում, որ այդ երկի հեղինակ Միմեն Մանիկյանը ինքը Միքայել Նալբանդյանն է: Ասկարխանովի զեկուցագիրը «Երկրագործության» բովանդակության մասին, այդ երկից կատարված ընդարձակ մեջբերումներով, տես վավերագիր №№ 126—127: Այս վավերագիրը առաջին անգամ տպագրվել է Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» IV հատորում, էջ 352—357:

Վավերագրեր 116, 118—119, 121—125 և 129.— Այս վավերագրերը վերաբերում են Նալբանդյանի ձեռքակալությունը և բանտարկությունը: №№ 119 և 124 տպագրվել են Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» IV հատորում, էջ 317—318:

Վավերագրեր 132—133.— Նալբանդյանի թղթերից, Բալկունինի նամակներից բացի, քննիչ հանձնաժողովի ուշադրությունն էին գրավել հատկապես Կ. Հայրապետյանի 1861 թ. դեկտեմբերի 12-ի և Ս. Քազվորյանի 1862 թ. մայիսի 14-ի նամակները: Վավերագրերում հիշատակված «հայերեն թղթերը», որ հանձնված էին Ասկարխանովին թարգմանության, հենց վերոհիշյալ նամակներն էին (Կ. Հայրապետյանի և Ս. Քազվորյանի նամակները տես «Անտիպ երկեր», խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի, 1935 թ., էջ 377—378 և 445—446): Այստեղ հիշատակված պարսկերեն (փաստորեն՝ արաբերեն) գրությունը Կալիթայից Նալբանդյանի բերած օնդեղջյուրի փոխադրության հաշիվն է, կազմված Ալեքսանդրիայի նավահանգստում:

Վավերագրեր 130—131, 134—137.— «Բարձրագույնն հաստատված քննիչ հանձնաժողովը» ծանոթանալով Նալբանդյանի թղթերին, եզրակացնում է, որ Լոնդոնի պրոպագանդիստները (Գերցներ և ընկերները) նպատակ են ունեցել Նալբանդյանի միջոցով իրենց հրատարակությունները տարածել Կովկասում: Ալեքսանդր II-ը հանձնաժողովի նախագահ Ա. Ֆ. Գոլիցինի զեկույցի հիման վրա հրապարակում է այդ մասին հաղորդել Կովկասի փոխարքային՝ նախազգուշական միջոցառումներ ձեռնարկելու համար: Այս հետևությունն արված էր Բալկունինի՝ Նալբանդյանին գրած նամակների հիման վրա (տես վավերագիր № 130): Ուշագրավ է, որ քննիչ-հանձնաժողովը 1862 թ. սեպտեմբերի 17-ի օրագրության մեջ

արձանագրում է ցարի երկրորդ հրամանը՝ լրացուցիչ կերպով Կովկասի փոխարքային հայտնել Նալբանդյանի հայերեն թղթերում հայտարարված մի քանի տեղեկությունները՝ Գերցների հրատարակությունները Կովկասում տարածելու վերաբերյալ, և կարգադրել՝ ձեռք առնել իրենից կախված նախազգուշական միջոցները (տես վավերագիր № 134):

Հանձնաժողովը ցարի վերոհիշյալ հրամանի մասին տեղեկացնելով Կովկասի փոխարքային, միաժամանակ ուղարկում է Նալբանդյանի մտ գտնված հետևյալ փաստաթղթերի ուսուերեն պատճենները. 1. զադտնի բառարանը, 2. Ս. Քազվորյանի (սխալմամբ գրված է՝ Սվաճյան) 1862 թ. մայիսի 14-ի նամակը Նալբանդյանին, և 3. Կ. Հայրապետյանի 1861 թ. դեկտեմբերի 12-ի նամակը Նալբանդյանին: Հանձնաժողովը վերջում «ավելորդ չի համարում» ավելացնել, որ Նալբանդյանը նամակագրություն է ունեցել Միսոսարյանի հետ (տես վավերագիր № 135):

Կովկասի փոխարքայի պաշտոնակատար Գ. Օրբելիանին 1862 թ. հոկտեմբերի 5-ին հայտնում է Ա. Ֆ. Գոլիցինին, որ հանձնաժողովի գրության համաձայն հսկողությունն ուժեղացված է Կովկասի սահմանագծի վրա՝ արդիված գրականության մուտքը խափանելու համար (տես վավերագիր № 136): Այս վավերագրերը, ինչպես նաև №№ 108—110-ը և 138-ը ցույց են տալիս, որ ցարական կառավարությունը օնդեղջյուրի շարժման դեմ պայքարելիս ուշադրության կենտրոնում է ունեցել նաև Կովկասը:

Վավերագրեր 139—140, 142 և 159.— Նալբանդյանի նկատմամբ հատկապես չեղմ վերաբերմունք է ցուցաբերել նրա եղբայրներից Ղազարոսը: Հայտնի է, որ Նալբանդյանի բանտարկության ժամանակ Ղազարոսը տեղափոխվել է Պետերբուրգ և մտո երեք տարի մնալով այնտեղ, մշտական հոգատարություն է ցուցաբերել իր մեծանուն եղբոր նկատմամբ: Արտաքին աշխարհի հետ Նալբանդյանը կապ է պահպանել Ղազարոսի միջոցով: Նամակներ է գրել և ստացել նրա անունով. նրա միջոցով է ստացել իրեն անհրաժեշտ զեղերը, զրբերը և այլն: Ղազարոսին է մահամերձ Նալբանդյանը արտօրավարում հայտնել իր վերջին ցանկությունը՝ թաղվել ծննդավայրում, և Ղազարոսն է եղել, որ իր եղբոր վերջին կամքը կատարելու համար հաշտեցրել է ձեռք բերել ներքին գործերի մինիստրի թույլտվությունը և Նալբանդյանի դիակը տարել Նոր-Նախիչևան:

Քննիչ-հանձնաժողովի նախագահ իշխ. Ա. Ֆ. Գոլիցինին Ղ. Նալբանդյանի ուղղած երկու դիմումը (վավերագրեր №№ 139 և 142) վկայում են նրա մարդկային լավագույն հատկությունների մասին: Ամենայն հավանականությամբ հիշյալ դիմումները շարադրել է ոչ թե Ղազարոսն ինքը (որովհետև նա այդքան գրագետ չէր), այլ Նալբանդյանի ընկերներից որևէ մեկը, թեևս Անանիա Սուլթանշահյանը կամ Հովհ. Բերբերյանը: Այնուամենայնիվ, այդ հանգամանքը որևէ շափով չի կարող նվազեցնել վերը նրան արված գնահատականը:

Ղազարոսի 1862 թ. նոյեմբերի 22-ի դիմումից (տես վավերագիր № 139) երևում է, որ մինչ այդ նա մի դիմում էլ է ներկայացրած եղել, ինչդրելով թույլտվություն տեսակցելու Նալբանդյանի հետ: Տեսակցության մասին Ղազարոսի դիմումները մերժվում են (տես վավերագիր № 140):

Ղազարոսը երրորդ անգամ դիմում է նույն թվականի դեկտեմբերի 3-ին (վավերագիր № 142): Այս անգամ նա իր դիմումը հիմնավորում է նրանով, որ

կործանող պետք է անհրաժեշտ բացատրություններ ստանա հնդկահայ կուսակների գործի վերաբերյալ: Հանձնաժողովը, հարգելով դիմումի մեջ շարադրված պատճառարանությունը, Ղազարոսին թույլատրում է տեսակցել Նալբանդյանի հետ (վավերագրեր №№ 143 և 159):

Վավերագիր 141.— Պետրոպոլիտյան բերդում դոյուբլուն ունեցող կարգի համաձայն, բերդի պարենոք յուրաքանչյուր ամսի սկզբին գրավոր զեկուցել է ցարին Ալեքսեևյան ռավիլինում գտնվող բանտարկյանների մասին, նշելով թե՛ հրքմանից են բանտարկված, ո՛ւմ հրամանով, ինչի՛ համար և ո՛ր խցում են գտնվում: Այս վավերագիրը կազմված է 1862 թ. դեկտեմբերի 1-ին: Ինչպես հայտնի է, Նալբանդյանը բերվելով Պետերբուրգ, 1862 թ. հուլիսի 27-ին բանտարկվում է Պետրոպոլիտյան բերդի Ալեքսեևյան ռավիլինի № 8 խցում: Բերդի պարեն գեներալ-լեյտենանտ Սորոկինի համանման զեկուցագրերից պարզվում է, որ 1862 թ. օգոստոսից Նալբանդյանը տեղափոխված է եղել Ալեքսեևյան ռավիլինի № 17 խոցը:

Վավերագիր 144.— Խոսքը Կ. Հայրապետյանի 1861 թ. դեկտեմբերի 12-ի և Ս. Թագվորյանի 1862 թ. մայիսի 14-ի՝ Նալբանդյանին ուղղված նամակների մասին է (տես «Անտիպ երկեր», էջ 377—378 և 445—446):

Վավերագրեր 146, 150.— 1862 թ. մայիսի 14-ին Կոստանդնուպոլսից Նալբանդյանին հուսցնագրված նամակի հեղինակը Ս. Թագվորյանն է, բայց որովհետև նամակն ստորագրված է Ս. Թ. սկզբնատառերով, ուստի և քննիչ-հանձնաժողովին չի հաջողվել պարզել նամակի հեղինակի ինքնությունը, և նամակը, թյուրիմացաբար, վերագրվել է Հ. Սվաճյանին: Նույն սխալը կրկնվել է Մ. Լեմկերի «Очерки освободительного движения 60-х годов» և այլ աշխատություններում: Առաջինը ընկ. Ա. Հովհաննիսյանը 1935 թ. «Անտիպ երկերում» հրատարակելով նամակի բնագիրը, ցույց տվեց, որ դրա հեղինակը ո՛չ այլ ոք է, եթե ոչ Սերոբի Թագվորյանը (տես նախորդ ծանոթագրությունը):

Վավերագրեր 148—149 և 151.— Նալբանդյանի այս գրություն (վավերագիր № 201) առևերեն բնագիրը տպագրվում է առաջին անգամ, հայերեն թարգմանությունը տպագրվել է «Պայթար» շաբաթաթերթում, 1923, № 12—13, էջ 9:

Վավերագրեր 152, 158, 162—164.— Ըստ գոյության ունեցող կարգի, քննիչ-հանձնաժողովի պահանջով, 1863 թ. փետրվարի 20-ին Նոր-Նախիջևանում տեղի է ունենում «ընդհանուր խուզարկություն» (повальный обыск) Նալբանդյանի «վարքի» մասին «Ընդհանուր խուզարկությունը» կայացել է նրանում, որ դատապարտյալի ծննդավայրի հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներից որոշ թվով մարդիկ, երդմամբ, առանձին-առանձին կարծիք են հայտնել նրա (դատապարտյալի) վարքի մասին: Նալբանդյանի մասին վկայություն են տալիս հարյուր հոգի, ըստ որում, բոլորն էլ հաստատում են առաջին ստորագրողի (Գանիել Գարագաշի) վկայությունը, որ ամբողջությամբ բերվում է այստեղ (վավերագիր № 158): Մնացած 99 անուններից հարկ ենք համարում հեշտակել հետևյալները. Հակոբ Խյուճյան, Սաղաթել Փայլայան, Գասպար Սալթիկյանց, Հարություն, Հակոբ և Բաղդասար Մյանսիկյաններ, Հակոբ Հալաճյան և ուրիշներ:

Վավերագրեր 153, 160.— Ս. Գ. Սուլթանշահի դիմումի մեջ հիշված փաստքը, թե ինքը Նալբանդյանի հետ ազգակցական կապ է ունեցել ճշտվում է Պես.

կենտր. արխիվում վերջերս հայտարարված մի վավերագրով (Հայկական ՍՍԹ Պես. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 847, թ. 2): Այդտեղից պարզվում է, որ Նալբանդյանի հոր երրորդ կինը, Աննան, Սուլթանշահյանների ընտանիքից էր: Ազգակցական այս կապը շատ էլ մոտ չի եղել, անշուշտ. սակայն Նալբանդյանի և Ս. Գ. Սուլթանշահի հարաբերությունները ավելի սերտ են եղել, քան ազգակցական կապը ենթադրել է տալիս: Հայտնի է, որ Նալբանդյանը 1856 թ. մարտի 21-ի նամակում շարադրելով Նազարյանի և իր ծրագրերը «Հյուսիսափայլ» անունով «հասարակին հասկանալի մի հայկական օրագիր» հրատարակելու մասին, խնդրում է Ս. Գ. Սուլթանշահի աջակցությունը: Հայտնի է նաև, որ Ս. Գ. Սուլթանշահը բազմիցս այցելել է Նալբանդյանին Պետրոպոլիտյան բերդում:

Նալբանդյանը տեղակ է եղել Ս. Գ. Սուլթանշահի դիմումի մասին. Ս. Գ. Սուլթանշահի այդ խիղախ և ազնիվ բայն է նկատի ունեցել Նալբանդյանը, երբ, 1863 թ. փետրվարի 17-ի նամակում, Սուլթանշահի դիմումից 13 օր հետո, գրել է եղբորը. «Ողջունեցեք նորին գերագանցության Ս. Գ. Սուլթանշահին և շնորհակալություն հարգեցեք իմ նկատմամբ նրա ջերմ վերաբերմունքի համար» (Երկերի լիակատար ժող., հ. IV, էջ 151):

Սենատը կտրուկ կերպով մերժել է Ս. Գ. Սուլթանշահի դիմումը. «...Սուլթանշահին հայտարարել, որ Նալբանդյանին երաշխավորությամբ ազատելու նրա խնդիրը բավարարվել չի կարող» (տես վավերագիր № 160):

Վավերագրեր 154—155.— Ինչպես ինքը, Նալբանդյանն էլ «Բերդի հիշատակարանում» նշում է, իրեն առաջին անգամ սենատ են կանչել 1863 թ. փետրվարի 12-ին («Երկերի լիակատար ժող., հատ. IV, էջ 285»): Ըստ երևույթին, սենատի առաջ Նալբանդյանը նոր ցուցմունքների չի տվել, այլ հաստատել է քննիչ-հանձնաժողովի հարցերին նախապես տված իր պատասխանները:

Վավերագրեր 156—157 և 161.— Ինչպես Ս. Գ. Վավերագրից պարզվում է, Նալբանդյանը 1863 թ. փետրվարի 12-ին կանչվելով Սենատի նիստին, բանավոր խնդրել է իրեն երաշխավորությամբ ազատել բերդից և թույլ տալ տեսակցություն ունենալ իր ազգականների և այն անձանց հետ, որոնց հետ թույլատրված է եղել տեսակցել նախքան իր գործը սենատ հանձնելը: Նալբանդյանի առաջին խնդիրը մերժվում է, իսկ երկրորդը՝ հարգվում: Նրան թույլատրվում է տեսակցել միայն իր ազգականների հետ (տես վավերագիր № 161):

Վավերագիր 166.— Այս վավերագիրը տպագրվել է «Գրական ժառանգության» առաջին գրքում, 1940 թ., էջ 24, և ապա՝ Նալբանդյանի «Երգերի լիակատար ժողովածուի» IV հատորում, էջ 236: Առաջին հրատարակության մեջ չի բերված «Государь-император изволил читать, 14 мая» մակագրությունը:

Վավերագիր 167.— Նալբանդյանը Պետրոպոլիտյան բերդից դուրս գալուց հետո, 1865 թ. հունիսի 1-ին, դիմում է Արդարադատության մինիստրության պաշտոնյա Ն. Մ. Մեղենցովին, խնդրելով վերադարձնել խուզարկության ժամանակ իրենից վերցված ձեռագրերը, քարտեզները և լուսանկարները (տես Նալբանդյանի «Երկերի լիակատար ժող., հատ. IV, էջ 253»): Մեղենցովին էլ իր հերթին դիմել է Պետերբուրգի գեներալ-նահանգապետ Սուվորովին, այս վավերագիրը վերջինիս պատասխանն է: Պարզված չէ, թե Նալբանդյանն ի վերջո ստացել է իր ձեռագրերը, թե ոչ:

Վալերագիր 168.— Ս. Պ. Բոտկինի տված բժշկական վկայականը, ինչպես նաև Նալբանդյանի դիմումը Ներքին գործերի մինիստրին՝ իրեն Տավրիկյան նահանգը (Ղրիմ) արտորավայր նշանակելու մասին, շի հայտնաբերված, Վալուևի այս գրությունն ֆոտո-պատճենն առաջին անգամ տպագրվել է «Անտիպ երկերում», էջ 696/697, տախտակ XI:

Վալերագիր № 169.— Այս վալերագիրն առաջին անգամ տպագրվել է «Գրական ժառանգության» առաջին գրքում, 1940, էջ 26—27, և ապա Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» շրջորդ հատորի հավելվածում, էջ 328—329:

Վալերագիր 170.— Ինչպես հայտնի է, Նալբանդյանը 1866 թ. հունվարի սկզբներին դիմել էր ներքին գործերի մինիստրին, խնդրելով թույլատրել մայիսի 1-ից մեկնել Սամարայի գավառը՝ կուսիսով բուժվելու համար: Ներքին գործերի մինիստրը, ինչպես նաև նրորդ բաժանմունքի պետը թույլատրում են, համոզված լինելով, որ Նալբանդյանը մինչև մայիս չի պարի: Այս վալերագրին առաջին անգամ տպագրվել է «Գրական ժառանգության» առաջին գրքում, 1940, էջ 28:

Վալերագրեր 171—178.— Այս համարների տակ բերված են Պ. Վետոշնիկովի, Ն. Վորոնովի, Մարկիզ դե-Տրավերսեի, Ն. Ալբերտինիի և Ա. Նիշիպորենկոյի ցուցմունքների այն հատվածները, որ վերաբերում են Նալբանդյանին: Բ. Ս. Տուրգենևի ցուցմունքների հայերեն թարգմանությունը տպագրված է Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» երրորդ հատորում, էջ 455—438:

Վալերագրեր 179—182.— Այս վալերագրերը հանված են «Լեոգոնի պրոպագանդիստների հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրվողների» մասին կառավարող սենատում կազմված գործից:

VI. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄՍՀԸ ԵՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԹԱՂՈՒՄԸ

Վալերագիր 183.— Նալբանդյանի մահից հետո մնացած նրա ձեռագրերի հարցը դեռևս պարզված չէ: Հաջողվել է, արդյոք, Նալբանդյանին նա ստանալ խուզարկության ժամանակ իրենից վերցված ձեռագրերը, որոնց մասին գրել էր նա 1865 թ. հունիսի 1-ի իր դիմումի մեջ (տես «Երկերի լիակատար ժողովածու», հատ. IV, էջ 253), և եթե հաջողվել է ստանալ, ապա ի՞նչ է եղել դրանց հետագա ճակատագիրը՝ հայտնի չէ: Հարույթուն հալիբյանը ժանդարմական վարչությանը ներկայացրած իր զեկուցագրում («Անտիպ երկեր», էջ 707—708) հայտնում է, թե երբ Կամիշլինում Նալբանդյանի եղբայրներից Գրիգորը Ղազարոսին հարցնում է Նալբանդյանի ձեռագրերի մասին, Ղազարոսը պատասխանում է, որ ինքն «այրել է բոլոր անկարևոր (հալիբյանը նկատում է՝ պետք է եթեպոքեկ նաև կարևոր) թղթերը»: Թե որչափով այս տեղեկությունը համապատասխանում է իրականությանը՝ դժվար է ասել: Չնայած իր մեծանուն եղբոր նկատմամբ տաժած շեղմը զգացմունքներին, Ղազարոսը, կիսազրագետ մի մարդ լինելով, միանգամայն հավանական է, որ, ահարեկված ցարական ոստիկանության և հալիբյանի հետապնդումներից, այլոք չլինեք Նալբանդյանի «վտանգավոր» ձեռագրերը: Այս ենթադրությունը, սակայն, հակասում է սույն «Ակտի» տվյալներին: «Ակտում» ասված է, որ հանձնաժողովը քննել է Նալբանդյանի պալատակի (սակիտյաթ) և

ճամպրուկի թղթերը. դժբախտաբար, «Ակտը» շատ ընդհանուր բնույթ է կրում և «թղթերի» մասին ոչ մի այլ տեղեկություն չի պարունակում, թե ի՞նչ ծավալի և ի՞նչ բովանդակության են եղել Նալբանդյանի թողած ձեռագրերը:

Վալերագրեր 184—186.— Այս համակները գրված են Կամիշլինի ոստիկանապետի կողմից և հասցեագրված են Նալբանդյանի եղբայր՝ Գրիգոր Նալբանդյանին: Առաջին անգամ հրատարակվող այս վալերագրերը մի շարք կարևոր մասնամասնություններ են պարունակում Նալբանդյանի դիակը Կամիշլինից Նոր-Նախիջևան փոխադրելու վերաբերյալ: Պարզվում է, որ Նալբանդյանի դիակը Կամիշլինից Ցարիցին են փոխադրել Վոլգայով, վեց թիավար ունեցող նավակով, և ապա Գոնի վրայով, շոգենավով՝ Նոր-Նախիջևան:

Կամիշլինի ոստիկանապետի 1866 թ. մայիսի 3-ի նամակը (տես վալերագիր № 184) պարունակում է մի վկայություն ևս այն մասին, որ Նալբանդյանը, զգալով իր մտտայուտ մահը, ցանկություն է հայտնած եղել թաղվելու հայրենի քաղաքում՝ Նոր-Նախիջևանում:

Դժվար է որոշակի ասել, թե ի՞նչ լուսանկարների կամ նկարների մասին է խոսքը (տես վալերագիր № 185—186). ամենայն հավանականությամբ, դրանք որևէ չափով առնչություն են ունեցել Նալբանդյանի հետ, թերևս, հենց նրա լուսանկարներն են եղել, որ, ինչ-ինչ պատճառներով, մնացել են Կամիշլինի ոստիկանապետի մոտ:

2. հալիբյանի՝ Եկատերինսույվի ժանդարմական վարչությանը ներկայացրած զեկուցագրից երևում է («Անտիպ երկեր», էջ 707—708), որ Ղազարոս Նալբանդյանը Կամիշլինում հիվանդացած է եղել, և թերևս, այդ պատճառով էլ, Նալբանդյանի դիակը Նոր-Նախիջևան փոխադրելու հարցով զբաղվել է Գրիգորը:

Վալերագրեր 187—209.— Ինչպես հայտնի է, Նալբանդյանի դիակը Վոլգայի և Գոնի վրայով Նոր-Նախիջևան է բերվում 1866 թ. ապրիլի 13-ին և հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին մեծ հանդիսավորությամբ, քաղաքի համարյա ամբողջ բնակչության ուղեկցությամբ թաղվում է Նոր-Նախիջևանից յոթ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սուրբ Խաչ վանքի քակում:

Նալբանդյանի հանդիսավոր թաղումը չի վրիպում հայ ուսուցիչների և ցարական կառավարության աչքից: Նալբանդյանի և ժողովրդի մոլի թշնամին՝ հալիբյանը գրավոր և բանավոր տեղեկություններ է հաղորդում Եկատերինսույվի ժանդարմական վարչությանը, հատկապես ընդգծելով, որ Նալբանդյանի աճուխին ցույց տրված պատիվն ու հարգանքը ոչ այլ ինչ է, և թե ոչ կառավարության դեմ ուղղված բողոքի ցույց («Անտիպ երկեր», էջ 707—708, և այս ժողովածուի № 187 վալերագիրը): Այդ մասին ցարական ոստիկանական օրգաններին շտապում է իր ծառայությունը մատուցել նաև քահանա Սոփա Շարշնիկյանը, որ տիրացուական շրջանից արդեն դարձել էր հալիբյանի գործակալը:

Ցարական կառավարությունն սկսում է լրջորեն զբաղվել Նալբանդյանի հանդիսավոր թաղման գործով:

Եկատերինսույվի ժանդարմական վարչության պետը, հալիբյանի ցուցմունքների հիման վրա, 1866 թ. հունիսի 15-ին պաշտոնական գրությամբ դիմում է ժանդարմների շեֆին, ուր նկարագրելով Նալբանդյանի հանդիսավոր թաղումը և վկայակոչելով հալիբյանի կարծիքը, թե դա կառավարության դեմ ուղղված բողոքի ցույց էր, իր շեֆի ուշադրությունն է հրավիրում Նոր-Նախիջևանի քաղա-

քային ինքնավարության վրա, վերջինս որակելով որպես «մի առանձին պետություն պետության մեջ» (տես վավերագիր № 187):

Ինչպես պարզվում է № 190 վավերագրից, ցարական կառավարությունը խիստ եռանդուն կերպով հետապնդում էր իրեն վաղուց մտահոգություն պատճառող Նոր-Նախիջևանի քաղաքային «ինքնավարությունը» վերացնելու նպատակը: Նախքան դրանի հանդիսավոր թաղման գործն արագացնում է ցարական կառավարության այդ ծրագրի իրականացումը: Արդեն 1866 թ. հոկտեմբերին «բարձրագույն հրամանով» նախիջևանի օստիկանությունը դառնում է ենթակա Ռուստովի օստիկանությանը (տես վավերագիր № 206):

Նախքան դրանի հանդիսավոր թաղման գործը քննելու և հանցավորների պատժելու համար Եկատերինոսլավի նահանգական վարչությունը նշանակում է հանձնաժողովը Ուշագրավ է, որ վերջինս կոչվում էր «Ստտիկանության հսկողության տակ եղած Միքայիլ Նալբանդյանի թաղման հանգամանքները և կառավարության կարգադրությունների դեմ հայ հասարակությունը գրգռելու» գործը քննող հանձնաժողով (տես վավերագիր № 195): Հանձնաժողովը գործում է մոտ մեկ տարի: Նրան հատկացված է լինում առանձին բնակարան: Հարցաքննության են ենթարկվում տասնյակ մարդիկ: Կարապետ Հայրապետյանը ենթարկվում է տնային բանտարկության: Մագիստրատի նախագահ Գարագաշը, քաղաքապետի պաշտոնակատար Փայալյանը, ատենակալ Բախիսարայցիք և իրավաբան Խրիստիանյանը, մինչև Նալբանդյանի հանդիսավոր թաղման գործի ավարտվելը, հեռացվում են իրենց գրաված պաշտոններից:

Նալբանդյանի հանդիսավոր թաղման շուրջը գոյություն ունեցող վավերագրերի ուսումնասիրությունից պարզվում է հետևյալ ուշագրավ հանգամանքը. քննիչ-հանձնաժողովը Նալբանդյանի հանդիսավոր թաղումը դիտելով որպես ցարական կառավարության դեմ ուղղված բողոքի ցույց, սկզբում գործին տալիս է խիստ լուրջ ընթացք. սակայն, Եկատերինոսլավի նահանգական վարչությունը մեկ տարվա քննության արդյունքներից տեսնելով, որ գործի այդպիսի ընթացքը Նոր-Նախիջևանի հասարակությանը գրգռում է կառավարության դեմ, ստիպված է լինում կարճել այն: Եկատերինոսլավի նահանգային վարչությունը 1867 թ. օգոստոսի 1-ի հրամանով նշում է, որ «Նախիջևանի քաղաքային հասարակությունը ոչ մի մասնակցություն չի ունեցել հանցուցյալ Նալբանդյանի դիակի հանդիսավոր դիմավորման և թաղման գործում, ինչպես և այդ թաղումը հասարակության կամ պաշտոնատար անձանց կողմից կառավարության հանդեպ որևէ դատապարտելի կամ քաղաքական նպատակ չի ունեցել» (տես վավերագիր № 206):

Նալբանդյանի հանդիսավոր թաղման գործի վերաբերյալ գոյություն ունեցող վավերագրերի մի մասը առաջընթաց է «Գրական ժառանգության» առաջին գրքում, էջ 29—47, որոնցից այստեղ բերված են միայն №№ 187—188 և 206-ը. վերջին վավերագրերն ամբողջությամբ ներկայացնելու համար բերել ենք նաև այն ստորագրությունները, որ այդ վավերագրի տակ գրել են Կ. Հայրապետյանը, Հովհ. Բերբերյանը, Դանիել Գարագաշը, Հ. Խրիստիանյանը և Սաղաթել Փայալյանը՝ նահանգական վարչության հրամանագրին իրենց հայտարարված լինելու մասին:

VII. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԵՎ ՑԱՐԱԿԱՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Նալբանդյանի մահից հետո, մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, հայ մեծ ռևոլյուցիոներ-գեմեոկրատի երկերը խառնվ հետապնդվել են ցարական գրաքննության կողմից, արգելված է եղել նրա մասին գրելը: Եվ էթն որևէ մեկին հաջողվել է, այս կամ այն ձևով, հրատարակել Նալբանդյանի երկերը կամ նրա մասին մի գիրք, գրքերն արգելվել են, իսկ հրատարակիչները և խմբագիրները ենթարկվել հալածանքների:

1868 թ. Պետերբուրգում լույս տեսավ Նալբանդյանի՝ Ղազարոս Փարպեցու «Թղթի» թարգմանությունը, որին կցված էր նաև Նալբանդյանի համառոտ կենսագրությունը: Գրքի հրատարակիչն էր Նալբանդյանի բարեկամներից և համախոհներից մեկը՝ Միքայիլ Տեր-Գրիգորյանը: Ցարական գրաքննության դատարանի մասին նա հետևյալն է գրում 1868 թ. նոյեմբերի 26-ին Գրիգոր Նալբանդյանին ուղղած նամակում. «Ինչպես Ձեզ հայտնի է, ես գրել էի հանցուցյալի (Նալբանդյանի) լիակատար կենցաղավարությունը, բայց գծրախաբար հրաման չստիպեցի ամբողջապես տպագրելու... Գրեթե միանգամայն զղջղված տպագրեցի...» (Տես Գրականության և արվեստի թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 123/128):

Ղազար Փարպեցու «Թղթը» Նալբանդյանի թարգմանությամբ և ծանոթագրություններով լույս է տեսնում, սակայն այն չի վրիպում երրորդ բաժանմունքի գործակալների ուշադրությունից: Ամենայն հավանականությամբ, հայ ղեկավարներից՝ Ալվազովսկին, Խալիբյանը կամ սրանց խմբակցությունից որևէ մեկը, Եկատերինոսլավի նահանգական վարչությանը տեղեկացնում է գրքի մասին, որից հետո նույն նահանգի ժանդարմական վարչության պետի օգնական կապիտան Բելյոցերկովսկին, որ զբաղեցրել էր Նալբանդյանի կենսագրության 21-ին Ղազար Փարպեցու «Թղթի» և նրան կից Նալբանդյանի կենսագրության մասին գաղտնի ղեկուցագրի է ուղղում երրորդ բաժանմունքին (տես «Անտիպերկեր», էջ 708—710):

Վավերագրեր 210—211.— Հիշյալ գրքուկի լրիվ անվանաթերթն է՝ «Հայրենասերի տղերքը, բնորոտ ոտանավորներ Միքայիլ Նալբանդյանի (հեղինակի պատկերով), հրատարակություն Եվրոպայի հայ ուսանողական Միության, Ժընև, 1903 թ.»։ Գրքուկը բովանդակում է բնդամենը շորս էջից կազմված Նալբանդյանի համառոտ կենսագրական-ընթացագրական և նրա հետևյալ բանաստեղծությունները՝ «Մանկության օրեր», «Մամիկոնյան մեծ վահանի պատասխանը», «Հիշելը», «Շրագ», «Անօրյա աշխարհ», «Հայ մարդու հայրենիքը», «Ազատություն» և «Բուռայցի աղջկա երգը»: Պետք է նկատել, որ վերջին բանաստեղծության տեքստն աղճատված է և վերնագիրն էլ դարձրած՝ «Հայկական հիմներ»։ Գրքուկի վերջում և նաև «Մամիկոնյան մեծ վահանի պատասխանը» բանաստեղծության վերնագիրը՝ «Վահան Մամիկոնյանի երգը»։

Վավերագիր 212.— Ա-Գոի գրքուկի լրիվ անվանաթերթն այսպես է. «Ա.-Գո, Միքայիլ Նալբանդյանի կյանքի հետաքրքիր մի էջը և Բակունինի նրան դրած նամակները», Երևան, տպարան «Լույս», Արշակ Հակոբյանցի և որդիք, 1908 թ.»։ Ա-Գոն իր գրքուկը գրել էր Միխ. Լեմկեի՝ «Билосе» ամսագրի 1906 թ. №№ 9—12-ում հրատարակված վավերագրերի հիման վրա: Ա-Գոի

գրքույին առաջինն էր, որ հայ ընթերցող հասարակությանը ծանոթացնում էր Նալբանդյանի՝ Գերցենի, Օգարևի և Բակունինի հետ ունեցած կապերին: Պետք է նշել, սակայն, որ Ա․Պոի աշխատությունը կրում է մակերեսային բնույթ և, որ կարևորն է, պարունակում է մի շարք սխալ մեկնաբանություններ, նախ՝ չափազանց քած և ընդգծված է Նալբանդյանի կապը Բակունինի հետ, և ապա Ա․Պոն Նալբանդյանի մոտ գտնված «գաղտնի բառարանի» մի-երկու արտահայտությունից այն արմատապես սխալ և արատավոր եզրակացությունն է հանգում, թե իբր, «Նալբանդյանի և նրա համախոհ հայերի հույսը գրված էր ոչ միայն եվրոպական ազատագրական շարժման ղեկավարների, այն է Գարիբուդու, Մաձձինիի, Չարտորիժուու, Գերցենի, Բակունինի, այլև եվրոպական պետությունների, մասնավորապես Անգլիայի վրա, հավատացած լինելով, որ կարիք եղած գեղջում կարելի կլիներ Գիլիկիա իջեցնել անգլիական զորքեր» (?): Իր ամբողջ գործունեության ընթացքում, և հատկապես «Երկրագործության» մեջ այնպես սուր և դիպուկ կերպով եվրոպական բուրժուական պետությունների և մասնավորապես Անգլիայի գաղութային քաղաքականությունը խարազանող Միքայել Նալբանդյանին նման բան վերագրելն առնվազն զրպարտություն է հայ մեծ պետությունների դեմոկրատի հասցեին:

Վավերագրեր 213—221.— Այս վավերագրերը վերաբերում են Նալբանդյանի «Երկերի» ուստության հրատարակությանը: Ինչպես հայտնի է, Նալբանդյանի հիշյալ «Երկերի» առաջին հատորը լույս է տեսել 1903 թ., իսկ երկրորդը՝ 1906 թ.: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ հատորը գրաքննությունը տպագրության էր ստորագրել 1903 թ. նոյեմբերի 5-ին: Ներքին գործերի մինիստրության ուստիկանական դեպարտամենտը 6—9 տարի հետո միայն տեղեկանալով այդ հրատարակության մասին, դիմում է մամուլի գործերի գլխավոր վարչության պետին, պարզելու, թե ո՞վ և ինչու է թույլատրել Նալբանդյանի երկերի տպագրությունը: Այնուհետև սկսվում է գրագրություն մամուլի գլխավոր վարչության և մամուլի՝ Ռոստովի վերատեսչի միջև: Վերջինս էլ իր հերթին դիմելով Ռոստովի «Գոնսկայա սեչ» տպարանին, պահանջում է Նալբանդյանի «Երկերի» ձեռագիրը: Տպարանատերն իր պատասխանում գրում է, թե ձեռագիրը չի գտնվել, հավանորեն, այն այրվել է 1908 թ. տպարանում առաջացած հրդեհի ժամանակ: Ուշագրավ են ցարական շինովնիկների մեկնաբանությունները Նալբանդյանի «Նկատողությունը», «Երկու տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկերի կապակցությամբ: Մասնանշելով Նալբանդյանի հիշյալ երկերի պետություն բովանդակությունները, նրանք, փաստորեն, խոստովանում էին, որ 60-ական թվականների հայ մեծ պետությունների-դեմոկրատի այդ հիմնական երկերը պահպանել են իրենց թարմությունը և քաղաքական սրությունը՝ գրանց գրություն ժամանակվանից ավելի քան կես դար հետո ևս: Այս վավերագրերը կարևոր նշանակություն ունեն Նալբանդյանի ստեղծագործության հասարակական-քաղաքական բովանդակությունը բացահայտելու տեսակետից:

Վավերագրեր 222—224.— Թ. Ավդալբեգյանի հիշյալ գրքույից այդպես էլ լույս չտեսավ, սակայն հեղինակը իր աշխատության գլուխները, որոշ լրացումներով, որպես առանձին հոդվածներ, տպագրեց մամուլում՝ նույն Պողիկյան ժածկանոցով («Մերկանտիլիզմը հայց մեջ» — «Հորիզոն», 1913, №№ 268—269 և

«Հանգույցի լուծումը — Միքայել Նալբանդյանի աշխարհայացքի ընտրուման խնդրի շուրջը» նույն թերթում, 1914, №№ 6, 10, 15 և 21),

Ամբողջ աշխատությունը առանձին գրքով լույս տեսավ 1928 թվականին Նալբանդյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ՝ Թաղեոս Ավդալբեգյան, Միքայել Նալբանդյան, պատմագրական վերլուծություն, երկրորդ տպագրություն, Երևան, 1928:

VIII. Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

Այստեղ տպագրված վավերագրերը թեև չեն համապատասխանում ժողովածուի բաժիններից որևէ մեկին, սակայն կարևոր նշանակություն ունեն Նալբանդյանի ապրած ժամանակաշրջանն ու հասարակական հոսանքներն ուսումնասիրելու տեսակետից:

